

8751

ԳՐԱԴԱՐԱՆԸ ՅՈՒՅ ՀԵԿԻՔԱԳԻ, ՄԻԱՅԻ

79

ԿՈՒՍԱԿՑԱՆ
ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՑԵՎ
ԱԳԻՏԱՑԻԱՑԻ ՄԱՍԻՆ

ՀԿՊ 4
4-97

ԽՈՎՈՒՅՑ 1936

ՅԱՊԿ

4- 97

24 SEP 2006

Պրակտարանի բալոր յերկիրների, միացե՛ք

09 DEC 2009

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՑԵՎ
ԱԳԻՏԱՑԻԱՑԻ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ ՆՅՈՒԹԵՐ



6353

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • 1936

29.05.2013

8751

**ՄՈՏԱԿԱ ԺԱՄԱՆԱԿՎԱ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ**

ՀԱ.Մ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՐՈՇՈՒՄԸ

Համեկ(բ)կ Կենտրոն անթույլատրելի յե համարում մի քանի կուսակցական կազմակերպությունների տեսդենցը՝ ամառվա ընթացքում սեղմելու պրոպագանդիստական աշխատանքը:

Կուսակցության քաղաքական-դաստիարակչական աշխատանքը չի կարող կրել «սեղոնային» բնույթ, այլ պետք ե կատարվի սիստեմատիկորեն ամբողջ տարվա ընթացքում:

Համեկ(բ)կ Կենտրոն առաջարկում ե կուսակցական կազմակերպություններին, կուսակցական դպրոցների ու խմբակների աշխատանքն ավարտելու միասնական ստանդարտ ժամկետներ չսահմանելով, թույլ չտապով շտապողականությունն և պլանի թղթային ձևական կատարում, ապահովել քաղգրագիտության, կուսակցության պատմության և լենինիզմի դպրոցների ու խմբակների ծրագրի լրիվ անցումը:

Ամեն մի խմբակի աշխատանքն ավարտելուց հետո կուսակցական կոմիտեները պետք ե կազմակերպեն այն բանի ստուգումը, թե ինչպես են յուրացրել խմբակի անդամները կուսակցության ծրագրի ու քաղաքականության հարցերը, ամենաին չվերածելով այդ ստուգումը քննությունների:

Թեկնածուական դպրոցներն ավարտողների համար ամառային շրջանում անհրաժեշտ ե կազմակերպել կուսակցության պատմության հիմնական ետապներն ուսումնասիրող խմբակներ, խըմբակների անդամներին պատրաստելով կուսակցության պատմու-



Արմարտպատ, Էրևան

թյան հետագա սիստեմատիկ ուսումնասիրության համար, այլ և խմբակներ ընթացիկ քաղաքականության և միջազգային դրության հարցերի ուսումնասիրության համար:

Կուսակցության պատմության սիստեմատիկ դասընթացն անցած կուսանդամների համար անհրաժեշտ է կազմակերպել կուսակցության պատմության այն ետապների հիմնավոր ուսումնասիրությունը, վորոնց յուրացումն անհրաժեշտ է կուսակցության անդամներին մեր կուսակցության հաղթանակի պայմաններն ու միջոցներն ըմբռնելու համար:

Հատկապես անհրաժեշտ է պարզաբանել, վոր մեզ մոտ մարդարդության անհրաժեշտ մարքսիզմի ամենավոխերիմ թշնամուն պարզունիկության (նարոգովողեցություն և այլն) դեմ մղած պայքարում և նրա գաղափարային դրույթների ու քաղաքական պայքարի միջոցների և մեթոդների (մասսայական կուսակցության քաղակերպումը բացասող անհատական տեսող) ջախջախման հիման վրա:

Անհրաժեշտ է այսպես անել, վոր կուսակցության անդամները յուրացնեն, վոր մարքսիզմ-լենինիզմն աճեց, ամրացավ ու հաղթանակեց ամենից առաջ հին նարոգնիկների դեմ մղված պայքարում և ապա մենշևիկների և եսերների դեմ մղված պայքարում:

Առանձնապես անհրաժեշտ է խորապես յուրացնել հետհոկտեմբերյան շրջանի և տրոցկիզմի, տրոցկիստ-զինովյեվական խրմանակի, աջ թեքման, «ձախ» կոմունիստների և այլ հակակուսակցական խմբակցությունների դեմ կուսակցության մղած պայքարի ցական խմբակցությունների դեմ կուսակցության մղած պայքարի ցական խմբակցությունները: Այդ ուսումնասիրությունը պետք է կարեւրագույն և ուսպաները: Այդ ուսումնասիրությունը պետք է կարեւրագույն և ուսպաները: Այդ ուսումնասիրությունը պետք է կարեւրագույն և ուսպաները: Այդ ուսումնասիրությունը պետք է կարեւրագույն և ուսպաները:

Սրա հետ միասին՝ Համեկ(թ)կ կենտկոմը հանձնարարում է ստեղծել մարքսիզմ-լենինիզմի կլասիկների առանձին յերկերն ուսումնասիրով խմբակներ:

Բոլոր գարոցների ու խմբակների պարագմունքների ընթացքում խմբակների անդամների հետ անպայման դրույցներ կատարել կուսակցության քաղաքականության և միջազգային դրության հարցերի շուրջը, պարզաբանելով խմբակների անդամներին նրանց համար մութ, կամ նրանց հետաքրքրող հարցերը:

Քաղղագիտության դպրոցներ չանցած թեկնածուների, ինչպիս և համակրողների համար անհրաժեշտ է ստեղծել խմբակներ, վորոնց մեջ, խմբակի անդամների պատրաստականության ու գրագիտության մակարդակի համեստա, պետք և դրվի կուսակցական ծրագրի, մեր կուսակցության կազմակերպման և աշխատանքի հիմունքների ծանոթացումը՝ կամ քաղղագիտության դասարկը հիման վրա կամ կազմակերպելով փորձված պրոպագանդիստների հատուկ զրույցներ այն մասին, թե ինչպես ե կառուցված, ինչպիս և աշխատում և ինչի համար և պայքարում մեր կուսակցությունը:

Համեկ(թ)կ կենտկոմն առաջարկում է յերկրային և մարդարան կոմիտեներին ու ազգային կոմիտասակցությունների կենտկոմներին, նաև շրջկոմներին կազմակերպել կոմիտեներին կից պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվ՝ կուսակցական կոմիտեների առաջադրություններով պրոպագանդիստական ու ագիտացիոն աշխատանք կատարելու համար, սիստեմատիկաբար հրահանգելով և պատրաստելով այդ ակտիվը:

Պրոպագանդիստական աշխատանքի «սեպոնայնության» վերացմանը պետք է հետեւ նաև պրոպագանդիստների պատրաստման ու վերապատրաստման սեպոնայնության վերացումն ու պրոպագանդիստների սիստեմատիկ պատրաստման կազմակերպումն ամբողջ տարվա ընթացքում:

Համեկ(թ)կ կենտկոմն զգուշացնում է կուսակցական կազմակերպություններում հաստատված այն պրակտիկայից, յերբ պրոպագանդիստների վողջ հիմնական կազրը ամառային կարծ ժամանակաշրջանում կտրվում է պրոպագանդիստական աշխատանքից և անց է կացվում հավաքեպորեն ու անփութորեն կազմակերպված, գասատուների վատ ընտրած կազմունեցող դասընթացներով, վորի հետևանքով պրոպագանդիստները պատշաճ պատրաստություն չեն ստանում:

Ամենամոտ ժամանակում կուսակցական կազմակերպությունների համառկ ուղագրությունը պետք է դարձվի կուսակցության պատմության և լենինիզմի պրոպագանդիստների պատրաստման վրա:

Այդ գասընթացների համար պետք է ընտրել ստուգված պրոպագանդիստներ և տալ նրանց լավագույն դասատուներ, նկատի

ունենալով, վոր կուսակցական դպրոցների ու խմբակների քաղաքական-դաստիարակչական աշխատանքի մակարդակն առաջին հերթին կախված ե աղողագանդիստից:

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆ

«Պրավդա», 1935 թ. հունիսի 14

ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՍՎԵՐԴԼՈՎՍԿԻ ՄԱՐԶՈՒՄ

Կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի կատարած ստուգան հիման վրա Համկ(Բ)Կ Կենտրոնը հաղորդում լսեց Սվերդլովսկի մարզի կուսակցական պրոպագանդի մասին:

Իր վորոշման մեջ Համկ(Բ)Կ Կենտրոնը հավաստեց, վոր կուսակցության Սվերդլովսկի մարզկոմը պատշաճ հետեւթյուններ չարագ Կենտրոնի «Մոտակա ժամանակաշրջանի պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշումից, չտպահովեց հարկ յեղած դեկավարությունը և Կենտրոնի դիրքեկտիվների կատարման ժամանակին ստուգումը տեղերում, իսկ կուսակցության քաղկոմներն ու շրջկոմները՝ Կաբակովի քաղկոմ—քարտուղար ընկ, Սմիրնով, Նիժնի-Տագիլի քաղկոմ—քարտուղար ընկ, Ոկուջավա, Ուրալի մեքենագործարան—քարտուղար ընկ, Ավերբախ, չկազմակերպեցին կուսակցական դպրոցների ու խմբակների համալրումը Կենտրոնի վորոշման համեմատ: Կուսակցական դպրոցներում ու խմբակներում զրոյցներ չեն կատարվում կուսակցության քաղաքականության և միջազգային դրության հարցերի մասին, անբավարար չափով են պարզաբանվում կուսակցության անդամներին նրանց համար մութ, կամ նրանց հետաքրքրող հարցերը: Փոխանակ իրապես հոգալու Կենտրոնի վորոշման կատարման մասին, նշած կուսակցական կոմիտեները սահմանափակվեցին ընդհանուր բանաձեռով ու վորոշումներով: Իրենք, քաղկոմների ու շրջկոմների քարտուղար-

ները, կուսակցական-պրոպագանդիստական աշխատանքի ղեկավառ-
ըռումով չեյլն զբաղվում, վերահանձնարարելով այդ աշխատանքը
ապարատի առանձին աշխատողների:

ՀամԿ(թ)Կ Կենտկոմի բազմիցս արած ցուցումները պրոպագան-
դիստների հոգատար ընտրության և կուսկոմիտեների քարտուղար-
ների կողմից նրանց սիստեմատիկորեն հրահանգելու մասին՝ չեն
կատարվում:

ՀամԿ(թ)Կ Կենտկոմն առանձնապես նշեց պրոպագանդիստա-
կան կադրերի ընտրության և նրանց աճեցման գործի անբավա-
րար դրվածքը: Պրոպագանդիստների վերապարաստման մարդա-
յին դասընթացները Սվերդլովսկում (հուլիս—սեպտեմբեր) մարդկոմը
կազմակերպել եր անփութորեն: Վոչ մարզկոմի բյուրոն և վոչ ել
մասնավանդ կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի
վարիչ ընկ. Ուզյուկովը չհոգացին այդ դասընթացների համար
պրոպագանդիստներ ընտրելու մասին, վորի հետեւանդռով դասընթաց-
ներում սովորողների կեսը պրոպագանդիստական աշխատանքի հա-
մար անպետք դուրս յեկավ:

Կուսակցական պրոպագանդի դրվածքը Սվերդլովսկի մար-
զում համարելով անբավարար, իսկ Սվերդլովսկի մարզկոմի ձեռնար-
կած միջոցները՝ թերք, ՀամԿ(թ)Կ Կենտկոմը վորովով կուլուց հետո՝

1. Առաջարկել Սվերդլովսկի մարզկոմին մի ամսվա ժամկե-
տում հաստատել Ուրալի մեքենագործարանի, Կարակովի և Նիժնի-
Տագիլի կուսակցմակերպությունների պրոպագանդիստների կազմը:

2. Առաջարկել Սվերդլովսկի մարզկոմի կուսակցական պրո-
պագանդի և ագիտացիայի բաժնին (ընկ. Ուզյուկովին) յերեք
ամսվա ժամկետում կատարել պրոպագանդիստների անհատական
հաշվառումը և նրանց կազմի վերահայտմը Սվերդլովսկի մարզում:

3. Պարտավորեցնել ՀամԿ(թ)Կ Սվերդլովսկի մարզկոմին կազմա-
կերպել պրոպագանդիստների մշտական մարզային դասընթացներ
դասատուների ամբացված կազմով:

4. Պարտավորեցնել ՀամԿ(թ)Կ Սվերդլովսկի մարզկոմին կազ-
մակերպել շրջաններում սիստեմատիկ ոգնություն պրոպագան-
դիստներին՝ հատուկ զեկուցումներ կազմակերպելով, կուսակցու-
թյան պատմության և լենինիզմի դասախոսությունների միջոցով՝
սեմինար-պրոպագանդիստների աշխատանքի բարեւավման միջու-

ցով և հատկապես պրոպագանդիստների համար կուսակցական կա-
րինետներում սիստեմատիկ կոնսուլտացիաներ կազմակերպելով:

5. Առաջարկել Կարակոմի քաղկոմի քարտուղար ընկ. Սմիր-
նովին, Նիժնի-Տագիլի քաղկոմի քարտուղար ընկ. Ոկոչավային
և Ուրալի մեքենագործարանի ույյկոմի քարտուղար ընկ. Ավերբե-
խին անձամբ ծանոթանալ կուսակցական դպրոցների և խմբակ-
ների կազմին և համալրել դրանք իրենց իսկ կուսակցական-
ների պատրաստության մակարդակի ու պահանջների համապա-
տասխան:

Պարտավորեցնել ընկ. ընկ. Սմիրնովին, Ոկոչավային և Ա-
վերբեխին Կենտկոմի ցուցումների համապատասխան սիստեմատի-
կորեն լսել բյուրոների նիստերում ինչպես հաղորդումներ առան-
ձին դպրոցների և խմբակների աշխատանքի մասին, այնպես ել ա-
ռանձին պրոպագանդիստների հաշվետվություններ, այլև անձամբ-
սիստեմատիկորեն հրահանգել պրոպագանդիստներին:

«Պրավդա», 1935 թ. հոկտեմբերի 28

ԴՐՈՊԱԳԱՆԴԻՍՆԵՐԻ ՅԵՎ ԱԳԻՏԱՏՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարիք չկա ապացուցելու գաղափարական-դաստիարակչական աշխատանքի նշանակությունը ներկայումս կուսակցության մեջ:

Վերջին ժամանակներս այդ աշխատանքի գերն ու նշանակությունը բազմիցս ընդգծվել են: XVII համագումարում ընկեր Ստալինը պարզ և փորոշակի ցույց տվեց, վոր ներկա ետապում անհրաժեշտ ե «ուժեղացնել իդեոլոգիական աշխատանքը կուսակցության բոլոր ողակներում», վոր անհրաժեշտ ե «կուսակցության շարքերում լինինիզմի անդուլ պրոպագանդ մղել»: Այդ ցույցուներն իրենց արտացոլումը գտան XVII համագումարում ընդունված՝ կուսակցության Կանոնադրության մեջ ել, վորը պարտականություն ե դնում ամեն մի կոմունիստի վրա «անդուլ աշխատել իր գաղափարական զինվածությունը բարձրացնելու, մարքսիզմ-լենինիզմի հիմունքները, կուսակցության կարևորագույն քաղաքական ու կազմակերպական վորոշումները յուրացնելու համար և բացարել դրանք անկուսակցական մասսաներին»:

Մենք գտնվում ենք անդասակարգ սոցիալիստական հասարակության շեմքին: Մեր կուսակցության ուսերին ընկած համաշխարհային-պատմական ինդիքը՝ մոտակա տարիներին լիակատար սոցիալիզմին համեմ, կապիտալիզմի մնացուիները վոչ միայն ելոնումիկայում, այլև մարդկանց գիտակցության մեջ հաղթահարելը, կուսակցության անդամներից պահանջում ե ել ավելի

մեծ կազմակերպվածություն, կարգապահություն, պահանջում ե նաև մեծագույն գիտակցականություն, մարքսիզմ-լենինիզմի թեորիայի իմացություն, մեր կուսակցության պատմության իմացություն:

XVII համագումարից հետո կուսակցական պրոպագանդն զգալիորեն լայնացավ: Կուսակցության քաղաքականության հիմունքները, նրա պատմությունն ուսումնասիրող, լենինիզմն ուսումնասիրող պրոպագանդական դիմականները ներկայումս ընդգրկում են մի կուսակցության միլիոնից ավելի անդամներ և թեկնածուներ ու համակրողներ: Այդ խմբակներն աշխատում են ավելի կանոնավոր, ավելի հիմնավոր կերպով են անցնում իրենց դասընթացը:

Սակայն պրոպագանդի գործը դեռևս մնում է չափազանց ցածր մակարդակի վրա: Նա զեռևս կուսակցական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում չե: Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի ճշշտ ուղղության և կազմակերպման համար գեռես չկա ամենորյա հոգացողություն:

Հենց իրենց, պրոպագանդիստական խմբակների մեջ դեռևս շատ կա աղայություն, սխոլաստիկա, կտրվածություն կուսակցության ներկայիս քաղաքական խնդիրներից ու պայքարից:

Համկ(թ)կ կենտրոնի վորոշումները, լենինգրադի քաղկոմի պլենումի 1935 թվի մարտի 29-ի վորոշումը նշեցին պրոպագանդիստական աշխատանքի հիմնական թերությունները թե նրա կազմակերպման և թե եյության տեսակետից, առանձնապես կուսակցության պատմության ուսումնասիրության վերաբերմամբ:

Կենտրոնի «Մոտակա ժամանակաշրջանի պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշման մեջ տեղական կազմակերպությունների ուշադրությունը դարձվում է նաև պրոպագանդի դըրվածքի վճռական ողակի վրա: Կենտրոնը հանձնարարում է տեղական կազմակերպություններին խնամքով հոգալ պրոպագանդիստների ընտրության և պատրաստման մասին, «ներական ունենալով, վոր կուսակցական գաղոցների ու խմբակների բաղադրան-դաստիարակչական առաջին հերթին կախված ե պրապագանդիստից»:

Կուսակցական կազմակերպությունները պետք ե հիմնավորապես յուրացնեն այդ դրույթը նրանից բղխող բոլոր հետեւթյուններով: Պրոպագանդի գաղափարական մակարդակը, նրա վո-

բակը, նրա հաջողությունը, կուսակցության անդամների կողմից մարքսիզմ-լենինիզմի թեորիայի, կուսակցության պատմության և նրա քաղաքականության հիմունքների յուրացումը առաջին հերթին կախում ունեն նրանից, թե ում և հանձնարարվում կուսակցական խմբակների ու դպրոցների ղեկավարումը, կախում ունեն պրոպագանիժիսից։ Այդ մասին վկայում են գաղափարական-դաստիարակչական աշխատանքի ամբողջ փորձը և լենինի ու Ստալինի բազմաթիվ ասույթները։

Գաղափարական-դաստիարակչական աշխատանքի թափը, կուսակցական դպրոցների ու խմբակների ցանցի լայնացումը, այդ աշխատանքն ավելի բարձր մակարդակի հասցնելու խնդիրները կուսակցական կազմակերպություններից պահանջում են հատուկ ուշադրություն դեպի պրոպագանդիստների ընտրությունը, դեպի նրանց հետ կատարվող աշխատանքն ու նրանց ոգնություն ցույց տալը։

Անցյալ տարվա սեպտեմբերին Կենտկոմն իր վորոշմամբ առաջարկել եր շրջկոմմաներին ստեղծել հատուկ հանձնաժողովներ պրոպագանդիստների ընտրության համար և պրոպագանդիստների կազմը հաստատել շրջկոմների բյուրոներում։

Կազմակերպությունների մեծամասնության մեջ Կենտկոմի այդ վորոշումը չի կատարվում։ Յեվ չի կատարվում մեր կուսակցության հենց առաջավոր արդյունաբերական կազմակերպություններում։

Իրեն կանոն, պրոպագանդիստների առաջքաշումը տեղի յեւնենում կուսակցական ապարատի ոժանդակ ողակներում։ Պրոպագանդիստին ընտրում և վոչ թե կուսկոմի քարտուղարը և նույնիսկ կուլտպրոպի վարիչը, այլ կուսկարենետի վարիչը և ցեխի կուսկազմակերպիչը։ Յեթի պրոպագանդիստները հաստատվում ել են կուսկոմի բյուրոյում, այդ հաստատումը կատարվում են ձևականորեն։ Իրականում վոչ կուսկոմիտեյի քարտուղարը, վոչ ել մասնավանդ շրջկոմի քարտուղարն իրենց պրոպագանդիստներին չեն ճանաչում, նրանց աշխատանքը չեն ստուգում և ճիշտ այդպիս ել նրանց ոգնություն ցույց չեն տալիս։

Կուսկոմիտեյի քարտուղարն իր կուսակցական պարտականությունն եւ համարում—և այդ բոլորովին ճիշտ եւ—դեմքով ճանաչել յուրաքանչյուր կուսկազմակերպչի և կանոնավոր կերպով նրանց

հետ խորհրդակցություններ ունենալ։ Բայց յերբ խոսքը պրոպագանդիստների մասին ե, ապա քարտուղարը սովորաբար ուղարկում ե կուլտպրոպի կամ կուսկարենետի վարիչի մոտ։

Նման վերաբերմունքը դեպի գաղափարական-դաստիարակչական աշխատանքում զգալի դեր խաղացող կազմերի ընտրությունն ու ղեկավարումը ահազին վտանգ ե թագցնում իր մեջ։

Կուսակցական պրոպագանդի ցանցը լայնանում ե, առանձնապես կուսակցության պատմության խմբակների գծով։ Խոկ հաճախ այդ խմբակների ղեկավարներ են դառնում մարդիկ, վորոնք ինքները չգիտեն կուսակցության պատմությունը, վորոնք շփոթում են տարրական հարցերը, վորոնք վարկարեկում են կուսակցության պատմության դասավանդումը և յերբեմն ել կուսակցության պատմության այդ ուսումնասիրությունը չարամտորեն տանում են հակառակ լենինիզմի։

Պրոպագանդիստական աշխատանքի դրության հետ ծանոթանալը տալիս ե լենինիզմի պրոպագանդի խեղաթյուրման հարցուրավոր որինակներ, իբրև արդյունք պրոպագանդիստների անբարվար ընտրության։

Այդ անբարվարը ընտրությունն անդրադառնում ե պրոպագանդիստների գասընթացների կազմակերպման վրա։ Այստեղ ճիշտ այդպիս ընկնում են ընկերներ, վորոնք վոչ մի առնչություն չունեն պրոպագանդի հետ, այդ գործի համար անպետք են, կուսակցության պատմությունից և լենինիզմից տարրական գիտելիքներ չունեն։ Դրա հետևանքով պրոպագանդիստների գասընթացների աշխատանքն զգալի չափով անցնում ե ապարդյուն։

Դա հետևանք ե այն բանի, վոր կուսակցական կազմակերպություններն այստեղ խախտում են բոլշեվիկյան աշխատանքի հիմնական սկզբունքներից մեկը՝ չեն հոգում մարդկանց բնօրության մասին, անուշադիր վերաբերմունք են ցույց տալիս մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդ մղելու ընդունակ ընկերներ հայտաբերելուն։

Կուսակցական կազմակերպությունները մոռանում են լենինի ցույցումը պրոպագանդիստների ընտրության նշանակության մասին։

«Ի դեպի, պրոպագանդիստների առթիվ յես կուզեյի մի քանի խոսք ել ասել այդ պրոֆեսիան պակաս ընդունակ մարդկան-

ցով սովորաբար լիքը լցնելու և դրանով պրոպագանդի մակարդակը ցածրացնելու դեմ: Յերբեմն յուրաքանչյուր ուսանող մեզ սոտ առանց խարության պրոպագանդիստ և համարվում, և ամբողջ յերիտասարդուրյունը պահանջում է, վոր նրան «խըմբակ տան» և այլն: Դրա գեմ պետք ե պայքարել, վորովհետեւ դրանից մեծ վնաս ե լինում: Մկրտունքորեն իսկապես կայուն և ընդունակ պրոպագանդիստները շատ էն (և այդպիսին դառնալու համար հարկավոր ե բավականաշափ սովորել ու փորձ ձեռք բերել) ու այդպիսի մարդկանց հարկավոր և մասնագիտացներ զբաղեցնել նրանց ամբողջովին և խորապես պահպանելու: (Լենին, Յերկեր, V հ., եջ 185. «Նամակ ընկերոջը մեր կազմակերպական խնդիրների մասին»):

Պրոպագանդի և ագիտացիայի ամբողջ ապարատը պետք ե գործի վորպես կուսակցականների և անկուսակցական բանվորների մեջ ծագող բոլոր հարցերին և տարակուսանքներին արագորեն արձագանքող և այդ հարցերն ու կուսակցության գիծը ձիչտ պարզաբանող կենդանի քաղաքական ապարատ:

Այդ գեռես չկա: Ամեն քայլափոխում խմբակների և դպրոցների պարապմունքները կատարվում են այնպես, վոր գործը սահմանափակվում ե այս կամ այն եղերը կարգալով ու պարզաբանելով: Պրոպագանդիստը վոչ միայն չի փորձում պարզել, թե ինչ հարցեր ունեն ունկնդիրները, այլև հաճախակի խուսափում ե այդ հարցերից, բացարկում ե այդ հարցերն այն պատրվակով, թե նրանք պարապմունքների պլանին չեն համապատասխանում, կամ նույնիսկ հարձակվում են կուսակցականների վրա, վոր նրանք «կողմանակի» հարցեր են տալիս:

Այդ վոչ այլ ինչ ե, յեթե վոչ պրոպագանդի անհանդուրժելի խեղաթյուրում, պրոպագանդիստական աշխատանքի բյուրոկրատացում:

«Կենտկոմի «Մոտակա ժամանակաշրջանի պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշման մեջ կա յերկու խիստ եյական կետ, վորոնք մտցված են ընկեր Ստալինի անմիջական ցուցումների հիման վրա.

«Բոլոր դպրոցների ու խմբակների պարապմունքների լնրաց գումար խմբակների անդամների հետ անդաման գրաւցներ կազմակերպել կուսակցության բաղադրական և միջազգային մասնակի այդ բոլոր բազմազան պահանջները թե ներքին և թե արտաքին դրության բոլոր մոմենտների վերաբերյալ դրանց ավելի ճիշտ ու ժամանակին արձագանքերու համար: Շատ կուսակցական զեկավարներ մոռացել են կուսակցական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի այդ կարևորագույն կողմը:

դրույթան հարցերի շուրջը, պարզաբանելով խմբակների անդամներին նրանց համար մուր, կամ նրանց հետաքրող հարցերը»: Յեզ յերկուրդը՝

«Համկ(թ)կ Կենտկոմն առաջարկում է յերկրային և մարզային կոմիտեներին ու ազգային կոմիտակցությունների կենտկոմներին, նաև ըշկոմներին, կազմակերպել կոմիտեներին կից պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվ՝ կուսակցական կոմիտեների առաջարգություններով պրոպագանդիստական և ազիտացիոն աշխատանքի կատարելու համար, սիստեմատիկ հրահանգելով և պատրաստելով այդ ակտիվը»:

Այդ յերկու ցուցումները սերտորեն կապված են իրար հետ: Յեզ ինչպես ցույց տվեց Դոնեցի, Սվերդլովսկի և ուրիշ մարզերի միքանի շրջանների հետազոտությունը, այդ յերկու կետու ել դեռևս չեն իրազործվում: Շատ աշխատաղներ կարծում են, թե բավական և կազմել պրոպագանդիստների ու ագիտատորների ցուցակը, և ամեն բան կարգին ե: Բավական և քաղաքական կամպանիաների վրոշակի մոմենտների այդ զեկուցողներին ու պրոպագանդիստներին ուղարկել ձեռնարկություններն ու կոլտնտեսությունները զեկուցումների, և ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի խնդիրները դրանով լիովին սպառված կլինեն:

Այդ ամենեին այդպես չե:

Կուսակցական կազմակերպությունները միշտ պետք ե իրազեկ լինեն այն հարցերին, վորոնք հուզում, զբաղեցնում են բանվորներին ու կոլտնտեսականներին, վորոնք նրանց համար պարզ չեն, վորոնց համար նրանք պատասխան են պահանջում:

Անհեթեթություն կլիներ, ծիծաղելի կլիներ կարծի, թե ընդհանուր զեկուցումները, այս կամ այն քաղաքական կամպանիայի կարգով տրված հանդիսավոր զեկուցումները պատասխանում են այդ բոլոր հարցերին: Վոչ: Դրա համար անհրաժեշտ ե ավելի ձկուն մոտեցում, դրա համար անհրաժեշտ ե գիտենալ, հաշվի առնել մասսայի այդ բոլոր բազմազան պահանջները թե ներքին և թե արտաքին դրության բոլոր մոմենտների վերաբերյալ դրանց ավելի ճիշտ ու ժամանակին արձագանքերու համար: Շատ կուսակցական զեկավարներ մոռացել են կուսակցական ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի այդ կարևորագույն կողմը:

Իսկ մինչդեռ այն ամենաեյական նշանակություն ունի մաս-

սաների քաղաքական դաստիարակման գործում, նրանց ղեկավարման գործում:

Յեթե կուսակցական կազմակերպությունները չեն կարողանում պատասխանել և չեն պատասխանում բանվորներին ու կուսակցականներին հուզող հարցերին, այս մարդիկ սկսում են կերակրվել լուրերով, և այստեղ լայն ասպարեզ ե բացվում թշնամիների գործունեյության համար: Նրանց ել հենց այդ ե հարկավոր: Յեվ նրանք ոգտվում են այդպիսի մոմենտից՝ ամեն տեսակ մտացածին բաներ տարածելու և կուսակցության քաղաքականությունը վարկաբեկելու համար: Պրոպագանդիստների և ազիտատորների ակտիվը պետք ե գործի վորպես կենդանի քաղաքական ապարատ: Նա պետք ե գործի շրջկոմների ցուցումներով: Յեթե մի ձեռնարկության մեջ ընկերներն, ասենք թե, չեն հասկացել պակտերին վերաբերող հարցը, մյուսում խոսակցություններ են տեղի ունենում միասնական ճակատի մասին, և տեղական կազմակերպությունը չի կարողանում հեղինակավոր ու ճշշտ կերպով պարզաբանել այդ հարցերը, յեթե յերրորդ տեղում վորքե տարակուանքներ են ծագել աշխատավարձի խնդիրների շուրջը, կամ բանվորներն ու կոլտնտեսականները պահանջում են բացատրել սահմանադրության փոփոխությունները, կամ լուսաբանել միջազգային դրության հարցերը, կուսակցական կազմակերպությունները պարտավոր են արագորեն անդրադառնալ այդ հարցերին, գործելով պրոպագանդիստների և ազիտատորների ակտիվի միջոցով:

Յեվ այստեղ անհրաժեշտ ե ոգտվել բազմատեսակ մեթոդներից: Ամենաեն պարտադիր չե, վոր ազիտատորն ու պրոպագանդիստը միշտ հանդես գան զեկուցողի դերում: Նա կարող ե զրույց ունենալ, նա կարող ե ուղղակի պատասխանել ժողովում նրան տրված հարցերին: Նա կարող ե հրահանգել տեղական ակտիվին, վորպեսզի ակտիվ ինքը այնուհետև շարունակի բացատրական աշխատանքը: Ըստվորում, ինչպես փորձը ցույց ե տալիս, այդ տեսակետից ամենից գնահատելի հանդիսանում են ձեռնարկության հին աշխատող բանվորներն ու կոլտնտեսականները, վորոնք ճանաչում են մասսային, վորոնց մասսան նույնապես ճանաչում ու հարգում ե վորոնք ինքները կարողանան, ինչպես հարկն ե, պատմել մասսային ամեն ինչ:

Նույնը պետք ե ասելնաև պրոպագանդիստների ակտիվի մասին:

Տեղական պրոպագանդիստները հաճախ չեն կարող պատասխանել այս կամ այն հարցին: Ներկայումս այնպիսի կարգ կա, վոր այդ հարցերն ընդհանրապես մնում են լավագույն դեպքում առանց պարզաբանման: Իսկ կամ այնպիսի տաքլուխ պրոպագանդիստներ, վորոնք սիրտ չանելով ասել, վոր իրենք ինքներն ել չգիտեն, հարձակվում են հարց տվող կամ իր տարակուանքն արտահայտող ընկերոջ վրա, ճգնում են խեղդել նրան կոպիտ բղավոցով, կամ սպառնում են նրան թեքման մեջ մեղադրելով:

Մրանք խայտառակ գեպքեր են:

Իրականում յուրաքանչյուր պրոպագանդիստ պարտավոր ե ամենապուշագիր վերաբերունք ցույց տալ ունկնդիրների հարցերին և տարակուանքներին: Յեվ յեթե նա ինքը և տեղական կուսակզմակերպությունը կուսակցության պատմության կամ թեորիային կամ նրա քաղաքականությանը վերաբերող տարակուանքները պարզաբանել չեն կարող, նա պարտավոր ե դիմել շրջկոմ:

Այստեղ ել ոգնության պետք ե գան պրոպագանդիստների և ազիտատորների ավելի փորձված, ավելի գիտակ ընկերները:

Այսպիսով, այդ ակտիվի դերը յերբեք չի հանգում հանդիսավոր որերին զեկուցումներ տալուն: Այդ ակտիվի խնդիրները նույնապես չեն սահմանափակվում միայն տեղական պրոպագանդիստների ու ազիտատորների հրահանգումով:

Այդ ակտիվի խնդիրներն են՝ շրջկոմի ու վերադաս կուսակցական որգանների ցուցումներով, ամենորյա ազիտացիա ու պրոպագանդ մղել արձագանքերով մասսաների պահանջներին, պատասխանելով նրանց, ոգնության համելով նրանց կուսակցության քաղաքականության պարզաբանման գործում:

* *

Համեր (թ) Կ կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի տեղեկություններով, մարզերի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի միքանի ղեկավարներ մինչեւ այժմ դեռևս նեղություն չեն տվել իրենց հասկանալու ինչպես հարկն և պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ստեղ

ծելու մասին Կենտկամի ցուցումի իմաստն ու նշանակությունը՝ Նրանցից մի քանիսը պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվի ամբողջ աշխատանքը վեր են ածում ղեկուցումների, դասախոսությունների և ամենաշատը՝ կուսակցական դաստիարակության ցանցի դպրոցների ու խմբակների ղեկավարների հրահանդմանը. Իսկ վոճանք եւ ինչպես որինակ ընկ. Գենկինը — Համկ(բ)կ Վորոնեժի մարզկոմի կուտապրոպի վարիչը գտնում ե, վոր մարզկոմին կից ակտիվ ստեղծելու խնդիրն արդեն ըստ եյտթյան կատարված ե, քանի վոր ակտիվը «վաղուց գոյություն ունի» հանձին ղեկուցողների, հրահանդիչների և այլն: Մնում ե միայն լայնացնել այդ «վաղուց արդեն գոյություն ունեցող ակտիվը»: Իսկ իրականում, Վորոնեժի մարզկոմին կից այնպիսի ակտիվ, վորի մասին վերևն առվեց, չկա: Կա քաղաքական կամպանիաներ մզելու համար ղեկուցողների ու հրահանդիչների ցուցակ: Սակայն հենց ինքը՝ ընկ. Գենկինը հայտարարում ե, վոր մարզկոմին կից այդ ակտիվի վրա դրված են «նույն ինդիրները, ինչ վոր առաջ»: Իսկ այն մասին, թե ինչ ե կատարվում շրջաններում ակտիվի կազմակերպման մասին Կենտկամի ցուցումի կատարման իմաստով՝ ընկ. Գենկինին վոչինչ հայտնի չե:

Գործը ճիշտ նույնպիսի դրության մեջ ե Բելոռուսիայում: Բելոռուսիայի Կ(բ)կ Կենտկամի կուտապրոպի վարիչ ընկ. Կոնիկը Բելոռուսիայի Կ(բ)կ Կենտկամին կից պրոպագանդիստների ու ազիտատորների խնդիրները վեր ե ածում ըստ եյտթյան սուվորական դասախոսական խմբի ֆունկցիաների: Ընկ. Կոնիկը նույնպես չգիտե պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվի ստեղծման իրական գրությունը և կարծում ե, վոր շրջաններում պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվը, վորը նըրա ասելով «միշտ այնտեղ կար», այժմ լայնացել ե: Ընդորուտ ընկ. Կոնիկը այդ ակտիվի խնդիրներ համարում ե «դասավանդումը խմբակներում և ընթացիկ քաղաքականության հարցերի մասին ղեկուցումներ կարգալը»:

Մի շաբաթ (10) մարզկոմների ու յերկիրների վերաբերմամբ հավաքած տեղեկությունները ցույց են տալիս, վոր կուսակցական կազմակերպությունների ղեկավարները հարկ յեղած նշակություն չեն տվել Կենտկոմի ցուցումին պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվ ստեղծելու մասին: Վորոշ դեպքերում

այդ ցուցումը բոլորովին չի իրագործված, ուրիշ դեպքերում պրոպագանդիստների և ազիտատորների ակտիվ ստեղծելուն մոտեցել են ձևականորեն: Դեռևս վոչ մի տեղ պրոպագանդիստների և ազիտատորների ակտիվը չի ծավալել, ինչպես հարկն ե, իր աշխատանքը: Նույնիսկ այնպիսի առաջավոր կազմակերպություններում, ինչպես Մուկայի կամ Աբրամյան կամ Արմենիայի մարզի կուտապրոպի վարիչը ընկ. Ուղղությունը հաղորդում ե, վոր Մուկայի մարզում մի շաբաթ տեղերում «Ճքնակումներին կից գոյություն ունեցող «լիազորների» ակտիվը փորձ են անում մեխանիկորեն, առանց անհատական ընտրության «վերափոխել» պրոպագանդիստների ու ազիտատորների ակտիվի»: Իսկ Յարոսլավում նույնիսկ այդ ել չկա: Այնտեղ կուսկարինետին կից կա միայն ղեկուցողների և կուսակցական լուսավորության ցանցի դպրոցների ու խմբակների ղեկավարների ակտիվ: Պրոպագանդիստների և ազիտատորների ակտիվի կազմակերպման այսպիսի դրության չի կարելի հանդուրժել: Անհրաժեշտ ե հիշել վոր առանց պրոպագանդիստների ակտիվ ստեղծելու, վորը գործի վորպես կանդանի քաղաքական ապարատ, ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի լուրջ բարելավումն անկարելի յի:

«ПРАВДА», 1935 թ. սեպտեմբերի 22

Ա. Սահման

ԿՈՒԼՏՐՈՊՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՈՒ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համ Կ(բ)Կ Կենտկոմի 1935 թվի մայիսի 14-ի վորոշումով Համ Կ(բ)Կ Կենտկոմի կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժինը վերակազմվեց: Կուլտուրայի վոխարեն Համ Կ(բ)Կ Կենտկոմի ապարատի կազմում ստեղծված ե հինգ բաժին՝ 1. Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժին, 2. Մամուլի և հրատարակչությունների բաժին, 3. Դպրոցների բաժին, 4. Կուլտուր-լուսավորական աշխատանքի բաժին, 5. Գիտության, գիտական-տեխնիկական գյուտերի և հայտնագործությունների բաժին: Ընկեր Ստալինի նախաձեռնությամբ իրականացած այդ վերակազմությունը քաղաքական-դաստիարակչական, ագիտացիոն, գիտական և կուլտուր-լուսավորական աշխատանքի, դպրոցի ու մամուլի կուսակցական ղեկավարման հսկայական ամրացումն ե նշանակում:

Ինչո՞վ ե պայմանավորված այդ վերակազմությունը:

Վերջին տարիներս կատարվում եր կուլտուրայի հսկայական անում թե՛ քաղաքի և թե՛ գյուղի կուլտուրական հիմնարկների ցանցի, դպրոցների, բուհերի և բառեների ցանցի, գիտահետազոտական ինստիտուտների լայնացում կենտրոնում և տեղերում: Տարեցտարի կուսակցության և կոմյերիտմիության ներսում կատարվող կուսակցական դաստիարակչական աշխատանքի, մարքարդականիզմի պրոպագանդի գործի նշանակությունը մեծանում և ծավալը լայնանում ե:

20

Ներկայումս կուսակցական պրոպագանդի ցանցն ընդգրկում է կուսակցության մի միլիոնից ավելի անդամներ և թեկնածուներ: Դպրոցների ու խմբակների այդ հսկայական ցանցում գյուղում ու քաղաքում աշխատում են տասնյակ հազարավոր պրոպագանդիստներ: Միայն Մոսկվայում աշխատում ե 20.000 պրոպագանդիստ, նրանցից 12.000-ը կուսակցական լուսավորության ցանցում, մնացածները կոմյերիտական և պրոֆմիութենական դպրոցներում: Լենինգրադի կուսակցական դպրոցներում աշխատում ե մոտ 10.000 պրոպագանդիստ:

Ներկայումս մամուլը նույնպես ներկայացնում է կուլտուրայի ու պրոպագանդի մի հսկայական ինքնուրույն ճյուղ: 1934 թվին հրատարակված ե 44.600 անուն գիրք: Գրքերի և ժուռնալների արատագրանքի ամբողջ ծավալն այս տարի հասնում ե 4 միլիարդ տպագրական թերթ-ոտտիսակի:

1930 թվին կար մոտ 3000 որաթերթ, 22,3 միլիոն տիրաժով: Ներկայումս հաշվվում ե մոտ 10.000 տպագրվող որաթերթ 36—37 միլիոն տիրաժով, սրանից զատ կան բրիգադային թերթեր, պատի թերթեր և այլն:

Մամուլի աշխատողների կազմերի ընտրության ու պատրաստման հարցերը ինչպես լրագրերում, այնպես ել հրատարակչություններում, առանձնապես կարեւոր նշանակություն ե ձեռք բերում: Պահանջվում ե ուշադիր, ամենորյա կուսակցական զեկավարություն մամուլին, վորպեսզի ապահովի գրքերի, որաթերթերի, պարբերականների բարձր վորակը, նրանց տոկունությունը, նրանց մեջ կուսակցության գծի կիրառումը:

Կուլտուր-լուսավորական աշխատանքի առանձին ճյուղերում գործը ներկայանում ե հետեւալ կերպ: Ներկայումս Խորհրդային Միության մեջ կա 121.263 տարրական դպրոց 10.671.000 սովորողներով, 29.315 վոչ-լրիվ սիջնակարգ դպրոց (7 դասարան) 8.959.000 սովորողներով, 3900 միջնակարգ դպրոց (10 դասարան) 3.117.000 սովորողներով: Ընդամենը տարրական, վոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում դաստիարակվում ե 22.747.000 սովորող:

Բուհերի և բառեների քանակը բոլոր ճյուղերում ներկայումս կազմում է 682 միավոր 513.000 ուսանողով (1928 թվի 160.000-ի դիմաց): Դրան անհրաժեշտ է ավելացնել, զոր 1935 թվի վերջին

21

տեխնիկումներում սովորելու յեն 804.000 և բանֆակներում 330.000 ուսանող: Այսպիսով, քարձրագույն կրթությունը, ինչպես և տարրականն ու միջնակարգը, դարձել են կուլտուրայի ու դաստիարակության մի հսկայական ինքնուրույն ճյուղ, վորն ընդգրկում է բազմամիլիոն յերեխաներ ու յերիտասարդություն:

Ներկայումս Միության մեջ քաղաքական դաստիարակչական ցանցում հաշվվում են 8875 քաղաքային ակումբ, 34.240 խրճիթ-ընթերցարան, 16.652 կոլտնտեսային ակումբ, 113.363 ստացիոնար գրադարան և 102.067 շարժական գրադարան 294 միլիոն հատոր գրքային փոնդով: Դրան պետք ե ավելացնել 30.600 ստացիոնար կիոն-սարքավորում, 619 թատրոն, 290 կրկես և այլն. վերջապես ռադիոհաղորդման 67 կայան և 2.300.000 ռադիոկետ, հսկայական քանակությամբ լուսավորական և ինքնազործունեյության խմբակներ, դասընթացներ, մեծահասակների դրոցներ և այլն:

Ինչ վերաբերում ե գիտական աշխատանքն, ԽՍՀՄ-ում ունենք ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիան նրա ինստիտուտներով ու տեղական ֆիլիալներով, վորոնք ունեն 1500 գիտական աշխատող, կոմունիստական ակադեմիա, ՌԼՍԽ և ԲՍԽՀ Գիտությունների ակադեմիաները: Ընդամենը Միության մեջ կա 973 գիտահետազոտական հիմնարկ 40.000 գիտական աշխատողներով:

Գիտության ու տեխնիկայի աճման, սոցիալիստական ինդուստրիայի զարգացման, զյուլատնակենության վերելքի և հետագա մեքենայացման խնդիրների կապակցությամբ յերկրում ել ավելի յե մեծանում գիտահետազոտական հիմնարկների, նոր գյուղական ու հայտնագործությունների դերը, գյուղարարական աշխատանքի զարգացման նշանակությունը:

Կուսակցական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքի թված ընազավառներից յուրաքանչյուրը ներկայումս անել-դարձել ե աշխատանքի մեջ ինքնուրույն ճյուղ, պահանջում ե գեղի իրեն ամենորյա ուշադրություն, պահանջում ե կուսակցական դեկավարություն: Մինչդեռ այդ աշխատանքի միասնական դեկավար կենտրոններ չկան: Կուլտուրական ու գիտական աշխատանքի դեկավարությունը ապակենորունացված ե իրականացվում ե խորհրդային կարգով՝ առանձին ազգային հանրապետություններում (դպրոցներ, կուլտուր-լուսավորական աշխատանք), առանձին ժողովածառներում (բուհեր, բառերեր, գիտա-

հետազոտական աշխատանք) և նույնիսկ առանձին մարզերում (մամուլ):

Կուլտուրական աշխատանքի մի շարք ճյուղեր—բուհեր և բառեր, գիտահետազոտական աշխատանք—կուսակցական ապահոված նույնպես բաժանված եյին ըստ ճյուղային բաժինների:

Ինչ վերաբերում ե կուլտուրայի և լենինիզմի պրոպագանդի բաժնին, ապա այդ բաժինը, վոր միացնում եր կուսակցական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքի կարեռագույն ճյուղերը, դարձավ կուսակցական ապարատի ամենաունիվերսալ բաժինը: Այդ բաժինն զբաղվում եր և դպրոցների ու բուհերի հարցերով և պրոպագանդով ու մամուլով, գեղարվեստով, առողջապահությամբ, գիտական աշխատանքով և գիտահետազոտական հիմնարկներով, կուլտուր-լուսավորական աշխատանքով:

Վերջին տարիներս բոլոր այդ նյուղերն այնպես ծավալվեցին, վոր Համ Կ(Բ)Կ Կենտկոմի կուլտուրայի ու լենինիզմի պրոպագանդի բաժինը բնականորեն, իերեի տրամաբանությամբ, վերջին ժամանակներս ի վիճակի չեր գլուխ բերելու աշխատանքի բոլոր այդ անաձ և անօդ նյուղերին հետևելու ու վերահսկողությունը, ի վիճակի չեր իրականացնելու երանց ամենուրա գեղարվությունը:

Այսպես, վերջին ժամանակներս մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդի դրվածքի մեջ, առանձնապես կուսակցության պատմության ուսումնասիրության զրգածքի մեջ հայտաբերված են լուրջ թերություններ ու բացեր: Վոչ պակաս լուրջ թերություններ հայտաբերված են բուհերի և տեխնիկունների քաղաքական-դաստիարակչական և ուսումնական աշխատանքում, վորը վկայում ե այդ գործի անբավարար զեկավարման մասին ժողովածառների, առանձնապես լուսժողկումատների կողմից:

Այդ բոլոր պայմաններն ել հենց առաջ բերին Համ Կ(Բ)Կ Կենտկոմի կուլտուրապատմության անհրաժեշտությունը:

Ուժեղացնել կուսակցական-դաստիարակչական և կուլտուրական աշխատանքի բոլոր նյուղերի կոււակցական դեկավարությունը— այս ե կուլտուրապատմության նիմնական իմաստն ու նշանակությունը:

* * *

Ներկայումս Համ Կ(Բ)Կ Կենտկոմի ապարատում արգեն ստեղծված են և աշխատում են հինգ նոր բաժիններ: Ավարտվում ե

մարզկոմների, յերկրային կոմիտեների և աղքային կոմկուսակցությունների կենտկոմների կուլտպրոպաների վերակազմումը։ Այդ վերակազմումը կատարվում է այսպես, վոր մարզկոմները, յերկրային կոմիտեներն ու աղքային կոմկուսակցությունների կենտկոմներն իրենք են ուրվագծում բաժինների կառուցվածքն ու քանակը, առաջարգում թեկնածուներ բաժինների վարիչների համար և այնուհետև մտցնում են իրենց նախագծերը Համ Կ(բ)կ կենտկոմի կազմբյուրոյի հանձնաժողովի քննությանը։ Կազմբյուրոյի հանձնաժողովը յուրաքանչյուր մարզի վերակառուցման նախադիմը և առաջարգած թեկնածությունները ներկայացնում է Համ Կ(բ)կ կենտկոմի հաստատությանը։

Այսպիսով, հանրապետություններում, յերկիրներում և մարզերում բաժինների քանակն ու նրանց կառուցվածքը վորոշվում են յուրաքանչյուր յերկրի ու մարզի աշխատանքի կոնկրետ պայմանները հաշվի առնելու հիման վրա։

Մուկվայի ու Լենինգրադի մարզկոմներում, որինակի, կուլտպրոպաների փոխարեն կաղմակերպված ե չորս բաժին, ըստվորում դպրոցների ու գիտական հիմնարկների ղեկավարությունն իրավականացնում և դպրոցների ու գիտության մի բաժիննը։ Իսկ Մուկվայի ու Լենինգրադի քաղկոմներում ստեղծված ե հինգ բաժին և գիտության բաժինը կազմված ե ինքնուրույն, քանի վոր Մուկվայում ու Լենինգրադում մեծ քանակությամբ գիտական հիմնարկներ կան, վորոնց կուսակցական ղեկավարությունը հատուկ ապարատ և պահանջում։ Հինգ բաժին ունի նաև ՈւԿ(բ)կ կենտկոմը։

Աղով-Սևծովյան յերկրում, Հյուսիսային կովկասում, Սվերդլովսկի մարզում և Սրբատյան Սիրիում կուլտպրոպաների փոխարեն կազմակերպված ե չորս բաժին։

Ուրիշ մարզերում, վորոնք ավելի փոքր քանակությամբ ըրջաններ և պակաս բարդ աղքային կազմ ունեն, կուլտպրոպի փոխարեն ստեղծված ե յերեք բաժին, միացնելով մի բաժնում կուսակցական պրոպագանդի, ագիտացիայի ու մամուլի ղեկավարությունը, մյուսում՝ դպրոցների ու գիտության, իսկ յերրորդ բաժինը, կուլտուր-լուսավորական աշխատանքի բաժինը կա բոլոր մարզկոմներում ու յերկրային կոմիտեներում։

Ամենամոտ ժամանակում Համ Կ(բ)կ կենտկոմում քննութելու յե-

քաղկոմների ու շրջկոմների կուլտպրոպաների վերակառուցման հարցը։

Այն հանգամանքը, վոր յերկրային կոմիտեների, մարզկոմների ու աղքային կոմիտակցությունների նոր բաժինների կառուցվածքը, հաստիքներն ու վարչինները յուրաքանչյուր կազմակերպության համար առանձին հաստատվում են Համ Կ(բ)կ կենտկոմի հօդմից, վոր նոր բաժինների համար առաջարգում են ամենից ավելի սուզիած, կուսակցական աշխատանքի մեծ փորձ ունեցող աշխատաղենք, ընդգծում ե, թե ինչպիսի մեծ նշանակություն ե տալիս այդ վերակազմությանը Համ Կ(բ)կ կենտկոմը, վորքան լրջութեն ու հիմնավոր կերպով ե դրվում բաղայական-լուսավորական, կուլտուրական, գիտական աշխատանքի, դպրոցների ու մամուլի կուսակցական դեկադրայացման ստեղծացման հարցը։

* * *

Համ Կ(բ)կ կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի նոր բաժինն այլ կերպ ե կառուցված, քան նախկին կուլտպրոպը։ Նա կառուցված ե աշխատանքի նոր ինդիրների համեմատ։

Կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժնի վրադպած ե պրոպագանդիստական աշխատանքի ղեկավարությունը կուսակցության ներսում (կուսակցական դպրոցներ և խմբակներ), մասսայական ագիտացիայի և կուսակատի աշխատանքի ղեկավարությունը։ Կոմհամալսարանների, պրոպագանդիստների ու ագիտատորների կազմերի պատրաստման, կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտների և կուսակցական դասագրքերի հրատարակման ղեկավարությունը, նաև պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվի ղեկավարությունը։

Այսպիսով բաժնի կենտրոնական ինդիրն ե կուսակցական աշխատանքի կարևորագույն ճյուղերից մեկի՝ պրոպագանդի ու ագիտացիայի ղեկավարությունը։ Իսկ այդ ղեկավարությունը կարող ե իրականացվել միայն այն պայմանով, վոր կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժինը գիտենա, թե ինչպես ե կատարվում աշխատանքը տեղերում, ճանաչի պրոպագանդիստների ու ագիտատորների կազմերին, մի խոսքով, յեթե նա սերտորեն կապված լինի տեղական կուսակցական կազմակերպու-

թյունների աշխատանքի հետ: Այս բոլորն ել հենց վորոշեց կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժնի կառուցվածքը:

Համ Կ(բ)կ Կենտկոմի այդ բաժինը հիմնականում կառուցվում է վորպես հրահանգչական տիպի ճկուն ապարատ, վորը միշտ տեղյակ պետք ե լինի, թե ինչպես են մղվում տեղերում պրոպագանին ու ազիտացիան, վորն ընդունակ և ժամանակին նկատել այդ աշխատանքում յեղած սխալներն ու թերությունները, վորը պետք ե ստուգի տեղական կազմակերպությունների տշխատանքն այդ բնագավառում և հրահանգի նրանց: Այս պատճառով կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի հիմնական, առաջավոր մաս հանդիսանում է Համ Կ(բ)կ Կենտկոմի պրոպագանդի պատասխանառու հրահանգիչների խումբը:

Մինչև այժմ Կենտկոմի ապարատում կային պատասխանառու հրահանգիչներ, վորոնք զբաղվում եյին գլխավորապես կուսակցական-կազմակերպական աշխատանքով: Ներկայումս ընկեր Ստալինի ցուցումի հիման վրա նրանց կողքին ստեղծվում ե կուսակցական պրոպագանդի պատասխանառու հրահանգիչների խումբ: Այդ հրահանգիչներն աշխատելու յեն տերիտորիալ սկզբունքով, մոտավորապես այնպես, ինչպես ՕՊՈ-ին կից՝ Կենտկոմի պատասխանառու հրահանգիչները:

Այդ հրահանգիչների խնդիրները պարզ են. նրանք պետք ե գիտենան, թե ով և մղում կուսակցական պրոպագանդը համապատասխան յերկիրներում, ստուգեն այնտեղ այդ գործը, ժամանակին դնեն Կենտկոմի առջև պրոպագանդիստական աշխատանքի բարելավման, սխալներն ու թերություններն ուղղելու հարցերը: Նրանք պետք ե նաև ոգնեն համապատասխան կուսակցակերպություններին:

Ազիտացիայի հարցերի համար բաժնում առանձնացված ե ազիտացիայի հատուկ սեկտոր:

Կուսակցական դասագրքեր ու ծրագրեր, պրոպագանդիստաների համար ձեռնարկներ, կուսակցական դպրոցների ու խմբակների համար ծրագրեր ու դասագրքեր մշակելու համար բաժնում առանձնացված ե կուսակցական դասագրերի ու ծրագրերի սեկտոր:

Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտների, մարքսիզմ-լենինիզ-

մի ինստիտուտների, կոմիտայարանների և պրոպագանդիստների դպրոցների զեկավարման համար բաժինն ունի կուսակցական ուսումնական հիմնարկների սեկտոր:

Եեվ վերջապես, բաժինն ունի կաղըերի, ապա պրոպագանդիստների ու ազիտացիաների հաշվառման սեկտոր: Այս և Համ Կ(բ)կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի կառուցվածքը:

* * *

Ինչ վերաբերում է կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժինների աշխատանքի, նրանց առջև դրված խնդիրների ելությանը, ապա այս տեսակետից կան ընկեր Ստալինի ցուցումները, Համ Կ(բ)կ XVII համագումարի ընդունած՝ կուսակցության կամոնադրության համապատասխան կետերը, Կենտկոմի վորոշումները, Լենինգրադի քաղկոմի 1935 թվի մարտի 29-ի վորոշումը, վոր համակուսակցական նշանակություն ունի:

Կուսակցության XVII համագումարին տված իր զեկուցման մեջ ընկեր Ստալինը մատնանշեց, վոր անհրաժեշտ և ռուժեղացնել իդեոլոգիական աշխատանքը կուսակցության բոլոր ողակներում, վոր անհրաժեշտ և «կուսակցության շարքերում լենինիզմի անդուլ պրոպագանդ մղել»:

Համ Կ(բ)կ Կենտկոմի «Մոտակա ժամանակաշրջանի պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշումը, նույնպես և Լենինինգրադի քաղկոմի մարտի 29-ի վորոշումը նշում են մի շարք լուրջ թերություններ, սխալներ, խեղաթյուրումներ ինչպես պրոպագանդիստական աշխատանքի կազմակերպման, այնպիս ել նրա եյության, նրա բովանդակության մեջ, առանձնապես կուսակցականների կողմից կուսակցության պատմությունն ուսումնասիրելու գործում: Համ Կ(բ)կ Կենտկոմի «Մոտակա ժամանակաշրջանի պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշումը դրա հետ միասին նշում ե կուսակցական պրոպագանդի ավելի ճկուն, ճյուղավորված ձևեր, վորոնք պետք ե հարմարեցվելն կուսակցության առանձին անդամների մակարդակին ու պահանջներին:

Այսպիսով կուսակցական պրոպագանդի խնդիրների և բովանդակության տեսակետից այսպեղ գործը պարզ ե՝ կուսակցական պրոպագանդի բաժինները պետք ե իրազործեն Համ Կ(բ)կ Կենտկոմի

և ընկեր Ստալինի միահիմամայն վսրուտակի և հստակ դիրեկտիվները, պետք է իր բարձրությանը հասցնեն լենինիզմի պրոպագանդը կուսակցության շարքությունը:

Հարցն այն ե, թե ի՞նչպես այդ անել, ուրիշ խոսքով՝ ի՞նչպես պետք և աշխատեն կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժինները, ինչից պետք է նրանք սկսեն:

Կաշխատեմ համառոտ կերպով կանգ առնել այդ հարցի վրա:

Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժիններն ամենից առաջ պետք է արագ ու վճռականորեն վերջ տան յուրաքանչյուր և ամեն տեսակի թեթևամտության, շաղակրատության, ընդհանուր դատողությունների: Կուսակցականների քաղաքական դաստիարակությունն իր բարձրության վրա գնելու, այդ աշխատանքում թերություններին ու սխալներին վերջ տալու համար (իսկ այդ թերություններն ու սխալները բավական շատ են) անհրաժեշտ է ջանասեր, համառ կազմակերպչական աշխատանք: Վատագույն սկիզբը կլինի այն, յեթե նոր բաժինները փոխանակ ջանասեր կազմակերպչական աշխատանքի, նշեն իրենց յերելը ընդհանուր դիրեկտիվներով ու ցուցումներով, մեծախոսառում բանաձևերով:

Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժիններն ամենից առաջ պետք է գիտենան, ուսումնասիրեն, թե ինչպես են աշխատում կուսակցական գովրոցներն ու խմբակները, ինչպես են նրանց մեջ ուսումնասիրվում կուսակցության պատմությունը, լինինիզմը, քաղաքիտությունը, ինչպես են աշխատում պրոպագանդիստները, ճիշտ են կոմպլեկտավորված այդ խմբակները թե վոչ, ինչպես են դեկավարում տեղական կուսակցական կոմիտեն քաղղաստիարակչական աշխատանքի գործը:

Թվում ե, թե դա տարբական պայման ե: Այդ այդպես եք Բայց գերախտաբար «ընդհանուր» զեկավարության այդ տրադիցիաները մինչև այժմ զեռ կենսունակ են և պրոպագանդի շատ զեկավարներ փորձում են աշխատել, արհամարհելով այդ նախապայմանը: Իսկ զեկավարներ առանց այդ պայմանի, առանց իմաստու, թե ինչ դրության մեջ ե գործը տեղերում, ինչ և ինչպես են սովորեցնում իրականում կուսակցության անդամներին, չի

կարելի առանց դրա հնարավոր չեն նաև ձախողությունների ու սխալների ժամանակին ուղղելու:

Այդ տեսակետից նոր բաժինները պետք է աշխատանքը նոր ձևով սերտորեն կապվելով կուսակցական կազմակերպությունների հետ:

Դպրոցներում ու խմբակներում պրոպագանդ մղող մարդկանց ձանաչըլը, այսինքն պրօպագանդիստների կազմերը նանաչելը, — աշխատանքի յերկրորդ պայմանն ե:

Պրոպագանդի և ագիտացիայի բովանդակությունն ու մակարդակը, նրանց վրակի հիմնականում վորոշվում են նրանով, թե ով և մղում ագիտացիան ու պրոպագանդը, վորոշվում են պրօպագանդիստներին կուսակցության արջումների բյուրոներում հաստատելու մասին: Դրա հետևանքով պրոպագանդիստների մեջ կան պատահական, չստուգված, քաղաքականապես անկայուն, կամ պրոպագանդիստական աշխատանքի համար անընդունակ մարդկի: Յեվ սրա հետ միասին շատ արժեքավոր, տոկուն կուսակցականներ հեռու յեն կանգնած պրոպագանդիստական աշխատանքից:

Այդ պատճեառով կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժինների ամենամուտիկ և կարևորագույն խնդիրն ե նանաչելի երենց կազմերը, պարզել, թե ովքեր են այդ կուսակցական պրոպագանդիստները, վորոնց վրա դրված ե կուսակցության անդամների քաղաքական լուսավորության լրջագույն խնդիրը, կանոնավորել նրանց ընտրությունն ու հաստատումը, դնել ինչպես հարկն ե այդ կազմերի հաշվառումը, բայց վոչ ընդհանուր վիճակակարական, այլ անհատական հաշվառումը:

Միայն այդ պայմանով կարելի յե իրականացնել նոր բաժինների վրա դրված ինդիքները:

Բայց պրոպագանդիստներին ու ագիտատորներին վոչ միայն ձանաչել ե պետք: Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժինները պետք ե նրանց համար կազմակերպեն սիստեմաթիկ ոգնություն, նրանք պետք ե ամենա նրանց մեջնեն նրանց:

Պրոպագանդիստները մեծ կարիք ունեն այդ ոգնության։ Մեր պրոպագանդիստների մեծ մասն աշխատանքի բավականաչափ փորձ և հիմնավոր զիտելիքներ չունի։ Հաճախակի, և դա շատ վատ ե, պարապմունքների համար նրանք պատրաստվում են նույն դասագրքերով, ինչ կարդում են նաև խմբակի անդամները։ Միայն քչերը նրանցից պարապմունքների ընթացքում կարող են նյութեր ոգտագործել կուսակցության կազմակերպության կյանքից, նկարազարդել համապատասխան հարցերը պատմությունից բերած որինակներով, հիշողություններով, գեղարվեստական յերկերից հատվածներով։ Պրոպագանդիստների ու ագիտատորների հետ անհրաժեշտ է սիստեմատիկորեն աշխատել հրահանգել նրանց, ուղղել նրանց սիստեմեր և ոգնել նրանց հատուկ դասախոսություններով, սեմինարներ կազմակերպելով, կուսկարբնետներին կից կոնսուլտացիաներ կազմակերպելով։ Այդ աշխատանքը վատ և դրված։ Վերջին ժամանակներս միքանի կազմակերպություններուն, նույնիսկ Մոսկվայի ռայոններում, պրոպագանդիստների սեմինարներն սկսել են ավելի վատ աշխատել։ Դժուկեցին վոչը բարով դեկարտարներ, վորոնք վճռեցին՝ քանի վոր այժմ աշխատող խմբակները բազմաթեսակ են և ծրագրերի անցումով գտնվում են տարբեր աստիճանների վրա, այդ պատճառով պրոպագանդիստների սեմինարներ կազմակերպելու կարիք չկա։

Այդ ամենախասակար տեսակետն ե: Պրոպագանդիստների հետ աշխատելուց, նրանց դեկարտարներուց հրաժարվելը հանցագործություն ե։ Զի կարելի հանդուրժել այնպիսի դեկարտարներ, վորոնք իրենց կարճատեսությունը, պրոպագանդիստին ոգնելու իրենց անկարողությունն ու չկամությունն սքողում են նման դատողություններով։

Պրոպագանդի ցանցն, ինարկե, այժմ ավելի դիմումների դառնում։ Պրոպագանդիստին ոգնություն կազմակերպելն ավելի բարդ բան ե: Բայց սրանից հետևում ե միայն այն, վոր սրա վրա ավելի շատ պետք ե աշխատել և կիրառել ավելի ճկում միջոցներ։

Յեվ այդ պատճառով պրոպագանդիստների ընդհանուր սեմինարների կողքին, վորոնք պետք ե ծառայեն նրանց վորակի բարձրացման, համապատասխան հարցերի և այդ հարցերը խմբակներում անցնելու մեթոդների լավագույն յուրացման նպատակներին, այդ սեմինարների կողքին մեծ նշանակություն ե ստանում կուս-

կարինետներին կից կոնսուլտացիան պրոպագանդիստների համար։ Կուսկարբիները ուշկում են, ձեռնարկության մեջ յեվ ինքը կուսակցան պրոպագանդիկ ու ազթացիանցի բաժինը պետք է լինեն այնպիսի տեղ, ուր յուրաքանչյուր պրոպագանդիստ կարող է գալ խորհուրդ սահմանությունը, թե ինչպես նա կարող է լավագույն կերպով անցկացնել այս կամ այն պարապմունքը, ինչ մօմենտների վեա հատուկ ուօպերատուրան դրանել, ինչպես պատասխանել կուսակցական ների այս կամ այն արակուսելի հարցերին, ինչպես կազմել պարապմունքների ծրագիրը։

Միայն ապարատի աշխատողներով այստեղ յուա գնալ չի կարելի։ Այդ պատճառով, պրոպագանդիստների ու ագիտատորների հրահանգման գործում, ինչպես և ամբողջ պրիտացիոն պրոպագանդիստական աշխատանքի գրվածքի համար, հակայական նշանակություն ունի պրոպագանդիստների ու ագիտատորների ակտիվը, գորը պետք ե ստեղծվի մարդկուներին, յերկրացին կոմիտեներին և ազգային կոմիլուսներին կից, նույնպես և քաղկեդոներում ու զրջկոմներում։ Կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժիններն իրենց աշխատանքում պետք ե հենվեն այդ ակտիվի վրա։

Վոչ պակաս նշանակություն ունի պրոպագանդիստների և ագիտատորների պատճառում պատրաստման ու վերապատրաստման դասընթացների համապատասխան դրվածքը։ Այդ դասընթացներին ամեն տարի հատկացվում են հակայական միջոցներ։ Տեղական կազմակերպություններն այդ դասընթացների համար առանձնացնում են շենքեր։ Այդ դասընթացներին կենտկոմիք ոգնություն ե ցույց տրվում ինչպես նրանց ծրագրերի մշակման միջոցով, այնպես ել դասատուններ ուղարկելով։ Իսկ մինչդեռ այդ դասընթացները հաճախակի անցնում են ապարագում, նրանց խայտառակ կազմակերպություններով։ Այսպես, որինակ, Սվերդլովսկի մարզկոմն այս ամառ կազմակերպեց մարդացին դասընթացներ։ Սակայն այդ դասընթացների համար իրականում վոչ վոք չեր զբաղվում պրոպագանդիստների ընտրությամբ։ Մարդկոմի կուլտուրոպի վարիչ ընկ։ Ուղյուկովը պրոպագանդիստների ընտրության կարևորագույն գործը հանձնարարեց դրա համար անպետք աշխատողների, ինքը դասընթացներում նույնիսկ չեր լինում։ Դրա հետեանքով, 160 ուսանողից պարապմունքների վերջում պրոպագանդիստական աշխատանքի համար հնարավոր յեղակ առանձնացնել միայն կեսը։

Այս խայտառակ գետք ե: Այսպիսի գործերի համար անհրաժեշտ ե ամենախիստ կերպով պատասխանատվության յենթարկել առաջին հերթին կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժիններին: Պրոպագանդիստների դասընթացների և դպրոցների համար, այդ դասընթացների ուկնդիրների ընտրության համար, նրանց աշխատանքի դրության համար կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժինների վարչիները պատասխանատու յեն անհիատապես:

Վերջում պետք ե կանգ առնել նաև ագիտացիոն աշխատանքի վրա: Ստորին ագիտացիոն աշխատանքը տամենից բարձիրողի արված դրության մեջ ե: Զրուցարարների, լրագիր կարդացողների, ստորին ագիտատորների հետ վոչ վոք չի պարագում: Նրանք ընտրվում են պատահականորեն: Ազիտկոլեկտիվները ձեռնարկություններում այլևս գոյություն չունեն և այդ ստորին ագիտատորներով, վորոնք հսկայական պատասխանատու պարզաբանման աշխատանք են կատարում լայն մասսաների մեջ, վոչ մի աշխատանք ներկայում չի կատարվում:

Յեթե խոսենք բաժինների խնդիրների մասին ագիտացիայի բնագավառում, ապա ամենից առաջ պետք ե ձեռնարկել ստորին ագիտատորների ողակից: Երանց նույնպես հարկավոր ե նաև աշխատանքի վետ ե նրանց կազմակերպել, պետք ե նրանց համար կարգի դնել սիստեմատիկ ոգնությունն ու նրահանգումը: Դա կարևորագույն, առաջնահերթ աշխատանք և ագիտացիայի բնագավառում:

Մրանք են համառոտ կերպով կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժինների խնդիրները նրանց աշխատանքի մկրնական փուլում:

«Партийное строительство» № 18, 1935 г.

Ա. Ստեցկի

ՍՏԱԼԻՆԻ ՃԱՌԸ ՅԵՎ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հազվադեպ եր, վոր վորեւե խորհրդակցություն առաջ բերեք այդպիսի զորեղ արձագանք մեր յերկում, ինչպես ստախանուվականների խորհրդակցությունը: Այն քննարկեց ու քննարկվում ե իր մանրամասնություններով բոլոր ձեռնարկություններում, տրանսպորտում, կոլտնտեսություններում, խորհրդային տնտեսություններում: Ստախանովյան շարժման, կոմունիզմի համար մղվող պայքարի այդ նոր սկսված համաժողովրդական վերելքի ալիքը որեցը ավելի ու ավելի լայնորեն հեղեղում է յերկիրք: Բազմանում են ստախանովական-բուսիգինականների շարքերը ֆարբեկաններում ու գործարաններում, տրանսպորտում, աճում են առաջավոր ենթուղիաստների խմբերը: Արդեն վոչ միայն առանձին ձեռնարկությունները, այլ և արդյունաբերության խոշորագույն ճյուղերը աշխատանքի բարձրացած արտադրողականության հիման վրա վերանայում են իրենց պլանները, հայտաբերում են նոր հնարավորություններ, պատրաստվում են յերկրորդ հնգամյակը կատարելու չորս տարում:

Ստախանովականների առաջին Համամիութենական խորհրդակցությունն սկսվեց առանց սովորական կազմակերպական նախապատրաստման: Այն սկսվեց Քաղբյուրոյի անդամների զրոյցից Խորհրդային Միության բոլոր ծայրերից պրոլետարական Մեծ հեղափոխության XVIII տարեդարձի հանդեսներին Մոսկվա յեկաձայն ստախանովյան շարժման պիոններների հետ: Այնուհետև այն տեղափոխվեց Կրեմլի մեծ պալատը և այնտեղ արդեն յերկացին

ստախանովականների նոր ջոկատներ Մոսկվայից, Լենինգրադից՝ Ռւսաբնայից, Դորկուց և Խորհրդային Միության այլ արդյունաբերական շրջաններից ու տրանսպորտից:

Այստեղ յեկան մարդիկ, վորոնք ինքները, իրենց հերոսական աշխատանքով, իրենց մարտական որինակով նվաճեցին այդ խորհրդակցությանը մասնակցելու իրավունքը։ Այստեղ յեկան աշխատանքի բարձր արտադրողականության վարպետները, վորոնք գերակատարում ու տապալում են հին տեխնիկական նորմաները, մարդիկ, վորոնք սկիզբ դրին ստախանովյան-բուօփինյան շարժմանը, վորը ծավալվում է մեր ամբողջ յերկում։

Այստեղ ժողովրդի առաջնորդ ընկեր Ստալինը, Քաղըյուրոյի և կառավարության անդամները զրուցում եյին յերկրի լավագույն զավակների բազմահազար առւդիտորիայի հետ։ Այստեղ հանդես եյին գալիս ստախանովականները, Խորհրդային Միության առաջավոր մարդիկ, վորոնք յերեկ միայն հանքանորում եյին, կանգնած եյին դազգյահի մոտ և այսոր արդեն նորից աշխատում են այստեղ։

Ընկեր Ստալինի և Քաղըյուրոյի անդամների յելույթները և ստախանովականների ճառերն աշխույժ կերպով քննարկվում են ամբողջ յերկում։ Նրանց կարգում, ուսումնասիրում են, նրանցով սովորում են աշխատել սոցիալիստականորեն։

Այդ ամբողջ շարժման պատմական իմաստը խորհրդակցության ժամանակ ի հայտ բերվեց ընկեր Ստալինի ճառում, վորը լուսավորեց ստախանովյան շարժումը նոր լույսով և թույլ տվեց տեսնել նրա մեջ այն, ինչ սովորական աչքի կարողությունից բարձր եր։

Իր ճառում ընկեր Ստալինը խոսում եր այն մասին, վոր 1905 թվին, ստեղծելով Բանվորական Պատգամավորների Խորհուրդներ, բանվորներն իրենք չեյին հասկանում նրանց մեծ նշանակությունը։ Խորհուրդներն ստեղծվեցին բանվորական մասսաների նախաձեռնությամբ և ստեղծագործությամբ, բայց հարկավոր եր Լենինի հանձարը, վորպեսզի Խորհուրդների մեջ հայտաբերվեր պրոլետարական դիկտատուրայի համաշխարհային պատմական ձևը, ցույց տրվեր այն նշանակությունը, վոր ունեն Խորհուրդները պրոլետարական հեղափոխության ավարտման գործում և կապիտալիստիկիներում, վորտեղ ամեն ինչ հիմնված է շահագործման վրա, վորտեղ տիրապետում և ամենադաժան դասակարգությունը կարող է լինել վոչ մասսայական նախաձեռնության, վոչ բանվորների, աշխատավորների մասսայական շարժում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Նույնը պետք է ասել և ստախանովյան շարժման մասին։ Բանվորական մասսաների նախաձեռնությամբ ու ստեղծագործությամբ առաջացած այդ շարժման համաշխարհային պատմական նշանակությունը յերեւմ է միայն այժմ, յերբ Ստալինի հանձարը յերեւան հանեց ստախանովյան շարժման եյությունը։ Հո գաղտնիք չե, վոր գտնվում եյին մարդիկ, վորոնք ասում եյին, թե ստախանովյան մեթոդները կիրառելի յեն միայն Դոնբասում, վոր մենք երբ թե կարիք չունենք մտածելու ստախանովյան մեթոդների մասին, վորովհետև մեղ մոտ առանց այն ել պլանը կատարվում ու թեթևակի գերակատարվում է։

Բայց նույնիսկ այնտեղ, վորտեղ այդ շարժումը յուրացըրին, նրա հսկայական նշանակությունը գնահատվում եր միայն աշխատանքի արտադրողականության բարձրացման տեսակետից։ Հարկավոր եր հանձարի խորաթափանցությունը, վորպեսզի այդ փորձի մեջ, վորը գեռս հանդիսանում է առաջավորների փորձ և միայն այժմ է սկսում լնդրկել մեր բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները և վերածվում է ժողովրդական հզոր շարժման, տեսներ այն վերջնական նպատակին անցնելու, կօմունիզմին անցնելու սազմը, հատիկն ու պայմանները, վոր մեր կուսակցությունը գրել ե իր մարտական դրոշի վրա։

* * *

Այդ նշանավոր շարժումը կարող եր ծագել միայն մեր յերկրում։ Վոչ մի տեղ, վոչ մի այլ յերկրում այդպիսի շարժում յերեւակայելի չե։ Կապիտալիստիկիներում, վորտեղ ամեն ինչ հիմնված է շահագործման վրա, վորտեղ տիրապետում և ամենադաժան դասակարգությունը կարող է լինել վոչ մասսայական նախաձեռնությունը, վոչ բանվորների, աշխատավորների մասսայական նախաձեռնության, վոչ բանվորների, աշխատավորների մասսայական շարժում աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Ընդհակառակը, այնտեղ աշխատանքի արտադրողականության ամեն մի բարձրացում, ամեն մի նոր գյուտ, ամեն մի նոր կատարելագործում, նոր մեքենաները, — այդ բոլորն ուղեկցվում են մեծագույն զրկանքներով, բանվոր դասակարգի քայլքայումով։

աշխատավոր բնակչության թշվառության ու տառապանքների մեծացումով:

Այն մասին, թե ինչպես կործանարար և անդրադառնում բանվորի վրա մեքենայի յուրաքանչյուր կատարելագործում կամ նոր մեքենայի մուծում կապիտալիզմի պայմաններում, Մարքսը գրում եր հետևյալը.

«Քաղաքատնտեսության բոլոր խելամիտ ներկայացուցիչներն ընդունում են, վոր յերբ նոր մեքենա յի մուծվում, այդ բանվորների վրա ժանեախտի պես և ներգործում այն ավանդական արհեստներում ու մանուֆակտուրաներում, վարանց հետ ամենից առաջ և մրցում մեենան»¹:

Մի այլ տեղ Մարքսը գրում ե. «Յերբ մեքենան կամաց կամաց տիրապետում և արտադրության մի ասպարեզ, այստեղ նաև իր հետ մրցող բանվորական խավերում խրոնիկական աղքատություն և առաջ բերում: Յերբ անցումն արագ և կատարվում, մեքենայի ազդեցությունը կրում և մասսայական և սուր ընույթ:

Համաշխարհային պատմությունը չի ընձեռում մի ավելի սարսափելի տեսարան, քան բամբակեղեն գործող անգլիական ջուր հակների դանդաղ վոչչացումը, վոր տասնամյակներ տեսեց և վերջապես ավարտվեց 1838 թվականին: Նրանցից շատերը սովամահ յեղան, շատերն իրենց ընտանիքների հետ յերկար ժամանակ քարշաքար ելին տալիս իրենց թշվառ գոյությունն որական 2½ պենսով²:

Ընդհակառակը, անգլիական բամբակեղեն գործող մեքենաները սուր ներգործություն ունեցան Արեելյան Հնդկաստանում, վորի ընդհանուր նահանգապետը 1834—1835 թվականներին հավաստում եր. «Այս թշվառությունը հազիվ թե նմանն ունենա առեւրի պատմության մեջ. Հնդկաստանի հարթավայրերն սպիտակին են տալիս բամբակեղեն գործող ջուրհակների վուկըներից»³:

Նկարագրելով և վերլուծելով կապիտալիստական հասարակության զարգացումը, Մարքսը հաստատում ե, վոր մեքենաներ մուծելը, հաստատուն կապիտալի մեծանալը տանում են դեպի ար-

դյունաբերական պահեստի բանակի, այսինքն գործազուրկների բանակի ստեղծումը: Վորչափով վոր մի բնեուում աճում և կենտրոնանում է հասարակական հարստությունը, մյուս բեեուում ավելանում են մասսայի տառապանքներն ու չքավորությունը, մեծանում և գործազուրկների բանակը:

Կարող են ասել, վոր Մարքսն այդ մասին գրել և վաղուց, վոր դա վերաբերում ե այն ժամանակին, յերբ կապիտալիզմը գնում եր գեղի վերելք և դուրս եր մղում արտադրության մյուս ձեերը, վոր այժմ այլ դրություն ե: Մինչդեռ հենց այժմ, յերբ կապիտալիզմն իր վերջին փուլումն ե — իմպերիալիզմի փուլում, ընդհանուր ճգնաժամը փուլում, — այդ անլուր տառապանքներն աշխատավոր մասսաների համար բաղմապատկվել են: Յեթե առաջ պահատի բանակը հարյուր հազարավոր մարդկանցից եր կազմված, այժմ նա կազմված և միլիոններից:

Վերջին տարիները — ճգնաժամի տարիները — կապիտալիզմի յերկիրներում մի ամբողջ շարք տեխնիկական կատարելագործումներ մոցվեցին և, որինակ, Անգլիայում արտադրությունը՝ մի քիչ բարձրացավ և հասավ 1929 թվի մակարդակին:

Բայց ինչի՞ հանգավ այդ:

1929 թվականին արտադրությունից դուրս մնացած բանվորների քանակը մի միլիոնից մի քիչ ավելի յեր, իսկ ներկայումս, գործազուրկների բանակում, չքավորության բանակում, այն բանակում, վորն ապագայի վրա վոչ մի հույս չունի, այդ բանակում Անգլիայում յերկու միլիոնից ավելի մարդ կա: Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործազուրկներն, առանց ընտանիքի անդամների, կազմում են 11 միլիոն:

Ազգերի իիգայի 1934—1935 թ. հաշվետվության մեջ կարելի յե կարդալ հետեւյալը. «... Գործազրկությունը 1934 թվականին յերկու անգամից ավելի բարձր եր, քան 1929 թվականին: Անհերքիլի յե թվում այն յեզրակացությունը, վոր յեթե առեւրի վորեւ զգալի լայնացում տեղի չունենա, ապա, չնայած արտադրանքի նշանակելի լայնացմանը, ըոլոր կապիտալիստական յերկիրներում դարձյալ կմնա գործազրկության հարաւել խոցը»:

Այսպիսով այն, ինչ ասում եր Մարքսը, ել ավելի մեծ ուժով գործում ե այժմ: Դյուտերը, կատարելագործությունները, նոր մեքենաների մուծումը կապիտալիզմի պայմաններում բանվորների

¹ Կ. Մարքս, «Կապիտալ», I հ., եջ 344, 8-րդ հրատ.

² Կ. Մարքս, «Կապիտալ», I հ., եջ 331, 8-րդ հրատ.

³ Կ. Մարքս, «Կապիտալ», I հ., եջ 331, 8-րդ հրատ.

վրա ներգործում են վորպես ժանտախտ, բանվորական մասսաների համար ուղեկցվում են մեծագույն տառապանքներով: Այս պատճառով կապիտալիստական յերկիրների բանվորների մոտ աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու ձգտում, աշխատանքի լավագույն ցուցանիշների համար մասսայական շարժում չի ել կարող լինել: Ցեթեւ բանվորն այստեղ բարձրացնում ել և աշխատանքի արտադրողականությունը, նա այդ անում ե նրա համար միայն, վոր վախենում ե գործարանից դուրս շպրտվելուց և գործազուրկների բանակն ընկնելուց:

Բայց բանն այդ չե միայն: Բանը նաև այն ե, վոր ժամանակակից կապիտալիստը բանվորի մասին ունեցած իր հայացքով հեռու չի գնացել ստրկի նկատմամբ ստրկամիոջ ունեցած հայացքից: Ստրկամերն իր ստրուկին անվանում ե instrumentum vocale, այսինքն խոսող գործիք, և բանվորի տարբերությունն անամից ու մեքենայից տեսնում եր նրանում միայն, վոր անասունը instrumentum semivocale-ն կիսախոս գործիք ե, իսկ մեքենան instrumentum mutum համը գործիք ե:

Բայց այժմ ել կապիտալիստական ձեռնարկատիրոջ համար, կապիտալիստական ճարտարապետի համար բանվորը վոչ այլ ինչ ե, յեթե վոչ նույն instrumentum vocale—մի գործիք, վորն իր զգացմունքներն ընդունակ ե արտահայտելու խոսքերով:

Ահա թե ինչ ե ասում բանվորի մասին կապիտալիստական ուղիղութացման հայտնի թեորետիկ Թեյլորը. «Այն մարդը, վոր ֆիզիկապես ընդունակ ե ձողեր տեղափոխելու, վորը բավականաչափ ֆլեգմատիկ ու բթամիտ ե, վոր այդ գործն իր համար պրոֆեսիա յե ընտրել, հազվագեղ ե, վոր ընդունակ ե լինում հասկանալու ձողերի տեղափոխման գիտությունը: Ցեվ իր աշխատանքը կատարելու համար հարմարված բանվորի անընդունակությունը հասկանալու նրա կատարման գիտությունն ավելի ու ավելի ակնքախ ե գառնում այն չափով, ինչ չափով մենք ավելի բարդ աշխատանքների յենք անցնում» (Թեյլոր, «Թեյլորը թեյլորիզմի մասին», եջ 59):

Մի այլ տեղ նա գրում ե. «Փաստորեն, մեխանիկական արտադրության բոլոր ճյուղերում ամեն մի ակտ հիմնավորով գիտություն իր ծավալով ու բովանդակությամբ այնքան նշանակա-

լից ե, վոր աշխատանքի գործնական կատարման համար ամենից շատ հարմարված բանվորն անընդունակ ե հասկանալ այդ գիտությունը, լինի դա կրթության բացակայության հետեւանքով, թե պակաս մտավոր ձիրքի հետևանքով» (Թեյլոր, «Թեյլորը թեյլորիզմի մասին», եջ 76—77):

Ահա կապիտալիստական ստրկատերերի տեսակետը բանվորի վերաբերմաբ:

Պարզ ե, վոր միայն մեր յերկում, վորը վերջ ե տվել կապիտալիստական տաժանքին, վորն ընդմիջու ջախջախել ե շահագործման հասարակակարգը, արտաքսել ե կապիտալիստական ստըրկատերերին, վորն իրեն նպատակ ե դրել բանվոր գասակարգի կուլտուր-տեխնիկական և քաղաքական վերելքը, վորն իրեն նպատակ ե դրել վոճաչացնել մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը,—հնարավոր ե այն, վոր մենք անվանում ենք ստախանովյան շարժում: Ժողովրդական մասսաների այդ մեծ վերելքը, նրանց հոգատարությունն աշխատանքի արտադրողականության մասին, նրանց հոգատարությունը հասարակական հարստության ավելացման մասին հնարավոր ե միայն մեր յերկում: Այդ բոլորը մեզ մոտ հնարավոր ե նրա համար, վոր մեր հասարակակարգը հիմնված ե հասարակական աշխատանքի կազմակերպման բոլորովին այլ սկզբունքների վրա:

Առաջավոր կոմբայնավարների ու կոմբայնավարուհիների խորհրդակցության մեջ ընկեր Ստալինը կոմբայնի որբնակով ցույց տվեց, թե ինչ ե նշանակում մեր յերկում մեքենայի ամեն մի կատարելագործում և նոր մեքենայի մուծում:

«Ինքներդ գիտեք,—ասում եր ընկեր Ստալինը այդ խորհրդակցության մեջ,—վոր հնձիչով կատարված բերքահավաքը հացահատիկի հսկայական կորուստներ ե տալիս: Ակզրում հնձել հետո խրձեր կապել, հետո գեղ դնել, հետո հնձածը կը կը կալմիչների մոտ—այս բոլորը կորուստներ են ու կօրուստներ: Ամենքն ընդունում են, վոր բերքահավաքի այս սիստեմով մենք կորցնում ենք բերքի մուտավորապես 20—25 տոկոսը: Կոմբայնի մեծ նշանակությունն այն ե, վոր նա այդ կորուստները աննշան նվազագույնի յե հասցնում: Դորձին տեղյակ մարդիկ ասում են, վոր հնձիչով կատարած բերքահավաքը, մնացած հավասար պայմաններում, հեկտարին 10 փութպակաս բերք ե տալիս, քան կոմբայնով կատարած բերքահա-

վաքը: Յեթե վերցնենք 100 միլիոն հեկտար հացահատիկային ցանք, իսկ մենք, ինչպես հայտնի յե, գրանից անհամեմատ ավելի շատ ունենք,—ապա հնձիչներով բերքահավաքի կորուսմաները կկաղմեն մի միլիարդ փութ հացահատիկ: Փորձեցեք այժմ այդ հարյուր միլիոն հեկտարի բերքահավաքը կոմբայնով կատարել, նկատի ունենալով, վոր կոմբայնը վատ չի աշխատում,—և դուք մի ամբողջ միլիարդ փութ հացահատիկ կշահեք: Ինչպես տեսնում եք, փոքր թիվ չե:

Անա թե վորքան մեծ ե կոմբայնի և կոմբայնի վրա աշխատող մարդկանց նշանակությունը»:

Կգտնվի մեզ մոտ գոնե մի մարդ, վորը չի ծափահարի այդպիսի մեքենային և վորը չի բարձրացնի իր յերկու ձեռքն ել, վորը ավելի շատ լինեն մեքենաները, նրա համար, վոր այդ ճանապարհով ստանանք ափելորդ մի միլիարդ փութ հաց: Միթե վորեւ մեկը կարող ե մտածել վոր մեզ մոտ հնարավոր ե գործազրկություն կամ ճգնաժամ, կամ վոր այդ մեքենան կարող ե ինչ-վոր քայլայում առաջացնել:

Կապիտալիզմի ժամանակ մեքենան, ինչպես ասում ե Մարքսը, բանվորների համար ժանտախտ ե, վորը նրանցից քամում ե բոլոր հյութերը:

Այնտեղ մեքենան շահագործման գործիք ե: Մեզ մոտ մեքենան ավելացնում ե բանվոր դասակարգի տրամադրության տակ գտնված հարստությունները: Ուստի մեր բանվորները վողջունում են ամեն մի նոր, կատարելագործված մեքենա: Այդ պատճառով մեզ մօս հերոսը նա յե, ով կարող է ափելի լավ տիրապետել այդ մեքենային:

«Վարձու աշխատանք և կապիտալ» իր հայտնի բրոշյուրում Մարքսը գրում ե, վոր կապիտալիզմի պայմաններում բանվորն «աշխատանքը չի համարում իր կյանքի մի մասը, այլ ընդհակառակը, աշխատել նրա համար՝ նշանակում ե զոհաբերել իր կյանքը: Յեկ բանվորի համար, վորն որական 12 ժամ գործում ե, մանում, հորատում, սրում, կառուցում, փորում, քար կտրում, բեռներ կրում և այլն, միթե այդ բանվորի համար 12 ժամվա գործելը, սանելը, հորատելը, ճախարակի վրա աշխատելը, փորելը, քար կտրելը, իր կյանքի արտահայտությունն ե, իր կյանքն ե: Ընդհակառակը, նրա կյանքն սկսվում ե այն ժամանակ միայն, յերբ վերջանում ե

այդ գործունեյությունը, այն ժամանակ, յերբ նա ճաշի յե նըստում, պանդոկ գնում, անկողին մտնում»¹:

Նոր հարաբերությունները, վոր ստեղծել ե սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում, արմատում փոխում են բանվորի վերաբերմունքը դեպի աշխատանքը: Հաստոցագործարանի (Մոսկվա) ստախանովական պատանի նադյա թեղբորոդովան գունեղ կերպով ընդհանրացնում ե այդ միտքը. «Մենք չնշում ենք սոցիալիզմով և յուրաքանչյուր որ զգում ենք ունեու, կուտուրական, ուրախ կյանքը»: Իսկ նրա ընկերուհի կլավիիա կրուգիշինան, վորը գերազանցել եր հաստոցագործարանի լավագույն ստախանովական ընկ. Գուղովի նորման, ամբողջ հոգով բացականչում ե. «Ազնիվ խոսք, աշխատանքը դարձել ե ուրախ: Գնում եմ փողոցով ու ժպտում եմ, տանը ծիծաղում եմ: Մայրս ինձ հարցնում ե. «Ի՞նչ ես ծիծաղում ամբողջ ժամանակ»: Իսկ յես ասում եմ. «Լավ եմ աշխատում և սիրտս ուրախ ե»: Հոկտեմբերի 20-ին մեր ցեխի վարիչը նվիրեց ինձ ծաղիկների մի հիանալի փունջ: Յես այնքան գոհ եյի, կանգնել եմ ծաղիկների փնջով և ծիծաղում եմ: Իմ շուրջը նույնպես ծիծաղում են, պարում են իմ ուրախությամբ: Յերեկոյան իմ բնակարանս յեկան ցեխի ներկայացուցիչները և շնորհավորեցին իմ ծնողներին հաղթանակիս համար:

Աղջիկներ, յես յերբեք այնքան ուրախ ու գոհ չեմ յեղել, ինչքան հիմա»:

Մեզ մոտ ամեն մի բանվորի համար պարզ ե, վոր նա սոցիալիստական յերկրի համար և աշխատում. մեզ մոտ ամեն մարդ գիտե, վոր նրա աշխատանքը Խորհրդային Միության ժողովուրդշների ամբողջ կոլեկտիվ հասարակական աշխատանքի մասնիկն ե, վոր արտադրության բոլոր միջոցները հասարակական սեփականություն են:

Մեր հարաբերությունները, մեր սոցիալիստական հայրենիքում յեղած հարաբերությունները քողարկված չեն ապրանքային ֆետիշիզմի վոչ մի քողով. դրամական և ապրանքային վորեւ հարաբերություններով: Մեզ մոտ յուրաքանչյուր բանվոր, յուրաքանչյուր կոլտնտեսական գիտե, վոր իր բնագավառում աշխա-

1 Կ. Մարքս, «Վարձու աշխատանք և կապիտալ», Հայկուսհրատ, 1932 թ., եջ 14:

տելով, իր սոցիալիստական հայրենիքի հարստություններն ավելացնելով, նա իր համար ել եւսեղծում ունեոր, հարուստ կյանքի պայմաններ: Մեզ մոտ յեկել եւ այն դարաշրջանը, վորի մասին խոսում եին սոցիալիզմի ուսուցիչները, յերբ բոլոր հարաբերությունները դառնում են պարզ ու թափանցիկ, յերբ տեղ չկատարեային կույր որենքներին, յերբ յուրաքանչյուրը գիտե, վոր նա հասարակության մասնիկն ե, մի աշխատավոր ընտանիքի մասնիկը և նա աշխատում ե իր համար և իր աշխատավորական ընտանիքի համար:

Ահա թե ինչու ընկեր Ստալինն իր յելույթում ասում եր, վոր յուրաքանչյուր վոք, ով լավ ե աշխատում, ով աշխատում ե, ով աշխատանի արտադրողականուրյան որինակներ ե ցույց տալիս, նա նարգելի հասաւակական գործի ե, հերոս, քանի վոր աշխատանիր մեզ մու—դա հասարակական: սոցիալիստական աշխատանի ե և նա փառի գործ ե, պատվի գործ, արիուրյան և հերոսուրյան գործ:

Ինքնին հասկանալի յե, վոր վոչ մի նման բան կապիտալիզմի յերկիրներում չկա և չի կարող լինել: Չկա և չի կարող լինել. վոր բանվոր հանքափորը կառավարության անդամների հետ քըննարկի իր աշխատանքի մեթոդները, բացատրի այս մեթոդներն ամբողջ յերկրի առջև, խոսի նրանց մասին ամբողջ յերկրի հետ: Այդ հնարավոր ե միայն մեզ մոտ, վորտեղ աշխատանքը հասարակական գործի յե վերածվել, մի գործի, վորն ուղղված ե դեպի մեր սոցիալիստական հայրենիքի հզորության և հարստության ամրացումը:

Ստախանովականների առաջին Համամիութենական խորհրդակցությանն արտասանած իր պատմական ճառում ընկեր Ստալինն ասում եր.

«Ստախանովյան շարժման յերկրորդ աղբյուրը մեզ մոտ շարհագործման բացակայությունն ե: Մարդիկ մեզ մոտ վհչ թե շահագործողների համար, վհչ թե մակարությներին հարստացնելու համար են աշխատում, այլ իրենց համար, իրենց դասակարգի համար, իրենց խորհրդային հասարակության համար, վորտեղ իշխանության գլուխ են կանգնած բանվոր դասակարգի լավագույն մարդիկ: Այդ պատմառով ել աշխատանքը մեզ մոտ հասարակական նշանակություն ունի, նա պատվի ու փառքի գործ ե: Կապիտալիզմի ժամանակ աշխատանքը մասնավոր, անձնական բնույթ

ունի: Շատ արտադրեցիր, շատ ել ստացիր և ապրիր քեզ համար ինչպես ուզում ես: Քեզ վոչ վոք չի ճանաչում և ճանաչել ել չի ուզում: Դու աշխատում ես կապիտալիստների համար, զու նրանց հարստացնում ես: Յեվ այլ կերպ ինչպես կարող եր լինել: Հենց դրա համար ել վարձել են քեզ, վոր դու հարստացնես շահագործողներին: Դու համաձայն չես զրան՝ մտիր գործազուրկների շարքերը և քարշ տուր գոյությունդ՝ ինչպես կարող ես,—ուրիշներին, ավելի համակերպվողներին կգտնենք: Այդ իսկ պատճառով ել սարդկանց աշխատանքը բարձր չի գնահատվում կապիտալիզմի ժամանակ: Հասկանալի յե, վոր այդ պայմաններում մտախանովյան շարժումը չի կարող տեղի ունենալ: Այլ բան ե խորհրդագոյին հասարակակարգի պայմաններում: Այստեղ աշխատավոր մարդը պատիվ ունի: Այստեղ նա աշխատում ե վհչ թե շահագործողների համար, այլ իր համար, իր դասակարգի համար, հասարակության համար: Այստեղ աշխատավոր մարդը չի կարող իրեն լքված ու մենակ զգալ: Ընդհակառակը, մեզ մոտ աշխատավոր մարդն իրեն զգում ե իր յերկրի ազատ քաղաքացի, մի տեսակ՝ հասարակական գործիչ: Յեվ յեթե նա լավ ե աշխատում և հասարակությանը տալիս ե այն, ինչ կարող ե տալ,—նա աշխատանքի հերոս ե, նա փառքով ե պսակվում: Հասկանալի յե, վոր միայն այդպիսի պայմաններում կարող եր ծնունդ առնել ստախանովյան շարժումը:

Այս, ինչ տեղի ունեցավ ստախանովականների խորհրդակցության մեջ, այնտեղ, վորտեղ յելույթ ունեցան աշխատանքի սոցիալիստական կազմակերպման պիոններները. նոր հասարակակարգի հերոսները,—դա սոցիալիստական շինարարության նվաճումներից մեկն ե: Այդ ել հենց սոցիալիզմն ե:

* *

Խոսելով իր յելույթում ստախանովյան շարժման նշանակության ու բնույթի մասին, ընկեր Ստալինն ընդգծեց, վոր այդ շարժումը ներկայումս աներևակայելի կլիներ, յեթե չլիներ նոր տեխնիկան, վորն ստեղծվել եր վերջին ժամանակներաւ:

Առաջին և յերկրորդ հնգամյակների տարիներին մեր կուսակցությունը և բանվոր դասակարգը բոլոր ուժերը լարեցին նոր

տեխնիկական բազա ստեղծելու համար: Առաջին հնդամյակի տարիներին հիմնական ներդրումներն ամբողջ յերկրում կազմեցին 52 միլիարդ ռուբլի, Յերկրորդ հնդամյակի տարիներին, անցած յերեք տարում, ներառյալ 1935 թվականը, հիմնական ներդրումները կկազմեն 62 միլիարդ ռուբլի: Հսկայական քանակությամբ առաջավոր ձեռնարկություններ գործարկվել են արդեն:

Յեթե նայենք, թե վորտեղից ենք մենք ներկայումս ստանում արտադրանքը, կպարզվի, վոր արտադրանքի մեծ մասը նոր ձեռնարկություններից և տեխնիկալի վերջին խօսիվ վերազինված ձեռնարկություններից ե ստացվում:

Որինակ, պարզվում ե, վոր ծանր արդյունաբերության ժողկում նրա արտադրանքի վերամշակման մասում 18 միլիարդ ռուբլու պատրաստի արտադրանքից 73 տոկոսը տալիս են նոր ձեռնարկությունները և այն ձեռնարկությունները, վորոնք հեղափոխության տարիներին իրենց հիմնական կապիտալը ավելացրել են 2—4 անգամ: Մեքենաշինական արդյունաբերության մեջ նոր և նոր վերակառուցված ձեռնարկությունները տալիս են արտադրանքի 75 տոկոսը: Յեթե վերցնենք քիմիական արդյունաբերությունը, ապա նոր ձեռնարկությունները տալիս են քիմիական արդյունաբերության ամբողջ արտադրանքի 84 տոկոսը:

«Ահա մեր արդյունաբերության վերազինման մի վորոշ բնութագրում: 1930 թվականին Գերմանիայում յուրաքանչյուր բանվորի եներգագինվածությունը կազմում եր տարեկան 3000 կլվ. ժամ: Մեզ մոտ, մեր Խորհրդային յերկրում, յուրաքանչյուր բանվորի եներգագինվածությունը կազմում ե տարեկան 3500 կլվ. ժամ: Եներգագինվածության տեսակետից մենք գերազանցեցինք 1930 թվականի Գերմանիային:

Հենց այդ նոր տեխնիկան, վորն ստեղծվեց մեր յերկրում, հանդիսացավ ստախանովյան շարժման անհրաժեշտ պայմաններից մեկը: Բայց ընկեր Ստալինն ասում եր, վոր այդ տեխնիկան կմնար մեռած, յեթե մեզ մոտ առաջ չգային նոր մարդիկ, վորոնք տիրապեսեցին այդ տեխնիկային, մարդիկ, վորոնք դաստիարակել ե մեր կուսակցությունը, վորոնք տհագին բարձրացել են իրենց կուլտուրանիկական անվան մեջ:

Ստախանովյան շարժման պիտուներներն ու առաջավորներն այն մարդիկ են, վորոնք պատրաստություն ստացան, անցան տեխնիկա-

կան կուրսերը, հանրակրթական դպրոցը և լավ ուսումնասիրեցին իրենց գաղղրական հենց այդ հիմքի վրա, բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հիմքի վրա հնարավոր յեղան այն արգյունքները, այն նվաճումները, ստախանովյան շարժման այն ծավալումը, վոր մենք ներկայումս ունենք:

Կուլտուր-տեխնիկական մակարդակի այդ աճումը կարելի յետեսնել ամեն մի խոշոր ձեռնարկության մեջ: Վերցնենք, որինակ «Կալիբր» գործարանը (Մոսկվա): Այստեղ ընդամենը 2085 բանվոր կա, վորոնցից մինչև 22 տարեկան 869 մարդ—համարյա կեսը: Տեխնիմիմումը յուրացրել են 784 ընկեր, ֆաբրութումն ավարտել են 320 ընկեր, զանազան տեխնիկական դասընթացներում սովորում են 490 ընկեր: «Մանոմետր» գործարանում (Մոսկվա) ընդամենը 1700 բանվոր կա, նրանցից՝ մինչև 30 տարեկան 1000-ից ավելի: տեխնիմիմումը յուրացրել են 1031 մարդ, ֆաբրութումն ավարտել են 204 մարդ, տեխնիկական կուրսերում սովորում են 110 ընկեր: «Կրասնի պրոլետարի» գործարանում (Մոսկվա) ընդամենը 4362 բանվոր կա, նրանցից մինչև 30 տարեկան 2150 մարդ: տեխնիմիմումը յուրացրել են 1500 մարդ, ֆաբրութումն ավարտել են 442 մարդ, զանազան տեխնիկական կուրսերում սովորում են 593 ընկեր:

Մեր գործարանները, մեր ձեռնարկությունները միևնույն ժամանակ քաղաքական ու տեխնիկական գիտելիքների և ընդհանուր կուլտուրայի խոշորագույն բուժարաններ են:

Տարեցտարի բարձրանում և բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակը, և զա ստախանովյան շարժման պայմաններից մեկն ե: Ահա հենց այստեղ և ստախանովյան շարժման այն մեծ նշանակությունը, վորի մասին ասում եր ընկեր Ստալինը: Ընկեր Ստալինն ասաց, վոր այստեղ, ստախանովյան շարժման մեջ, բանվոր զամակարգի այդ կուլտուր-տեխնիկական վերելքի մեջ ստեղծված են մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրության վօշնացման ներքանի մարդկան աշխատանքի հակադրության այդ վոչչացումը կոմունիստական հասարակության հիմնական գծերից մեկն ե:

Առաջ մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրության վոչչացման հարցը դրվում եր ընդհանուր նպատակների ու խընդիրների բնագավառում: Թէ Մարքսի և Լենինի մոտ մենք հարցի

միայն ընդհանուր դրվածքն ենք գտնում: Այլ կերպ չեր ել կարող լինել, քանի վոր այն ժամանակ, այն աստիճաններից, դեռևս պարզ չելին այն հուները, վորոնցով կդնա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրության վերացումը:

«Զախլիկների» մեջ ի՞արկե գտնվում եյին առանձին իմաստակներ, վորոնք ասում եյին, վոր այդ հակադրությունը պետք ե վերացնել շտապ կարգով, և իբրև արմատական միջոց առաջարկում եյին ճարտարագետ տեխնիկական աշխատողների մակարդակն ուղղակի իջեցնել մինչև շարքային բանվորի մակարդակը, վորոնք արհամարհում եյին բարձրագույն կրթությունը և դեմք չելին բարձրագույն դպրոցը կործանելուն: Ընկեր Ստալինի ճառում տրված և սպառիչ քննադատությունն այդ ձախլիկ շաղակրատությամ, վորը կարող է միայն կոմունիզմը վարկարեկել: Ընկեր Ստալինը կոնկրետ կերպով ցույց տվեց այն հունը, այն ուղին, վորով կդնա մտավոր ու ֆիզիկական աշխատանքի հակադրության վոչչացումը: Այդ ուղին բանվոր դասակարգի կուտուրտինիկան վերելքը մինչև նարտագետնիկական աշխատողների մակարդակին հասնելն ե: Յեկ բանվոր դասակարգի առաջավորները, ստախանովականներն որինակ են ցույց տալիս այդ տեսակետից:

Առաջավոր ստախանովականները—դրանք մարդիկ են, վորոնք իրենց գործի տեխնիկային լավ տիրապետել են: Մի ամբողջ շարք ստախանովականներ կան, վորոնք ներկայումս իրենց դազգյահից դիպլոմային աշխատանք են կատարում:

Նրանք գիտեն իրենց տեխնոլոգիական պրոցեսը, նրանք գիտեն իրենց արտադրության գործիքները: Ստախանովական շարժման նախաձեռնողների մասին ընկ. Վարուժիովն ասում եր. «Դրանք ու իսկական պրոֆեսորներ են»: Այդ ճիշտ ե, քանի վոր ստախանովականները խորտակեցին բոլոր նորմաները, բոլոր ցուցումները, բոլոր հաշվումները, վոր առաջ անում եյին ամեն տեսակի պատկառելի ակադեմիկոսներ ու պրոֆեսորներ:

Ստախանովը ու Բուսիգինն այդպիսի պրոֆեսորներ են: Միայն որինակ չե, վոր ցույց են տալիս նրանք: Նրանք մյուս բանվորներին ել են հրահանգում աշխատանքի մեթոդների իմաստով: Նրանց դիմում են խորհուրդների, տեխնիկական կոնսուլտացիայի համար: Այդ մարդկանց նոր դերը տեսնելու համար

բավական ե բերել նիկիտա Խղոտովի որինակը, վոր Մերձմոսկովյան ավագանն ուղղություն տեղում ոգնություն ցույց տալու և այնտեղ Մերձմոսկովյան ավագանում ածխահանման նոր, լավագույն մեթոդներ մտցնելու համար:

Յերբ Դուսյա Վինոգրադովան խորհրդակցությանն ունեցած իր յելույթում պատմեց թե իր աշխատանքի մասին, նա պարզ և առանց վորեւ ցուցամուլթյան հայտարարեց. «Յեկ ահա, յերբ յես այդ արի, իմ հետեւ գնացին իմ հետեւրդները»:

Յերբ Կույրիչեվից յեկած հիանալի պատանի Կուրյանովը իր յելույթում պատմեց, թե ինքն ինչպես եր աշխատում, նա ել հայտարարեց թե՝ «Յես վոչ միայն ինքս եմ աշխատում, յես աշակերտ ունեմ, վորը մի ամբողջ գլխով ինձանից բարձր ե, և նա լուսում ե ինձ»:

Կամ վերցնենք ընկ. Սմետանինին: Նա գործում է վորպես իսկական հրահանգիչ-կազմակերպիչ: Նա հասավ այն բանին, վոր այն դազգյահները, վորոնց վրա նա աշխատում է, դրված են կուրտուրայի տանը «Սկորոխողի» մոտ: Նա այնտեղ վորոշված ժամերին ցուցադրում է իր աշխատանքի մեթոդները և հրահանգում ե բանվորներին:

Ահա թե բանն ինչումն է:

Ստախանովականները սոսկ բանվորներ չեն, վորոնք կանգնած են իրենց դազգյահի մոտ և ճգնում են «յերկար ուղրի» վաստակել: Նրանք վոչ միայն այն մասին են մտածում, վոր ավելի շատ վաստակեն: Դրանք մարդիկ են, վորոնք տիրապետել են գիտելիքներին, տիրապետել են իրենց գործի տեխնիկային և վորոնք արդեն այնպիսի մակարդակի յեն բարձրացել, վոր կարող են արտադրության մեջ հանդիսանալ հրահանգիչներ, գործի կազմակերպիչներ: Ստախանովական շարժման մեջ մենք տեսնում ենք այն կոնկրետ ուղիները, վորոնցով կդնա ֆիզիկական ու մտավոր աշխատանքի հակադրության վոչչացումը, տեսնում ենք՝ ինչպես են պատրաստվում սոցիալիզմից կոմունիզմին անցնելու պայմանները:

Ստախանովյան շարժումը նոր մարդիկ ե մեղ ցույց տալիս, նրանցնոր, կոմունիստական վերաբերմունքով դեպի աշխատանքը: Բայց ստախանովյան շարժման նշանակությունը նաև այն ե, վոր նա ավելացնում է աշխատանքի արտադրողականությունը, ստեղ-

ծում և ավելի բարձր արտադրողականություն կապիտալիզմի համեմատությամբ:

Իսկ չե՞ վոր կոմունիզմը, ինչպես այդ սովորեցնում են Մաքսի, Ենգելսը, Լենինն ու Ստալինը, միայն այն ժամանակ և հնարավոր, յերբ հասարակական հարստության բոլոր աղբյուրները կհոսեն լիառատ հոսանքով:

Ստախանովյան շարժումը հենց նրանով և նշանավոր, վոր նա ավելացնում է մեր սոցիալիստական արդյունաբերության արտադրանքը, մեր հարստությունը, սոցիալիստական պետության ռեսուրսները:

Բոլոր հաշվումներով, Դոնբասի գոյություն ունեցող հանքանորերի առավելագույն արտադրանքը տարեկան պետք և կազմեր 107 միլիոն տոնն ածուխ: Իսկ աշխատանքի ստախանովյան մեթոդների կիրառման պայմաններում, ունենալով նույն սարքավորումը, միևնույն հանքանորերում, Դոնբասի արտադրողականությունը կարելի կլինի կրկնակի մեծացնել, այն և՝ տարեկան տալ 217 միլիոն տոնն ածուխ:

Խարկովի և Ստալինգրադի տրակտորի գործարանները մի հերթին պետք է տային 72-ական տրակտոր—դա ամերիկական նախագծողների հաշվումն եր: Ներկայումս Ստալինգրադի գործարանը մի հերթին տվեց 160 տրակտոր, իսկ Խարկովի գործարանը՝ 150 տրակտոր, այսինքն, կրկնակի և ավելի բան կրկնակի գերազանցեցին նախագծային կարողությունը:

Մի շարք նման փաստեր, իսկ դրանք հարյուրներով ու հազարներով են, ասում են այն մասին, թե ինչպիսի հսկայական հեռանկարներ և յերեան հանում արդեն ներկայումս ստախանովյան շարժումը:

Ստախանովականներն ստեղծում են նոր նորմաներ, աշխատանքի նոր արտադրողականություն, և դա մեծացնում է մեր յերկրի հնարավորությունները, մեծացնում է մեր արտադրանքը և դրանով իսկ հնարավորություն և տալիս ավելի արագ շարժվելու դեպի կոմունիզմ:

Հասկանալի յե, վոր այդ դեռ միայն սկիզբն և կուսակցական խմբակներից մեկում քննարկվում եր այն հարցը, թե արդյոք կոմունիզմի ժամանակ կարակուլի վերարկումները կբավականացնեն բոլորին և բնչպես կլինի մնացած կարիքների բավարար-

ման գործը: Այդ մասին այնպես են խոսում, կարծես թե դա վաղվա գործ ե: Այդ փաստերն առում են, թե ինչպիսի մեծ բացատրական աշխատանք և անհրաժեշտ ներկայումս: Պետք ե լայն կերպով պարզաբանել Լենինի և Ստալինի ցուցումները սոցիալիզմի ու կոմունիզմի վերաբերյալ:

Ըսկեր Ստալինը բազմիցս նշում եր, վոր զարգացման ներկա աստիճանի վրա գտնվելով, մենք պետք ե հաստատապես յուրացնենք, վոր մեր սոցիալիստական պետության խնդիրը՝ «յուրաքանչյուրից բայց իր կարստության, յուրաքանչյուրին բայց աշխատանքի»—սոցիալիզմի այս հիմնական սկզբունքի խստիվ իրագործելն է:

Մեղ մոտ այստեղ վոչ մի տատանում չպետք ե լինի: Այդ սկզբունքի համար մենք պետք ե ուժեղ կովենք, վորովհետև դեռևս մեղ մոտ մթերքների այնպիսի առատություն չկա, վոր բավարի բոլորի պահանջմունքները, այն դասիարակում և կարգավահություն և ապահովում ե աշխատանքի արտադրողականության հետագա վերելիք: Այդ սկզբունքը ներկայումս պահպանվում է և ստախանովականների վերաբերմամբ: Ստախանովականները շատ են վաստակում, լավ են վաստակում; և այն, ինչ նրանք շատ են վաստակում և լավ, նրանք վաստակում են գործով, աշխատանքով:

Յեթե մենք այստեղ վորեն հավասարեցում թույլ տայինք, հարցն այնպես դնելինք, վոր յեթե նրանք շատ են արտադրել, նրանց պետք ե խուզել մենք ստախանովյան շարժման մեջ կուտցնելինք մեծագույն խանգարում, արմատից կարելինք այն:

Ստախանովականները նվիրված են սոցիալիզմի գործին, բայց նրանք ունեն նաև անձնական շահեր, և մենք յերեւք չպետք ե մոռանանք այս անձնական շահի մասին:

Լիակատար հաշիվ տալով իրեն այն մեծ նշանակության մասին, վոր ունի ստախանովյան շարժումը, կոմունիստները միաժամանակ իրենց առջև պետք ե տեսնեն բոլոր այն աստիճանները, վորոնց կողքից անցնել չի կարելի, վորոնք պարտադիր են կոմունիզմին անցնելու համար:

Յեկ այն աստիճանում, վորի վրա մենք այժմ վոտք ենք դրեւ, մեր աշխատանքի հիմնական սկզբունքը, մեր սոցիալիստական պետության հիմնական սկզբունքը և նրա հիմնական խընդիրներից մեկը—դա կարգապահության դաստիարակումն եւ «աշխատանքի չափի ու սպառման չափի վրա խստագույն վերահսկումը»:

զություն իրականացնելը» (ԱԵՆԻՆ): Առանց դրա մենք վոչ մի կոմունիզմ չենք կառուցի:

* *

Ստախանովյան շարժումը մեծ ուշադրություն, կազմակերպչական մեծ աշխատանք և պահանջում, բայց նա պրոպագանդի դորձ ել եւ:

Ընկ. Լ. Մ. Կազմանովիչը ստախանովյան խորհրդակցությանն ունեցած իր յելույթում ասաց, վոր այդ շարժումն արդյունք և ռմել ամբողջ կուսակցության ամբողջ աշխատանքի, թեքումների դեմ կուսակցության գլխավոր գծի հաղթանակի համար մղած նրա պայքարի:

Ստախանովյան շարժումը պարզապես յերկնքից չընկավ, այն ծագեց բանվորների նախաձեռնությամբ, բայց այն նախապատրաստել եր մեր կուսակցությունը: Այն նախապատրաստված եր կուսակցության հոգացողությամբ նոր տեխնիկայի ստեղծման մասին, կուսակցության հոգացողությամբ բանվոր դասակարգի կուլտուրական ու քաղաքական դաստիարակման մասին, նրա նյութական դրության բարեկավման մասին: Այդ տարիներին մեր ամբողջ կուսակցությունը մեծ աշխատանք եր կատարում մարդկանց սուցիալստական գիտակցություն դաստիարակելու համար: Մեր յերկը բանվոր դասակարգն ավելի ու ավելի յե համակվում այդ գիտակցությամբ: Յեզ այժմ, յեր ստախանովյան շարժումը մենք պետք ե վերածենք իսկական համաժողովրդական շարժման, այդ շարժման մեջ մարդկանց նոր, հոկայական խավեր ընդգրկենք, կուսակցական պրոպագանդիստի խնդիրն եւ ստախանովյան շարժման մեծ նշանակությունը յուրաքանչյուր կուսակցական ամսագրությունների համար: Այս կուսակցական պրոպագանդիստի անմիջական խնդիրն ու նպատակը ստախանովյան շարժման կապակցությամբ: Բոլորովին սխալ կլիներ կարծել թե այս տեսակետից մենք կարող ենք փորեն կամպանիայով սահմանափակել: Չի կարելի կարծել, թե իսկակում արած յերկույթերք զբույցներով այդ բացատրական աշխատանքը կարելի յե սպառված համարել:

Ստախանովականների առաջին Համամիութենական խորհը դակցությանն ընկեր Ստալինի արտասահմած պատմական ճառի:

50

Խոր ուսումնասիրության համար պահանջվում ե տեսական սխոտեմատիկ աշխատանք:

Ստախանովյան շարժումն ամենալուրջ պահանջներ ե ներկայացնում մեզ նաև ստախանովականների բազաֆախան դաստիարակման վերաբերմամբ:

Ստախանովականներն առաջավոր մարդիկ են: Անհրաժեշտ ե նրանց դաստիարակել նաև քաղաքականապես, վորպեսզի քաղաքական տեսակետից ել նրանք տիպար, որինակ լինեն, վորպեսզի այստեղ ել նրանք լինեն քաղաքական դեկավարներ: Այժմ այս խնդիրը կանգնած է կուսակցական բոլոր կազմակերպությունների առջև իրեն առաջնահերթ և կարեռագույն խնդիր, և առաջին հերթին կուսակցական պրոպագանդի որդանների առջև, վորոնք պետք ե վերջ տան կուսակցական պրոպագանդի բնագավառում «ընդհանուրապես» գեկավարելու արմատացած սովորություններին, ընդհանուր գեկավարացիայի մեթոդներին, առանց գործը, մարդկանց, աշխատանքի ամբողջ ընթացքը գիտենալու: Դրա համար անհրաժեշտ ե խրստ հաշվի առնել ստախանովականների պահանջները, կուլտուրա-քաղաքական մակարդակը և նրանցից յուրաքանչյուրի հետ պարապմունքներ կազմակերպել:

Մեր կուսակցական պրոպագանդի մեջ դեռևս շատ ե շաբրոնը ձևականությունը: Բայց թերեւ ամենամեծ չարիքը զեկավարության բացակայությունն եւ իսկ զեկավարություն այժմ, առանձնապես Համբկ(բ)կ կենտրոնի «Սուտակա ժամանակվա պրոպագանդիստական աշխատանքի մասին» վորոշման լույսի տակ, անհամեմատ ավելի յե պահանջվում:

Առաջ բոլոր խմբակներն իրենց աշխատանքը կատարում եին ստանդարտ ծրագրերով ու դասագրքերով, այդ ծրագրերն ու դասագրքերն սկսում և ավարտում եին բոլորի համար միանման ժամկետներում: Այժմ գործը շատ ավելի բարդ եւ: Այժմ մենք ունենք տարբեր սստիճանների վրա գտնվող բազմաթիվ խմբակներ: Հետագայում կուսակցական պրոպագանդի ցանցի այդ բազմատեսակությունը կաձիր: Այս հանգստմանքը ավելի լուրջ պահանջներ ե ներկայացնում զեկավարությանը:

Այսինչ, մենք մի շարք փաստեր ունենք, յերբ պրոպագանդիստն ինչն իրեն ե թողնված, պարապում ե այն բանով և ինչպես վոր նրա խելքին փչում ե, առանց վորեն ծրագրի ու կարգի:

51

իրեն արդյունք ստացվում է այն, վոր Կոմինտերնի կոնդրեսի ուսումնասիրությամբ զբաղված կուսակցության անդամները չեյին կարող ասել թե ինչ ե Կոմինտերնը:

Այս վկայում է, վոր սիստեմատիկ պարզբանման աշխատանք չի կատարվում, վոր աշխատանքի վրա հսկողություն ուղեկավարություն չկա: Յեղ այսպես ե չնայած նրան, վոր պրոպագանդիստական աշխատանքը ներկայումս բացառիկ կարևոր նշանակություն և ստանում: Վերջին ժամանակներս մենք ունենք կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և անձամբ ընկեր Ստալինի մի շարք կարևորագույն ցուցումները կուսակցական պրոպագանդի ընագավառում: Ընկեր Ստալինն առանձնապես սրեց կուսակցական պրոպագանդի մեջ փորմալիզմի ու շարլոնի գեմ պայքարելու անհրաժեշտության հարցը: Ընկեր Ստալինը սովորեցնում է մեզ, վոր ամեն մի կուսակցականի, կուսակցական խմբակի ամեն մի անդամի հարկավոր և ներքազաց և ուշադիր վերաբերվել, վոր պետք ե նրա հարցումները բավարարել, վոր կուսակցական դպրոցը չի կարելի շփոթել սովորական դպրոցի հետ: Իսկ մեզ մոտ կուսակցական պրոպագանդի դեկավարման մեջ դեռևս կան գրասենեկային-ըյուրովատական մեթոդների աղաղակող փաստեր:

Դեռևս չի յուրացված այն դրույթը, վոր պրոպագանդիստական աշխատանքը շատով կազմակերպչական աշխատանք է: Մեր կուսակցակերպություններում մինչև այժմ պրոպագանդիստական աշխատանքի մասին այն հնացած տեսակետն և պահպանվում, վոր իրը թե այստեղ պահանջվում են միայն մարդիկ, վորոնք քիչ թե շատ հասկանում են մարքսիզմը և վոչ մի կոնկրետ աշխատանքի ընդունակ չեն: Այս վասակար տեսակետին վերջ պետք ե տալ: Կուսակցական պրոպագանդի բնագավառի աշխատանքը—դա մեծ կազմակերպչական աշխատանք է: Կուսակցական պրոպագանդի դեկավարներից նա պահանջում է մարդկանց ճիշտ ընտրելու և գասավորելու, գործի եյության ու մանրամասների մեջ թափանցելու և առանց թեթևամտության, գործն իմանալով, քայլ առ քայլ հաստատաբորեն ու համբերողությամբ աշխատանքը բարեւավելու ընդունակություն:

Ներկայումս կան կուսակցական պրոպագանդի գործն իր բարձրության վրա դնելու բոլոր հնարավորությունները: Մարքսիստական-լենինյան գրականությունն այժմ լույս ե տեսնում միլիո-

նավոր տիրաժներով: Այս տարի լրիվ հրատարակել են Լենինի յերկերը և Կուսակցությամբ մի խանություն կարելի յե գնել Լենինի յերկերի լրիվ ժողովածուն: Յերկնատորյակը և Լենինի ու Մարքսի առանձին աշխատություններն ամեն տարի լույս են տեսնում հարյուրավոր ու հազարավոր աթրաժներով: Ստալինի «Լենինիզմի հարցերը» աշխատությունն այս տարի հրատարակված և ավելի քան յերկու միլիոն որինակ և կա ամբողջ յերկում: Ստախանովյան խորհրդակցության մեջ տեղի ունեցած յերուցները և ստախանովյան համագումարի աղագրական հաշվետվությունը հրատարակվում են այժմ նույնպես հարյուր հազարվոր և միլիոնավոր տիրաժներով:

Այսպիսով ներկայումս մեր պրոպագանդի համար բազա կա և մեր գործն ե մեր ուսուցիչներ Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի աշխատությունների հիման վրա բարձրացնել կուսակցականների պաղաքական մակարդակը: Մենք այժմ պարտավոր ենք ամբողջ ուժով աշխատել նրա համար, վորպեսզի ամեն մի կոմունիստի ամուր զիններն մեծ զենքով—Մարքսի, Ենգելսի, Լենինի և Ստալինի ուսմունքով, այն ուսմունքով, վորով մենք հաղթել ենք, հաղթում ենք և վորի հիման վրա կհասնենք ել ավելի փայլուն, մեծ հաղթանակների:

«Партийное Строительство» № 22-23, 1935 г.

ԱԳԻՏԱՑԻԱՆ ՄԵՇ ԱՐՎԵՍՏ

Կոմունիստական կուսակցության զարգացման բոլոր ետապներում,—նրա սկզբնավորումից, Լէնինի կազմակերպած առաջին խմբակներից, մինչև մեր որերի նրա հզորության գաղաթները—ագիտացիան բացառիկ մեծ դեր է խաղում: Բոլշևիկյան ագիտացիայի ուժը հսկայական է: Ներկա դարի սկզբին նա վոտքի յեր հանում Ռուսաստանի բանվարժներին, կազմակերպում եր մարտական դրուժինաներ, ահարկու 1917 թվին կոմունիզմի մեծ բոցով ջերմացնում եր պրոլետարներին, գյուղացիներին, զինվորներին, նավաստիներին: Նա կազմում եր քաղաքացիական պատերազմի հաղթական կարմիր բանակները, բարձրացնում եր ամբողջ աշխատավոր ժողովուրդը սոցիալիզմի շինարարության համար: Յեզ զարմանալի վոչինչ չկա նրանում, վոր բոլշևիկ-ագիտատորը հեղափոխական շարժման ամենափայլուն դեմքերից մեկն է հանդիսանում:

Մենք ապրում ենք հենց այնպիսի ժամանակ, յերբ ամբողջ մեր աշխատանքում աղիտացիայի տեսակարար կշիռն արագ աճում է: Խսկապես, Խորհրդային Միությունը դարձավ համաշխարհային սոցիալիստական պետություն: Ստեղծվել է ծանր արդյունաբերություն և յերկիրը հաջողությամբ տիրապետում է նրա տեխնիկային: Շատ հեղափոխություններ են զլուխ կոտրել գյուղացիական հարցի վրա: Այդ հարցն առաջին անգամ աշխարհում լուծված է մեզ մոտ հոգուտ սոցիալիզմի—կոլտնտեսական կարգերը հաղթանակեցին: Այնինչ կապիտալիստական յերկիրներում աճում են աշխատավորների շահագործումն ու չքավորությունը, ֆաշիստական խավարամությունը և կապիտալի մերկապարանոց դիկտատուրան, Խորհրդային Միության մեջ կատարվում են մասսա-

ների բարեկեցության ավելի ու ավելի արագացող բարելավման և սոցիալիստական դեմոկրատիայի լայնացման պատմական պրոցեսը: Կոմունիստական կուսակցությունը, վոր հանդիսանում է այն ամենի ուղեղն ու ստեղծագործողը, վոր մենք ունենք, դեռևս յերբեք նման հաղթանակ չեր տոնել:

Այս նշանակում ե, վոր մեր ամբողջ աշխատանքում համոզան դերը վիթխարի չափով աճում է: Այնտեղ, վորտեղ առաջ վարչական ներգործում եր հարկավոր կիրառել, այժմ, շատ և շատ դեպքերում, հարցը լուծելու համար բավական և խոսել մարդու հետ, պարզաբանել նրան գործը: Այդ պատճառով, բոլորովին բնական է, վոր այժմ, կուսակցական աշխատանքում և վոչ միայն այնտեղ, այդպիսի ուժով դրվում ե աղիտացիայի պրոբլեմը:

Հանցագործություն կիներ հեղափոխության հանդեպ՝ մտածել վոր այլևս կարելի յե աղիտացիա չմղել կուսակցության համար, կոմունիզմի համար, քանի վոր մենք հաղթել ենք: Այսպես կարող են դատել փոխարքուներն ու իշխանազունները, վորոնք սեփական առերևույթ «բարեկեցության» հետևում պատրաստ են մոռանալ յերկրի ամենակենսական շահերը: Ընդհակառակը, հենց այժմ համոզման ալիքը պետք ե հասնի ավելի մեծ բարձունքների: Դաստիարակել յերիտասարդության նոր սերունդը, վորը չգիտեր հին, անիծյալ հասարակակարգը, դաստիարակել հարյուր միլիոնից ավելի գյուղացիներին սոցիալիստական կոլտնտեսային վորով, բանվորների նոր խավերում դաստիարակել և հին կադրերում խորացնել կոմունիզմի գաղափարները, ամբողջ ժողովրդի մեջ դաստիարակել խորհրդային հայրենասիրությունը և ամեն ինչ—մեծն ու փոքրը—գոհաբերելու ընդունակություն, յերբ գործը հայրենիքի կենսական շահերի մասին ե, —ահա մեր աղիտացիայի նոր հսկայական խնդիրները:

Աղիտացիան մեծ արվեստ է: Այն պետք է հմտորեն կազմակերպել: Առանց բոլշևիկյան կազմակերպման այստեղ հաջողություն ձեռք չի բերվի: Աղիտացիան մեծ գործ է և նրա կազմակերպումը յերրորդական աշխատողների հանձնարարել չի կարելի: Պետք է աճեցնել աղիտատորների կագրերը: Մասնավորապես գյուղում աճել է կոլտնտեսականների նոր ակտիվ, այնպես վոր հնարավորություն կա մեր աղիտացիայով ընդգրկելու գյուղացիության բոլոր շերտերը:

Ազիտացիան պետք ե լինի կենդանի, գրավիչ, կոնկրետ, քառաքականապես սուր, անկեղծ և ճշմարիտ: Պետք ե ճանաչել և ուսումնասիրել այն մարդկանց, վորոնց մեջ մղում և ազիտացիան, իմանալ, թե ինչն ե նրանց հուզում, ինչով են նրանք հետաքրքրում, շավիդներ գտնել դեպի նրանց գիտակցությունը, նրանց զգացմունքները, համոզնել նրանց և բարձրացնել կոմունիզմի գաղափարների և կուսակցական քաղաքականության հասկացման մակարդակը:

Ազիտատորը մեծ ուժ ե: Լրիվ չափով գործելու համար ազիտատորն ամենից առաջ պետք ե քաղաքականապես համոզված մարդ լինի: Թե չե պատահում ե, վոր կարծես թե ամեն ինչ ասված ե, բայց համոզեցուցիչ չե: Տրաֆարետը և շտամպը մահ են ազիտացիայի համար: Ազիտացիայի մեջ հարկավոր ե կուսակցական, գաղափարական հուր, կրքոտություն: Ազիտացիան պահանջում ե հնարագիտության, սրամության, դիքէրենցիալ մոտեցում դեպի բանվորների, ծառայողների, մասնագետների, կուտնահանականների առանձին միջնախավերը: Ազիտատորն ուրիշներին պարզաբանելու համար վոչ միայն ինքը պետք ե գրագետ լինի, այլև նա պետք ե կարողանա ազիտացիա անել: Թե ինչ պես պետք ե ազիտացիա մղել, այդ պետք ե սովորել նույնիսկ այն դեպքում, յեթե դիտես, թե ինչ պիտի խոսես:

Քաղաքական ինֆորմացիան ազիտացիայի գործոն և մասսաների գիտակցությանն արագ հասնող ձեերից մեկն ե: Բանվորների, ծառայողների, մասնագետների կուլտուրական մակարդակը շատ և շատ բարձրացել ե: Մարդիկ ավելի ու ավելի շատ են հետաքրքրվում նրանով, թե ինչ ե կատարվում յերկրում և նրա սահմաններից դուրս: Հետաքրքրությունը դեպի քաղաքական անցքերը մեծանում ե: Մարդիկ վորոնում են անցքերի, նրանց մեջ յեղած կապի բացատրությունը: Յեղ ազիտատորի ինդիրն ամենից առաջ այն ե, վոր անմիջապես պարզաբանի ու բացատրի քաղաքական անցքերը, տեղն ու տեղը, թարմ հետքերով, առանց սպասելու հերթական զեկուցմանը, մարդկանց տա քաղաքական ինֆորմացիա: Զե վոր կիսապարտված թշնամին չի սպասում: Նա ճարպիկ ե: Նա ոգտվում ե յուրաքանչյուր անցքից իր ոգտին գործող լուրեր տարածելու համար: Նա չի սպասի, մինչև վոր ազիտատորն ուղեգիր ստանա:

Վերջերս «Правда»-յում կուսակցական աշխատողների՝ ազիտացիայի մասին տպված հոդվածները ցույց են տալիս, թե վորքան հմուտ ու բեղմնավոր կերպով կարելի յե և պետք ե կաղմակերպել քաղաքական ինֆորմացիան: Ընթերցարաբները, զրուցարաբները, բոլոր այդ ընկերները, վորոնք ուղեգրերի չեն սպասում, սոցիալիզմի գործի համար ամեն մի քայլափոխում ազիտացիա յեն մղում, կատարում են կուսակցության մեծ գործը: Նրանց պետք ե ամեն կերպ բարձրացնել, սովորեցնել, հրահանգել, խորհուրդներ տալ վորպեսզի նրանք իրենց կուսակցական աշխատանքը կարողանան կատարել ել ավելի մեծ ոգուտով յերկրի համար և խափանել հականեղափոխական, կուլակային և հակակուսակցական տարրերի մնացորդների սուտ և թշնամական «ինֆորմացիան»:

Մեր ազիտացիան հսկայական ուժ ունի, վորովհետև նա ճշշմարիտ ե, վորովհետև նա հիմնվում ե Մարքսի-Էնգելսի-Լենինի Ստալինի ուսմունքի վրա: Մեր ազիտացիան — դա կյանքի, մեր դասակարգի, մեր աշխատավոր ժողովրդի, մեր կոմունիստական կուսակցության մեծ կյանքի ճշմարտությունն ե: Մենք պարտավոր ենք ավելի լավ, ել ավելի քաղաքականապես սրած ազիտացիա մղել, ոգտվելով մեր իրականության բազմաթիվ փայլուն փաստերից: Նոր փուլում մենք պարտավոր ենք բարձրացնել գաղափարականությունը — մեր դարաշրջանի իսկական մարդկանց այդ կարևորագույն հատկանիշը, կարգապահությունը, աչալլչությունը, դեպի կուսակցությունն անսահման անձնվիրությունը, վորպեսզի ավելի արագ առաջ տանենք սոցիալիզմը:

«Правда», 7 ապրիլի 1935 թ.

ՀԵՂԱՓՈԽԱՎԱՆ ԹԵՌԻԱՆ ԲՈԼԵԵՎԻԶՄԻ ՎՈԳԻՆ Ե

Կար ժամանակ, յերբ մեր կուսակցության թշնամիներն առանձնապես շատ եյին խոսում այն մասին, թե իբր լենինիզմը գործականության պրիմատն ե թեորիայի նկատմամբ, վոր գլխավորը լենինիզմի մեջ մարքսիստական դրույթների «իրագործումն ե», վոր լենինիզմի ընդհանրապես բավական անտարբեր ե դեպի թեորիան։ Նման զրպարտություն տարածվում եր ճենց նրա համար, վոր լենինիզմը հեղափոխական մարքսիզմի միակ ժառանգորդն ե։ Սակայն այդ չի նշանակում, վոր չկային ու չկան առանձին կոմունիստներ, վորոնք արհամարհում են թեորիան։ Յեղ կուսակցությունը, մասնավորապես ու առանձնապես լենինն ու Ստալինը, շատ անգամ ստիպված եյին վերադառնալ այդ հարցին, մերկացնելով միաժամանակ և թշնամիների զրպարտությունը և վոչ-բարով կոմունիստների քաղղենիությունը։

Նախատեսելով հեղափոխական պրակտիկայի և հեղափոխական թեորիայի անխղելի կապը և նախագուշակելով մեր կուսակցության, իբրև միջազգային պրոլետարիատի առաջավոր մարտիկի, հատուկ դերը, լենինը դեռևս բոլենիզմի արշալույսին ընդգծում եր, վոր «առանց հեղափոխական թեորիայի չի կարող լինել և հեղափոխական շարժում» և վոր «առաջավոր մարտիկի դերը կարող ե կատարել միայն առաջավոր թեորիայով ղեկավարվող կուսակցությունը։ Ստալինը նույնպես բազմիցս նշում եր, վոր «պրակտիկան դատում է կույրի յեղին հեղափոխական թեորիայով չի լուսավորում» և վոր «պրակտիկաների ձգտումը՝ հրաժարվել թեորիայից՝ հակասում ե լենինիզմի ամբողջ վոգուն ու գործի համար հղի յե մեծ վտանգներով»։

Կոմունիզմի գործը, վորի համար իրենց ամբողջ կյանքում

պայքարում եյին մարդկության մեծագույն մտքեր՝ Մարքսը, ենգելսը և Լենինը, այն գործը, վորին ներկայումս գլխավորում ե մեր առաջնորդ ընկեր Ստալինը, ապրում ե և ավելի շատ ե ճանապարհ հարթում իր համար, հենց շնորհիվ այն բանի, վոր մեր կուսակցությունն իր աշխատանքում անշեղորեն ղեկավարվում ե ամենաառաջավոր թեորիայով։ Ինչպես ասում եր ընկեր Ստալինը, թեորիան թույլ եր տալիս և թույլ ե տալիս կուսակցությանը տալ «շարժանը վստահություն, կողմնորոշման ուժ և շրջապատող դեղքերի ներքին կապի ըմբռնում, ոգնում եր և ոգնում ե բոլոր պրակտիկներին «հասկանալ վոչ միայն այն, թե ինչպես և ուր են շարժվում դասակարգերը ներկայումս, այլ և այն, թե ինչպես և ուր պետք ե շարժվեն նրանք մոտիկ ապագայում»։

Թեորիան զինում ե, հարստացնում ե պրակտիկներին պատմական և քաղաքական գիտելիքներով և նրանց դարձնում ե լայն հորիզոն, մեծ հեռանկար ունեցող մարդիկ, համարձակ մարդիկ, վորոնք իրենց վոտքի տակ ամուր հող են զգում, խորապես վերլուծում են հասարակական յուրաքանչյուր նոր յերկույթ։ Ահա քաղղաքոցի ունկնդրի բնորոշ հայտարարություններից մեկը։ Ընկ. Ա. Սավենկովը, կուսանդամ, Մոսկվայի Ստալինի անվան ավտոգործարանի «մոտոր» ցեխի բլոկ-շենքինդը խմբի սարքավորող, պատմում ե. «Լենինիզմի խմբակի պարապմունքներն ստիպում եյին լավ մտածել առաջուց անցածը և կանգ առնել նոր հարցերի վրա։ Բայցի խմբակի պարապմունքներից աշխատում եյի կանոնավոր կերպով կարդալ լենինին և Ստալինին։ Սկսեցի ինձ ավելի ամուր, ավելի կայուն զգալ կուսակցական և անկուսակցական ընկերների հետ ունեցած վեճերում իմ տեսակետը համարյա միշտ հաղթանակում եր, վորովհետև յես գիտեյի առարկան, աղբյուրը։ Մի խոսքով՝ թեորիապես յես խիստ աճեցի և այժմ, գնալով կարմիր բանակ, միշտ կհիշեմ թեորիայի մասին և կվերադառնամ նրան»։

Ցուրաքանչյուր տարի մեր յերկրում բազմանում ե կուսակցական և անկուսակցական այն մարդկանց թիվը, վորոնք կուսակցական կազմակերպությունների կողմից ամենորյա գործնական աջակցություն ստանալով, համառորեն տիրապետում են հեղափոխական թեորիային։

Կուսակցության XVII համագումարից հետո, վորտեղ ընկեր

Իսկ թե վարքան կարելու ու անհրաժեշտ ե հետեւ այս բանին՝ սրա մասին վկայում ե Ուկրաինայի կ(բ)կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի բաժնի վարիչ ընկ. Աշրայանի յելույթը: Մի շարք կոնկրետ որինակներով նա ցույց տվեց, վոր բուրժուական նացիոնալիստների ու հականեղափոխական արոցկիստների բլոկը, վորն իր գործականները, իր հովանավորյաններն ե ունեցել Ուկրաինայում գաղափարախոսական ֆրոնտի մի շարք կարևորագույն ճակատամասներում, աղտակալում եր կուսակցության անդամների գլուխները լենինիզմի կարևորագույն հարցերի և Ուկ(բ)կ պատմության կեղծ շարադրանքով:

Ընկ. Բերիայի ղեկուցման քննարկման ժամանակ հակալենինյան տարրերը փորձել են խեղաթյուրել մեր կուսակցության պատմությունը, անդրկովկասյան բոլցեկլյան կազմակերպության պատմությունը: Ստախանովականների խորհրդակցության ժամանակ ընկեր Ստալինի արտասանած ճառը քննարկելիս այդ թշնամի տարրերը փորձել են անվստահություն սերմանել վաղվա որվա վերաբերմամբ՝ աշխատելով ապացույցել թե ստախանովյան շարժումը բանվոր գասակարգին գործազրկություն ե սպառնում:

Կուսակցական պրոպագանդի բարձր վորակն ապահովելու համար տուաջնակարգ նշանակություն ունի պրոպագանդիստներ ընտրելու, նրանց ստուգելու, նրանց աշխատանքը սիստեմատիկ վերահսկման յենթարկելու, նրանց մշտապես ոգնություն ցույց տալու հարցը: Մենք հաճախ ենք լսում պրոպագանդիստների վատաշխատանքի քննադատություն, բայց հազվագետ են ժողովրդականացվում լավ պրոպագանդիստները: Այս կողմից արժեքավոր

նախաձեռնություն և ունեցել Մոսկվայի քաղկոմը։ Մոսկվայի քաղաքային կոմիտեյի կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Ռատները մանրամասն պատմեց Մոսկվայի լսվագույն պրոպագանդիստների ժամկեց։

Սգերդովսկի մարզկոմի կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Ուզյուկովի հազորդումից յերեսում ե, թե ինչ հսկայական նշանակություն և ունեցել կենտկոմի պահանջը պրոպագանդիստներին ստուգելու մասին, —մի պահանջ, վորոն իր արտահայտությունը գտավ կենտկոմի վորոշման մեջ Սգերդովսկի մարզի կուսակցական պրոպագանդի դրվածքի վերքաբերյալ։ Մարզկոմի աշխատողներն անձամբ են ստուգում պրոպագանդիստներին բոլոր շրջաններում։ Այդ աշխատանքը դեռ նոր և սկսված և նա արգեն քիչ արդյունքներ չի տվել։ Ուրաշմաշում, որինակ, 85 պրոպագանդիստից 17-ը հանված են պրոպագանդիստական աշխատանքից, Կաբակովսկում ստուգված և 99 պրոպագանդիստ, նրանցից բացարկված են 33-ը։ Բացարկվածների մեծ մասը անհարազատներ, նախկին ուկոնիստներ են։ Այսպիսի փաստեր մյուս մարզերումն ել են յերևան բերված, մասավանդ կուսակցական փաստաթղթերն ստուգելիս։

Ի՞նչ պետք ե անել այսուհետեւ, ի՞նչպես ամենակարճ ժամանակամիջոցում հասնենք պրոպագանդիստների բարձրորակ աշխատանքից։ Մաղել թույլ անպետք պրոպագանդիստներին, կուսակցական ղեկավար աշխատողների միջից գրավել պրոպագանդիստների նոր կաղդեր, լայնորեն առաջ մղել պրոպագանդիստների պատրաստումն ու նախապատրաստումը—ահա խորհրդակցության կարծիք։

Իսչպես ցույց տվեց Մոսկվայի, կենտրոնագի փորձը, ճիշտ մոտեցման գեղքում պրոպագանդիստական կաղըերը կուսիստաթղթերի ստուգման ժամանակ կարելի յե նշանակելի լիորեն հարստացնել նոր ուժերով։ Դոնեցի մարզում ստուգման ժամանակ ներգրավված են վորովս պրոպագանդիստներ 675 կոմոնիստ, վորոնց նշանակելի մասսան կուսաշխատողներ են։ կենինյան ռայոնում (Մոսկվա), ինչպես հաղորդում ե կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Բըոյդեն, պրոպագանդիստական աշխատանքի համար ներգրավված և 360 մարդ։

Կուսակցական ղեկավար աշխատողներին պրոպագանդիստական աշխատանքի ներգրավելու գործը չափազանց վատ և կազմակերպված։

Ինչպես կանոն, յերկրկոմների, մարզկոմների, քաղկոմների, շրջկոմների և անդամ գործարանային կուսակցական կոմիտեների բյուրոները չեն զբաղվում պրոպագանդիստական աշխատանքով, իսկ կուսակցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժինները տեղերում այս հարցն ամենայն վճռականությամբ չեն դնում։ Փաստերն ասում են, վոր այնտեղ, վորտեղ շրջկոմի քարտուղարը անձամբ ինքը խմբակ և վարում, տվյալ շրջանի մարզսխտօրեն պատրաստված բոլոր լավագույն մարդիկ հետեւում են նրա որինակին։

Պրոպագանդիստներին սիստեմատիկ ոգնություն ցույց տալու գործը շաա վատ և կազմակերպված։ Պրոպագանդիստների սեմինարները, իբրև կանոն, պրոպագանդիստներին հերթական նյութի համար չեն պատրաստում։ Մեթոդական հարցերով, իբրև կանոն, պրոպագանդիստական սեմինարները չեն զբաղվում։ Հյուսիսային կովկասի յերկրկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Սեմյակինը նշեց, թե յերկրում միայն մի գեպք ե յեղել (Կարաչայում), յերբ սեմինարում քննարկվել և պրոպագանդի մեթոդիկան։

Կուսկարինետները նույնպես թույլ են սպասարկում պրոպագանդիստներին։ Մոսկվայի մարզկոմն ստուգել ե կուսակարինետների աշխատանքը։ Ինչպես հաղորդեց մարզկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Դեղիկովը, կուսկարինետների աշխատանքների մասին պատրաստված և Մոսկվայի կոմիտեյի հատուկ նամակը, վորը մոտ ժամանակներու ուղարկվելու յե տեղական կազմակերպություններին։

Խորհրդակցությունում սուր կերպով զրվեց սակավագրեստ կոմունիստների հարցը։ Ուկրաինայում 25 հազար կոմունիստներ 4—5 տարուց ավելի յե, ինչ նստած են թեկնածուական գարոցներում։ Դոնեցի մարզկոմը «գտավ» կոմունիստ Սալդանովին—փականագործ, կուսանդամ սկսած 1924 թվականից—վորը 10 տարի յե սովորում ե թեկնածուական գարոցում։ Նմանորինակ փաստեր այլ կազմակերպություններում ել են դիտվում։ Դա հետեւանք է գեպի դպրոցների կամպլեկտավորումը յեղած ձեւական-բյուրոկրա-

տական վերաբերմունքի: Գրքի առաջ են նստեցնում մի կոմունիստի, վորը դեռևս չի կարողանում ուսւերեն վարժ ու սահուն կարդալ, վորը տարրական գիտելիքներ չունի թվաբանությունից ու աշխարհագրությունից:

Դոնեցի մարզկոմը բոլորովին ճիշտ յելք գտավ այս գրությունից, հաշվի առավ այս բոլոր կոմունիստներին և սկսեց նրանց ներգրավել սակավագրագետ կոմունիստների համար հատկապես կազմակերպված խմբակներն ու դպրոցները: Հենց այս ճանապարհով ընթանում են նաև կուսակցական այլ կազմակերպություններ:

Յեթե պրոպագանդիստական աշխատանքը խորհրդակցության մասնակիցների ընդհանուր խոստովանությամբ ամբողջությամբ վերցրած ցածր մակարդակի վրա յե գտնվում, ապա կուսակցական պրոպագանդը առանձնապես վատ վիճակի մեջ ե գյուղում: Թույլ պրոպագանդիստներ ամենից շատ այստեղ կան: Իսկ նրանց աշխատանքի գրեթե վոչ մի զեկավարում չկա: Մարդիկ թողնված են իրենց բախտին: Խմբակների կոմպլեկտավորումը առանձնապես վատ ե գյուղում, վորովհետև խմբակներ մեծ մասմբ կազմվում են վոչ թե բատ գիտելիքների մակարդակի, այլ ըստ ընակության վայրի: Դպրոցների այլանդակ կոմպլեկտավորման ցայտուն որինակներ բերեց խորհրդակցությունում կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի վարիչի տեղակալ ընկ. Զեյմալը:

Խորհրդակցությունում հավանությամբ ընդունեցին կույրեցի յերկրումի փորձը: Այս յերկրումի կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի վարիչը ընկ. Սլիվեցին պատմեց պրոպագանդը գյուղում նոր ձեռվ կազմակերպելու մասին: Գյուղական շրջանը բաժանում են մի քանի փնջերի, վորոնցից յուրաքանչյուրն ունի 30-ից մինչև 50 կոմունիստ, փնջի շառավիղը մինչև 8 կիլոմետր է: Այս փնջի մեջ կոմունիստները, նայած նրանց մակարդակին, բաժանվում են խմբակների: Բոլոր խմբակները մի փորոշ որ հավաքվում են փնջի կենտրոնում՝ հատկապես պատրաստված շենքում, վորը պարապմունքների համար առավելագույն հարմարություններ ունի: Հենց այստեղ ել գալիս են շրջանային կենտրոնից վորակյալ ուժերը:

Հյուսիսային կովկասի յերկրումը ճիշտ և հաշվի առել հան-

ձին նախկին քաղբաժինականների հսկայական տեսական այն ուժերի առավելագույն ոգտագործման անհրաժեշտությունը, վորոնց մեջ կան շատ իշապիստներ, լավ պրոպագանդիստներ:

Խորհրդակցության մասնակիցների միահամուռ կարծիքով՝ աճում ե կուսակցական հեռակա ուսուցմաննաշակությունը: Շատ շքաններում մասսայական հեռակա ուսուցման ինստիտուտի (ԱՄՅՕ) սիստեմում ներգրավվածներն ավելի վորակյալ ուղղություն են ստանում, քան այդ գոյություն ունի կուսուսուցման ստացիոնար ցանցում:

Թեև խորհրդակցության որակարգում դրված եր ազիտացիայի հարցը, բայց նա, ինչպես հարկն եր, չքննարկվեց: Այնինչ, ընկ. Պողերնը (Լենինգրադի մարզից) և Կարինը (Ֆրունզեյի ռայոն, Մոսկվա) ցույց տվեն, թե դեռ վարդան շատ բան կա անելու ագիտացիայի կարգավորման համար, թե վարդան շատ պահանջներ են առաջարում մեր ագիտատորներին կուլտուրապես աճող մասսաները և թե ինչ լավ հետեանքների կարելի յե հանդել ագիտացիայի կազմակերպման գործին ուշադրություն դարձնելիս:

Խորհրդակցության վերջում կարճառոտ ճառով հանդես յեւ կավ ընկեր Ստեցկին:

— Յերբ մենք մեր պլանն եյինք կազմում՝ պրոպագանդիստների և ագիտատորների հաշվառման հարցը մենք վերջին տեղում դրինք: Յերբ այս պլանը հանձնեցինք ընկեր Ստալինին, նա մեզ տասց. «Այ այս հարցը պետք ե առաջին տեղը դնել: Ամենից առաջ աշխատանքը պետք ե սկսել նրանից, թե ով ե ձեզ մոտ գործը վարողը»:

Ընկեր Ստեցկին կոչ եր անում ուժեղացնելու պրոպագանդիստական աշխատանքի վերաբերմաքը կուսակցության ընդունած վորոշմների կենսագործման հսկողությունը, ավելի հաճախ մըտնել գալուցներն ու խմբակները նրա համար, վորակյալ ավելի պինդ ու սուր կերպով մերկացնենք կուսակցական պրոպագանդի դրվածքի բոլոր թերությունները և սրա հետ մեկտեղ խրախուսենք լավագույն որինակները:

Ընկեր Ստեցկին կուսակցական պրոպագանդի բոլոր աշխատողներին կոչ արեց իրենց աշխատանքը ամուր կապակցել ստախանովյան շարժման հետ, աշխատել ստախանովականների գաղափարային դաստիարակության գործի վրա, պրոպագանդ անել

ստախանովյան շարժման մեծագույն նշանակությունը վառ, գունեղ կերպով:

Խորհրդակցությունից հետո նրա բոլոր մասնակիցները բաժանվեցին հանձնաժողովների՝ կուսակցական պրոպագանդի դըրքածքի վերաբերյալ կոնկրետ առաջարկները քննարկելու համար:

«ՊՐԱՎԴԱ», 11 դեկտեմբերի 1935 թ.

**ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻ, ՅԵՐԿՐԿՈՄՆԵՐԻ ՅԵՎ ԱԶԳԿՈՄԿՈՒՄՆԵՐԻ
ԿԵՆՏԿՈՄՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ ՈՒ
ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ՎԱՐԴՉՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ**

1935 թ. դեկտեմբերի /առաջին որերին Համկ(թ)կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Ա. Ի. Ստեցկու ղեկավարությամբ կայացավ յերկրկոմների, մարզկոմների և ազգային կոմկուսների կենտկոմների կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժինների վարիչների խորհրդակցությունը:

Խորհրդակցության աշխատանքներին մասնակցեց և մեծ ճառով հանդես յեկավ Համկ(թ)կ Կենտկոմի քարտուղար Ա. Ա. Անդրեյեվը:

Խորհրդակցությունը հետևյալ հարցերը քննության առաջ կուսակցութեան լուսավորության զանցի կազմակերպումը. կուսակցական դպրոցների և խմբակների պարագաների վիճակը և նրանց տեխնատենին բա ելուրյան դեկավարելը. պրոպագանդիտների հաւառումը, բնտրությունը և նրանց ոգնելու կազմակերպումը. սօսին ազիտացիայի դրվագները. Այս հարցերի վերաբերյալ հաղորդումներ արին ընկ. Պողերնը, Խավիհնոսնը, Ռատները, Դեղիկովը, Բեղիան, Աշրաֆյաննը, Սերգեյեվը, Վասկանյաննը, Պարտիկովը, Սեմյակինը, Դվորյացկին, Խորոշկոն և Բրոյդն։ Վիճաբանություններին հանդես յեկան 40 մարդուց ավելի։

Համկ(թ)կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչ ընկ. Ստեցկին, բաց անելով ժողովը, ընդունեց Համկ(թ)կ Կենտկոմի և անձնապես ընկեր Ստալինի բացառիկ մեծ ուշադրությունը կուսակցական պրոպագանդի հարցերին։

Այս խորհրդակցությունը, —առում ե ընկ. Ստեղկին, —գեռնա համարութիւնական չե: Նա հրավիրված ե այն առնենատին, յերբ նոր բաժինների աշխատանքը նոր ե միայն սկսում ծավալ վել:

Ընկ. Ստեղկին նշում ե, թե նոր բաժիններին հարկ ե լինում աշխատել ավելի բարդ պայմաններում: Այժմ կուսակցական պրոպագանդին ավելի բարձր պահանջներ են առաջադրվում: Առաջներում, կազմակերպման իմաստով վերցրած, բանը, անշուշտ, ավելի պարզ եր: Առաջներում գոյություն ուներ կուսակցության կենտրոնի կողմից դատապարտված և մերժված սի կարգ, յերբ կուսակցական պրոպագանդի ամբողջ ղեկավարումը հանդեցնում եյին այն բանին, վոր ծրագրերն ու դասագրքերը զանազան խըմբակներում անցնելը հարժարեցնեն միևնույն թեմաներին, միևնույն ժամկետներին: Այժմ գործն ավելի բարդ ե: Մենք ունենք խըմբակների զանազանակերպ ցանց: Մեզանից պահանջվում ե ղեկավարել ըստ եյության: Նոր բաժիններն իրենց անելիքները կատարած չեն լինի, յեթե չյուրացնեն սի հիմնական գրույթ, վոր այս պայմաններում հսկայական առաջնակարգ նշանակություն և ստանում կազմակերպչական աշխատանքը և ամենից առաջ՝ պրոպագանդիստական կադրերն ընտելու, ուսումնասիրելու և անցնելու աշխատանքը:

—Իսկ պետք ե ասել, —շարունակում ե ընկ. Ստեղկին, —վոր մեզանից շատերի համար պրոպագանդիստները միապատճ մասսա յեն հանդիսանում: Մենք չենք սովորել առանձնացնել մեր լավագույն մարդկանց, նրանց քաջալերել ցույց տալ լավ աշխատանքի որինակներ:

Ընկ. Ստեղկին առանձին ուշադրություն նվիրեց կուսակցական դպրոցներին ու խմբակներին և նրանց աշխատանքներ եյության դեկալարելու: Կենտրոմի վորոշումը «Մոռակաժամանակի պրոպագանդիստական աշխատանքը մասին», —միշտ վորոշում, վոր ուղղված է կուսակցական պրոպագանդի մեջ սեղոնականություն և շաբրոն մացնելու դեմ, —ընավ ել չի նշանակում ամեն սի սիստեմի վերացում: Ընդհակառակի, նա ընդգծում ե վորոշ կարգի անհրաժեշտությունը, քաղղրագիտության դպրոցից հետո անհրաժեշտ և անցնել կուսակցության պատմության ուսումնասիրությանը և միայն այն բանից հետո, յերբ ըն-

կերները տիրապետեն կուսակցության պատմության գիտելիքներին, հարկավոր ե ձեռնամուխ լինել լենինիզմի ուսումնասիրությանը:

Ընկ. Ստեղկին մեծ քանակությամբ որինակներով ցույց ե տալիս, վոր գեռ վատ և գրված կուսակցական գպրոցների և խըմբակների աշխատանքն ըստ եյության ղեկավարելու գործը: Մի շարք տեղերում այս գործը ինքնահոսի յե թողնված: Ամեն մի պրոպագանդիստ վարդում եւ ինչպես վոր նրա խելքին փչում ե: Փորձեր կան կուսակցական պրոպագանդը ղեկավարելու գործը վերածելու դատարկ ձեռականության: Ընկ. Ստեղկին այս բանը պատկերավորում ե Ազով-Սևծովյան յերկրկոմի մի վորոշման որինակով, յերբ նա յերկրկոմի սի նիստում հաստատել ե կուսակցական դպրոցների ու խորակների ամբողջ ցանցը: Ազով-Սևծովյան յերկրի կուչչեվկայի շրջանի կուսակցական պրոպագանդի վեհակի ստուգումը ցույց տվեց, վոր յերկրկոմի հաստատած խմբակները միայն թղթի վրա գոյություն ունեն:

Ընկ. Ստեղկին առանձնապես ընդգծեց կուսակցական պրոպագանդի կարևորությունը ստախանովականների խորհրդակցությունում ընկ. Ստալինի արտասահման ճառի կապակցությամբ: Ի յեզրափակումն ընկ. Ստեղկին խորհրդակցության քննությանը դրեց կուսակցական պրոպագանդի ու ագիտացիայի մի շարք կոնկրետ հարցեր:

Հաղորդումով հանդես յեկած ընկ. Բ. Պ. Պոգերնը —լենինիզմագի մարզկոմի կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի ըամնի վարիչը նշեց, վոր կազմակերպություններից վոմանց մեջ գեղով կուսակցական լուսավարության ցանցի կազմակերպումը մեխանիզմական մոտեցում կա: Մի շարք շրջաններում կոմունիստներին մեխանիզմական փոխադրել են կուսակցության պատմության ուսումնասիրության խմբակները՝ վերացնելով բոլոր մնացած խըմբակներն ու գպրոցները: Մարզի 9 շրջանում կուսակցության պատմության խմբակները կուսուլսուցման միակ ձևն են հանդիսանում՝ չնայած այն բանին, վոր շատ կոմունիստներ պատրաստված չեն կուսակցության պատմությունն ուսումնասիրելու, չգիտեն քաղղրագիտություն, կուսակցության կանոնադրության ու ծրագրի տարրական հիմունքները: Փորձելով ուղղել այս սխալը՝ շրջկոմներից վոմանք մի այլ ծայրահեղության մեջ են ընկել և ա-

ուանց խորության բոլոր կոմունիստներին փոխադրել են քաղ-
զրագիտության դպրոցները՝ վերացնելով կուսակցության պատ-
մության խմբակները:

Վոչ ամեն տեղ են վերջ տվել ուսուցման սեղոնականությանը։
Մի շարք շրջաններում պրոպագանդիստների արձակուրդ գնալիս
խմբակները մի ամսով և ավելի ժամանակով դադարեցրած են յե-
ղել աշխատանքը։ Այս ամենը չի կարող չանդրադառնալ խմբակ-
ների աշխատանքի վրա կի վրա։

Խոչորագույն բաց է կոմունիստների սակավագրագիտությունը։
Մենք մեր առջև նպատակ ենք դրել Հոկտեմբերի XIX տարեդարձին
լիովին վերացնել կոմունիստների մեջ յեղած սակավագրագիտուրյուննե-
րը անգրագիթաւրյունը։

Ընկ. Խովինսոնը (Ղենինդրադի քաղկոմի կուսակցական պրո-
պագանդի և ազիտացիայի բաժնի վարիչ) խոսեց խմբակների
կոմպլեկտավորման և ընտրանքի մեջ յեղած լուրջ թերություն-
ների մասին։ Բայց սրա հետ միասնեղ նա բերեց առանձին
պրոպագանդիստների ուշագրավ աշխատանքի մի շարք որինակ-
ներ, — պրոպագանդիստների, վորոնք կարողանում են խմբակի
ունկնդիրներին պարզ ու հասկանալի կերպով բացատրել քաղա-
քական բարդ հարցերը։ Պրոպագանդիստ ընկ. Մարգովնը «Ելեկ-
տրոսիլա» գործարանում, սկսելով կուստոմար շապկի վրա յեղած
«Համամիութենական կոմունիստական կուսակցություն» կոմունիս-
տական ինտերնացիոնալի սեկցիա մակարությունը կարդարուց
հետաքրքրական զրույց անցկացրեց կոմինտերնի VII կոնգրեսի
աշխատանքի մասին։

Վերջին ժամանակներս խմբակների կոմպլեկտավորման մեջ
վորոշ բարելավում կա։ Ուստի և՝ առաջին և անհրաժեշտ ե, չըս-
պասելով խմբակի աշխատանքը հին կազմով վերջացնելուն, իս-
կույն ենթ ուղղել կոմպլեկտավորման մեջ յեղած թերությունները։
Մենք պետք ե ճրաժարվենք խմբակների ցանցը միայն ըստ ցե-
խների կոմպլեկտավորելու պրակտիկայից և անհրաժեշտուրյան դեպ-
ենում պետք ե ստեղծենք նաև միջցիսային դարցներ։ Պետք
ե ձգտել համեմ այն բանին վորոշ ձեռնարկություններից։ Որինակ,
«Շարիկոպողիանիկ» գործարանում, Կագանովիչի անվան կաշե-
գործարանում, ՑԱԳԻՒ-ում, «Տրյոխիպորկա»-յում առանձին որ ե
հատկացվում պարագաներին նախապատրաստումը տեղի յե ունենում պրոպագանդիստնե-
րի կամ կուսակցական կարինետի վարիչի ներկայությամբ։

Հաստատի կուսակցական կոմիտեն։ Հարկավոր ե կազմակերպել
պրոպագանդիստներին մերօդական ոգնության ցույց ալու գործը,
կազմակերպել լավագույն պրոպագանդիստների կողմից ղեկավար-
վող որբնակելի խմբակներ։ Անհրաժեշտ ե բարձրացնել մեր գոր-
ծարանային կուլտոպոպների մակարդակը։

Ընկ. Խավինսոնն այսուհետև մատնանշում ե կուսակցական
դպրոցների և խմբակների աշխատանքի վերաբերյալ ինֆոր-
մացիա կազմակերպելու անհրաժեշտությունը։ Յեթե մենք ուզու-
մանք ինչպես հարկն ե ղեկավարել կուսակցական պրոպագանդը,
մենք պետք ե ձգտենք համեմ այն բանին, վոր հետեւյալ որն
եթ զիտենանք, թե ինչպես անցան խմբակների պարապմունք-
ները, և թե ինչ հարցեր են հուզում կոմունիստներին։

Ընկ. Ռասնիերը (Մոսկվայի քաղաքային կոմիտեյի կուսակ-
ցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարչունիքն) ասում
ե, վոր, չսայած կուսակցական պրոպագանդի մեջ յեղած մեծ թե-
րություններին, նշանակելիորեն բարձրացել ե կուսակցական ղե-
կավարների և պրոպագանդիստների պատասխանատվությունը
կոմունիստների քաղաքական դաստիարակության համար։ Սու-
վել ևս անհանդուրժելի յեն և վճռապես պետք ե վերացնել կու-
սակցական պրոպագանդի միջից կազմակերպական անհստակու-
թյունը, սխեմատիզմի և ֆորմալիզմի առկայությունը։ Վատ ե
և այս, վոր լավագույն պրոպագանդիստների փորձը ղեկաս բա-
գականաչափ չի հաշվառվում և թույլ ե ոգտագործվում։ Նրանց
աշխատանքը չի խրախուսվում ու չի ժողովրդականացվում։

Դպրոցների և խմբակների պարապմունքներին նախապատ-
րաստվելը առաջնակարգ կարենություն ունեցող հարց ե։ Պետք
ե որինակ վերցնել առաջավոր ձեռնարկություններից։ Որինակ,
«Շարիկոպողիանիկ» գործարանում, Կագանովիչի անվան կաշե-
գործարանում, ՑԱԳԻՒ-ում, «Տրյոխիպորկա»-յում առանձին որ ե
հատկացվում պարագաներին նախապատրաստումը տեղի յե ունենում պրոպագանդիստնե-
րի կամ կուսակցական կարինետի վարիչի ներկայությամբ։

Ընկ. Ա. Շահումյանը (Ռուկրախնայի Կ(Բ)Կ կենտրոնի կուսակցական
պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարչի) պատմում ե պրո-
պագանդիստական աշխատանքի առանձնահատկությունների մա-
սին Ռուկրախնայի պայմաններում, վորտեղ հարկ յեղափ հիմնավո-

ռապես ջախջախելու հականեղափոխական նացիոնալիստներին ու տրոցկիստներին, դեն շարտելու կուսակցությունից բավականին մեծ քանակությամբ անհարազատ և մեղ համար թշնամական տարրեր, այդ թվում նաև պրոպագանդիստական շրջանից։ Ընկ. Աշխաֆյանը, բերելով մի շարք որինակներ, խոսում է կոմունիստների գգոնուրյան կուսակցական պրոպագանդի գործում բարձրացնելու անհրաժեշտուրյան մասին։

Ընկ. Վուկանյանը (Կալինինյան մարզկոմ) ասում է, թե կուսակցական փաստաթղթերի ստուգումը ցույց տվեց, վոր շատ պրոպագանդիստներ չեն կարգում մարքսիզմ-լենինիզմի կլասիկների յերկերը բնագրերով։ Շրջկոմների քարտուղարները այս բանում նրանց չեն ոգնում և, առհասարակ, քիչ են զբաղվում կուսակցական պրոպագանդի հարցերով։ Մի շարք վայրերի պրոպագանդիստական աշխատանքի մասին Համկ(բ)կ կենտկոմի կայացրած վորոշումից հետո անդամ պրոպագանդիստներին և կուսակցիների վարչիներին հանում ելին աշխատանքից և ուղարկում զանազան կամպանիաների՝ յերկարածու ժամանակով առանց ղեկավարման թողնելով դպրոցներն ու խմբակները։

Ընկ. Սերգեյեվը (Դոնբաս) նշում է, թե Դոնբասում ստախանովյան շարժման լայն թափը առանձին խնդիրներ և դնում՝ ստախանվականներին լավագույն կերպով սպասարկելու իմաստով։ Մեզանում արդեն 10 հազար կոմունիստականովականներ կան։ Պրոպագանդը պետք է ոգնի ստախանովյան ռարժման հետագա զարգացմանը, պետք է ոգնի տեխնիկապես գոտեանդիված ստախանովականներին, վոր նրանք բարձրացնեն իրենց գաղտափարական-հաղաժամկան։

Ընկ. Սերգեյեվը պատմեց այն մասին, թե ինչպես խորի տարրերը փորձում են վարկաբեկել ստախանովյան շարժումը և թե ինչպես մարզկոմը կազմակերպեց 8 հազար պրոպագանդիստ բանվորների բնակարաններն ուղարկելու գործը, վորպեսզի բացատրեն ստախանովյան շարժման եյությունը, պատասխաննեն բանվորներին հուզող հարցերին, բացատրեն դասակարգային թշնամու գործակալների վոանձգությունների պրովոկացիոն բնույթը։

Ընկ. Կոնֆեր (Բելոռուսիայի կուսակցության կենտկոմ) ընդունում է, վոր պրոպագանդիստների կարգերի պատրաստումը, պրոպագանդիստներ ջոկելու գործի ղեկավարումը Բելոռուսիայում չա-

փականց անբավարար են դրված։ Պրոպագանդիստների կադրեր պատրաստելու դասընթացային միջոցառումների կազմակերպումը նույնպես անբավարար է դրված յեղել։ Համկ(բ)կ կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի կողմից աշխատանքը հետագությունուց հետո կուսակցական պրոպագանդի գործը լավացնելու մի շարք միջոցներ են ձեռք առնված։

Ընկ. Զելմալը (Համկ(բ)կ կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչների տեղակալ) իր յելույթում նշում է կուսակցական պրոպագանդը ղեկավարելու գործում յեղած կազմակերպական թուլությունը, մանավանդ գյուղում, և այս բանը պատկերավորում է մեծ քանակությամբ որինակներով այն մասին, թե ինչպես ե դրված կուսակցական պրոպագանդը առանձին շըջաններում (Բելինիչ, Պլեչչանիցի, Զերվեն-Բելոռուսիա, Խվորոստյանի շըջան—Վորօնեժի մարզ)։

Ընկ. Կաբուլավը (Ղազախստան) մատնանշում է, վոր կուսակցական պրոպագանդը մի շարք տարիների ընթացքում մեղանում յեղել ե ներկուսակցական աշխատանքի ամենից ավելի հետամընաց, բարձիթողի արված ճակատամասը։ Պրոպագանդի գրությունն այժմ ել չափազանց ծանր է։ Կուսակցական պրոպագանդի հարցն առանձնապես սուր ե դրված Ղազախստանի գյուղական վայրերում, վորտեղ կոմունիստները զիխավորապես միայնակներ են։ Այստեղ անհնարին ե քաղաքային տիպի խմբակներ կազմակերպել։ Այժմ այդ կոմունիստ-միայնակները ամիսը 3—4 անգամ հրավիրվում են՝ նրանց հետ միասին կուսակցության կանոնագրությունը, ծրագիրը և կուսակցության ու կառավարության կարեւորագույն վորոշումներն ուսումնասիրելու համար։ Քոչվորական և կիսաքոչվորական շըջաններում ստեղծվում են մշտական դպրոց-կոնֆերենցիաներ հանրակացարանով։ Պրոպագանդիստական կադրեր պատրաստելու համար անհրաժեշտ է յերեխերում ու մարզերում ստեղծել մօտական դպրոցներ Համկ(բ)կ կենտկոմին իից ստեղծվող՝ պրոպագանդիստների բարձրագույն դպրոցի որինակուլ։

Ընկ. Վանիլյեվը (Իվանովոյի մարզ) նշում է, վոր կուսակցական փաստաթղթերի ստուգման հետևանքով մի շարք շըջաններում կուսակցական կազմակերպություններն սկսում են լրջորեն զբաղվել կուսակցական պրոպագանդով։ Պրոպագանդիստներին ոգնելու համար, բացի այլ միջոցառումներից, անհրաժեշտ է լայ-

նորեն ոգտագործել կուսակցության մարզային կոմիտեներին կից ստեղծված՝ պրոպագանդիստների ու դասախոսների ակտիվը: Պրոպագանդիստական կազմեր ստեղծելու համար մենք անհրաժեշտ ենք համարում ստեղծել պրոպագանդիստների մարզային որինակելիք դպրոց, վորի համար արդեն ընտրված ե 150 մարդ:

Ընկ. Ռաբբիչեվը (Կուսահրատի վարիչը) խոսում է այն մասին, թե տեղերում ընկերներից գոմանք մինչև այժմ դեռ չեն հասկացել, վոր այժմ գրքերը վոչ թե բաշխվում են, այլ ազատ վաճառվում: Յուրաքանչյուր պրոպագանդիստի հիմնական այն գենքը, առանց վորի նա չի կարող աշխատել — Լենինի ու Ստալինի յերկերը, — Կուսահրատը լույս ե ընծայել մի քանակությամբ, վորն ապահովում ե բոլոր պահանջները: Ուստի և մարքսիզմ-լենինիզմի կյանիները պետք ե յեռանդուն առաջ շարժել դեպի կուսակցության անդամների մասսան: Ընդսմին՝ վոչ միայն պետք ե առաջ շարժել, այլ և պետք ե ղեկավարել անհատական ինքնակրթությունը:

Ընկ. Լիսինը (Կերովի յերկիր) հոգուտ այն բանի յե արտահայտվում, վորպեսզի կուսակցության սակավագործետ անդամների հետ պարապելը (կոմունիստների համար յեղած հանրակրթական դպրոցները) առանձնացվի կուստօնկոմատի սիստեմից:

Ընկ. Կենորինը (Համեկ(ը)) կենտկոմի կուսարոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչի տեղակալը) նշեց, թե տեղական շատ կազմակերպություններ, չսայած այն բանին, վոր շատ ժամանակ ե անցել պրոպագանդի զարգացման մասին կենտկոմի կայացրած հայտնի վորոշումների որից և կուսակցության Լենինգրադի քաղկոմի պլենումից՝ շարունակում են զբաղվել ընդհանուր բանաձևների «ստեղծագործությամբ», շարունակում են ղեկավարել «ընդհանրապես», իսկ գործնական, քրտնաշան կազմակերպչական աշխատանք չեն վարում:

Ի՞նչպես բարձրացնել գործը: Ամենից առաջ պետք ե լավացնել կտամակերպական աշխատանքը, պետք ե ուժեղացնել մեր թերությունների բոլցեկյան քննադատությունը, պետք ե կազմակերպել կենդանի հրահանգման և տեղերին ոգնություն ցույց տալու գործը: Արդեն այժմ վորոշ աշխուժացում կա: Կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժինը կենտկոմի առաջաւագանքը մի շարք հետազոտություններ անցկացրեց: Կենտկոմի աշ-

խատողներն առաջիկայում ել պետք ե մեկնեն տեղերը, յերեան հանեն աշխատանքի թույլ կողմերը, ոգնեն կուսակցմակերպություններին, վոր ուղղեն թերությունները:

Ընկ. Դեղիկովը (Համեկ(ը)) Մոսկվայի կոմիտեյի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վարիչը) ասում ե, վոր ընկեր Լ. Մ. Կագանովիչի և Խրուչեվի հաճախակի ցուցումների հիման վրա Մոսկվայի բոլցեկյան պրոպագանդիստական աշխատանքի գրվածքի գործում նշանակելի տեղաշարժերի յեն հասել: Պրոպագանդիստաների հետ աշխատելը և նրանց ոգնություն ցույց տալը Մոսկվայի կոմիտեյի աշխատանքում կենտրոնական տեղ են գրավում: Մոսկվայի կոմիտեն արգելեց շրջկոմներին, վոր առանց մարզկոմի գիտության տեղից-տեղ գցեն և լիաբեննեն հաստիքային պրոպագանդիստաներին: Ոգնելով գյուղին՝ մենք սիստեմատիկորեն այստեղ ենք ուղղում վորակյալ զեկուցողներ ու դասախոսներ. մենք կուսակտիվի հետակա ուսուցման 50 հենակայան ենք ստեղծել. վերակազմել ենք մի խորհուսդպրոց և նրա բազայով ստեղծել ենք պրոպագանդիստաների դպրոց: Ցերեկոյան կոմբուները յենթադրում ենք նույնպես վերածել պրոպագանդիստաների յերկայա դպրոցների:

Ընկ. Բրայգոն (Լենինյան ոայկոմի կուլտպրոպի վարչունին, Մոսկվա) ասում ե, վոր կուսփաստաթղթերի ստուգումն ոգնեց առանձնացնելու 160 նոր ընկերներ պրոպագանդիստական աշխատանքի համար և 200 հին պրոպագանդիստներ:

Ընկ. Բեղիքան (Անդրկովկասյան յերկրկոմ) մատնանշում ե, վոր ընկեր Բերիայի զեկուցման ուսումնասիրության կապակցությամբ նշանակելիորեն բարձրացավ կոմունիստաների ձգտումը ուսումնասիրելու կուսակցության պատմությունը: Վատ ե, վոր շրջկոմների քարտուղարները չեն զբաղվում կամ թե չե վատ են զբաղվում կուսակցական պրոպագանդով և մասավանդ դպրոցների կոմպլեկտավորմամբ: Այնունետև ընկ. Բեղիքան հաղորդում ե մի մեծ նվաճման մասին. գրեթե բոլոր դասագրքերը, VII կոնգրեսի նյութերը, այլև Լենինի վեցհատորյակը թարգմանված ու հրատարակված են Անդրկովկասի ազգությունների շատ լեզուներով:

Ընկ. Կաօրաձեն (Կուսակցության կենտկոմի պատասխանատու հրահանգիչ պրոպագանդի գծով) մի շարք փաստեր և բերում այն մասին, վոր կոմունիստաներին ուսուցմամբ ձեականորեն ընդ-

գրկելը և գպրոցներն ու խմբակներն իրապես հաճախողների քաշնակն իրար չեն բռնում: Մի շարք որինակներով նա ցույց է տալիք, թե կուսակցական դեկավար աշխատողները տեղերում կադմակերպական սև, քրտնաշան աշխատանք չեն կատարում, պրոպագանդիստներին ու խմբակների ունկնդիրներին չեն ոգնում, վոր ինչպես պետք է արիապետեն Մարտի-Ենգելսի-Լենինի-Ստվենի մեծ ուսմունքին:

Ընկ. Սլիվիցկին (Կույբիշեվը ք.) խորհրդակցությանը պատմեց կոմունիստ-միայնակների հետ կատարած աշխատանքի փորձի մասին գյուղում, վորտեղ նրանց համար ստեղծված են շրջանային և վնջային խմբակներ ու գպրոցներ:

Խորհրդակցությունը մեծ հետաքրքրությամբ լսեց ընկ. Խարթսոնվի (ԲԳԿԲ Քաղվարչության կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի վարիչը) հաղորդումը կարմիր բանակում կատարված պրոպագանդիստական աշխատանքի փորձի մասին:

Ընկ. Մարյին (Կուսակցության կենտրոնի կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժնի կազմերի սեկտորի վարիչը) մեծ քանակությամբ փաստերով ցույց է տալիս, թե կազմակերպական աշխատանքի թուլությունը ինչպես և անդրադառնում պրոպագանդիստական կադրերի ընտրանքի ու աճեցման վրա: Մի տարուց ավելի յե անցել Համկ(ը)կ կենտրոնի 1934 թ. սեպտեմբերի 19-ի վորոշումը կայացվելու մոմենտից, ըստ վորի պրոպագանդիստներին պետք է հաստատեն կուսակցական կոմիտեները, առայն գրեթե չկա վոչ մի յերկիր, վորտեղ բոլոր պրոպագանդիստները հաստատված լինելին շրջկոմների ու քաղկոմների բյուրոներում: Յերկրային և մարդային կոմիտեների կուսակցական պրոպագանդի և ագիտացիայի բաժիններն առաջմ: թույլ են ստուգում կենտրոնի վորոշման կատարումը: Պրոպագանդիստների կազմի հաշվառումը և ուսումնասիրումը կարգավորված չեն: Նշանակելի թվով պրոպագանդիստներ կուսակցական տույժեր ունեն: Դեպքեր են հայտնի, յերբ կուսակցական տեսակետից չստուգված մարդիկ վորպես պրոպագանդիստներ են աշխատում, իսկ միենույն ժամանակ կան ուղերջվեր, վորոնց պրոպագանդիստական աշխատանքի չեն գրավում:

Ընկ. Ռւզյուկովը (Սվերդլովի) խորհրդակցությանը պատմեց Սվերդլովի մարզկոմի ձեռք առած այն միջոցառումների մասին,

վոր վերաբերում են Սվերդլովսկի մարզի կուսակցական պրոպագանդի վիճակի մասին Համկ(ը)կ Կենտրոնի վորոշումը կատարելուն:

Ընկեր Կոտովը (Արխանգելսկ), Զօւօւյենովը (Աղրբեջան), Սիմյակինը (Հյուսիսային կովկասյան յերկրկոմ), Նիկոլյայիվը (Խարկով), Իգավալիսովը (Չելյաբինսկ), Գոշիշվիլին (Վրաստան), Դվարյացին (Ազով-Սևծովյան յերկիր), Կառուչովսկին (Ստալինգրադ), Կագանը (Արևմտյան մարզ), Արխյանը (Հայաստան), Սունգաւրովսն (Հաղորդակցության ճանապարհների ժողկոմատի Քաղվարչություն), Խօրաչկոն (Հյուսիսային յերկիր) իրենց յելույթներով լուսաբանեցին իրենց կազմակերպությունների պրոպագանդիստական աշխատանքի պրակտիկան:

Ընկ. Նիկոլյայիվի (Խարկով) առաջարկը—կուստողկոմատի վրա դնել կոմունիստների մեջ յեղած այբբենական սակավագրագիտությունը վերացնելու բոլոր հոգսերը—խորհրդակցությունում պաշտպանություն չգտավ և քննադատության յենթարկվեց ընկ. Ընկ. Սլիվիցկու, Արխյանի և ուրիշների յելույթներում: Ընկ. Դվարյաց կողմից Ազով-Սևծովյան յերկրկոմի աշխատանքի պրակտիկան պաշտպանելը, վորը (յերկրկոմը) ամբողջությամբ հաստատել և խմբակների ամբողջ ցանցը յերկրի բոլոր շրջանների վերաբերմամբ, մի շարք յելույթներում քննադատության յենթարկվեց իրեւ կուսակցական պրոպագանդի ղեկավարումը բյուրոկրատացներու փորձ:

Ընկ. Սուլյարովը (Համկ(ը)կ) կենտրոնի պատասխանատու հրահանգիչ պրոպագանդի գծով) Ազով-Սևծովյան յերկրի կուշչեվկայի շրջանի որինակով ցույց է տալիս, թե ինչ բանի յե հացնում ձևավաշտությունը կուսակցական պրոպագանդը ղեկավարելու գործում: կուսակցական դպրոցների և խմբակների ամբողջ ցանցը 127 շրջանի վերաբերմամբ յերկրկոմի բյուրուն մեկեն հաստատել ե մի նիստում: Ստուգումը ցույց տվեց, վոր յերկրկոմի հաստատած շատ դպրոցներ ու խմբակներ միայն թղթի վրա գոյություն ունեն: Կուշչեվկայի շրջանի համար յերկրկոմը հաստատած է յեղել 34 խմբակ, իսկ իրականում շրջանում կա ընդամենը 16 խմբակ:

Ընկ. Կարպովը (Կիեվի մարզ) գտնում է, վոր պրոպագանդիստների տարբեր խմբերին պետք է դիմերենցված կերպով մուտենալ: Բանվոր-պրոպագանդիստակների համար Կիեվի մարզում կազմակերպվում են մշտապես գործող դպրոց-դասընթացներ: Մնա-

ցած պրոպագանդիստների համար՝ սովորական պրոպագանդիստներ։
Հնկ. Պարտիզուլը (Թորկու յերկիր) իր հաղորդման մեջ ստու-
րին ազիտացիայի դրվագքի մասին հաղորդում ե, վոր փոքր բա-
ցառությամբ՝ ազիտացուների ընտրանքը պատահականութեն ե կատար-
վում։ Զրուցարար-ընթերցիչների խումբը բազկացած ե առավե-
լապես կուսակցության անդամության թեկնածուներից ու կոմ-
յերիտականներից։ Քաղաքական ազիտացիայի գեկավարումը կար-
գավորված չէ։ Հաճախ դեկավարումը սահմանափակվում ե նրա-
նով, վոր կուսկոմի քարտուղարը կանչում ե ազիտատորին և
5—10 րոպեյի ընթացքում առում ե, թե այս-ինչ հարցը պետք ե «ձեռաց ստուգել»։

Վատ ե նաև բանվորների պահանջներն ու տրամադրություն-
ներն ուսումնասիրելու գործի վիճակը։ Հաճախ բանվորների պա-
հանջների մասին կուսակցական կերպություններն իմանում են միայն
այն ժամանակ, յերբ այս կամ այն ճակատամասում ճեղքվածք ե
պատահում։

Ազիտկուեկտիվներ ստեղծելու և նրանց հետ աշխատելու գործին
մենք նոր ենք միայն ձեռնամուխ յեղել։ Բալախնայում մենք
ուսումնական անցկացնել ազիտատորների հնդորյակներ, այս հըն-
դորյակներին ազիտատորների հետ վորոշ ծրագրով մշակում ենք
ակտուալ հարցեր։

* * *

Խորհրդակցության վերջում մեծ ճառով հանդես յեկալ ընկ.
Սեցկին։

— Մեր խորհրդակցությունում ունեցած իր յելույթում Համ.
Կ(բ)կ կենտկոմի քարտուղար ընկ. Անդրեյեվը հիմնական ցուցում-
ներ տվեց այն մասին, թե մենք ինչպես պետք ե աշխատենք։ Մեզ
համար չափազանց արժեքավոր ե ընկ. Անդրեյեվի ցուցումը մեր
անելիքների մասին ստախանովյան շարժման պրոպագանդի և
ստախանովականների քաղաքական դաստիարակության գործում։

Ներկա խորհրդակցությունը, — շարունակում է ընկ. Ստեցկին, —
անկասկած, խաղալու յե իր գերը փորձի փոխանակման և կուսակ-
ցական ամբողջ պրոպագանդի բարելավման գործում։

Հնկ. Ստեցկին մանրամասնորեն վերլուծեց առանձին ընկեր-
ների յելույթները և տվեց խորհրդակցության աշխատանքների

հանրագումարը։ Նա մի անգամ ել ընդգծեց կազմակերպչական
աշխատանքի նշանակությունը կուսակցական պրոպագանդի մար-
տական ինդիքները լուծելիս։

Մեր դպրոցների և խմբակների աշխատանքի բոլշևիկյան ճիշտ
բովանդակությունն ապահովելու համար պետք ե կազմակերպել
պրոպագանդիստական կազմերի հաշվառումը, ընտրանքը և ու-
սումնասիրումը։ Հնկ. Ստալինը մեր բաժնի աշխատանքի պլանը
քննելիս, — պլան, վորի մեջ պրոպագանդիստների ընտրանքի ու
հաշվառման հարցը վերջին տեղումն եր դրված, — ասաց. «Այ այս
հարցը պետք ե առաջին տեղը դնել։ Ամենից առաջ առաջանքը
պետք ե սկսել նրանից, քե ով ե ձեզ մոտ գործը վարողը»։

Հնկ. Ստեցկին առանձնապես մատնանշեց բոլշևիկյան ինք-
նաքննադատություն ծավալելու անհրաժեշտությունը, վորպեսզի
ավելի արագ յերեան բերենք և վերացնենք կուսակցական պրո-
պագանդի դրվածքի թերությունները։ Կոմունիստների դաստիա-
րակության դրվածքի մեջ գեռ շատ կոնսերվատիզմ կա։ Պետք ե
վերջ տալ ընդհանուր «Փիլիսոփայելուն» և հավաստելուն, իսկ
գործնականապես կազմակերպել խմբակների և դպրոցների կոմ-
պլեկտավորումը, մտնել ձեռնարկությունները և կոլտնտեսություննե-
րը, այնտեղ ուսումնասիրել կուսակցական պրոպագանդի դրվածքը
և այն դեկավարել ըստ եյության։ Պետք ե ծրագրեդականացնել պրո-
պագանիստական ածխատանիքի լավագույն սրինակները։

Քաղաքական պրոպագանդը սուր պետք ե լինի։ Անհրաժեշտ
ե բաց անել բոլշևիկյան կուսակցության պատմության ազճատման
բոլոր տեսակի փորձերը և նրանց տալ վճռական հականարկած։
Հնկեր Ստեցկին խորհրդակցության մասնակիցներին կոչ արեց
սովորելու և ընդորինակելու կուսակցական դեկավար որդանների
բաժինների աշխատանքի մեթոդները, վորպեսզի ոգտագործած լի-
նենք կուսակցական կազմակերպական այն հարցում փորձը, վոր
կուտակվել և տամնյակ տարիների ընթացքում։

Յերկու հանձնաժողով առանձնացվեց՝ յեղած առաջարկների
և խորհրդակցությունում քննարկված հարցերի վերջնական մշակ-
ման համար։

«Պարտիյնոյե ստրոխելստվո» Ժունիա, 1935 թ. № 22-23:

ՖԱՂԱՔԱԿԱՆ ԱԳԻՏԱՅԻԱՅԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ՝ ՁԵՐԺԻՆ- ՍԿՈՒ ԱՆՎԱՆ ԲԱԼԱԽՆԱՅԻ ՑԵԼՅՈՒԼՈՁԱ-ԹՂԹԵՂԵՆԻ ԿՈՄԲԻՆԱՏՈՒՄ

(Գորկու յերկիր)

Համկ(բ)կ կենտկոմը կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի կատարած ստուգման հիման վրա լսեց հաղորդումը քաղաքական ազիտացիայի վիճակի մասին՝ Ձերժինսկու անվան Բալախնայի ցելյուլոզա-թղթեղենի կոմբինատում:

Իր վորոշման մեջ Համկ(բ)կ կենտկոմը հավաստում ե, վոր Ձերժինսկու անվան Բալախնայի ցելյուլոզա-թղթեղենի կոմբինատում ամենորյա քաղաքական բացատրական աշխատանքը ցեխում, բրիգադում, հերթափոխում (թերթերի խմբական ընթերցումը, քաղղույցները, բանվորներին հետաքրքրող հարցերի պատասխանները) անբավար ե դրված, վորի հետեւանքով բանվորների նշանակելի մասը բացատրություններ չի ստանում կուսակցության ու կառավարության անդամ կարևորագույն վորոշումների և միջազգային անցքերի մասին (գների իջնման և քարտային սիստեմի վերացման վերաբերյալ վորոշումը, սպառկոռպերացիայի վերաբերյալ վորոշումը, կոմինտերնի VII կոնդրեսի վորոշումները, իտալո-հարեշական պատերազմը):

Համկ(բ)կ կենտկոմը սխալ ե համարում Բալախնայի թղթեղենի կոմբինատի կուսակցական կոմիտեյի այն պրակտիկան, յերբ բացատրական ամբողջ աշխատանքը վերածված ե ընդհանուր դեկուցումների՝ քաղաքական այս կամ այն կամանիայի կապակցությամբ, վորի հետեւանքով բանվորների առանձին խմբերին հետաքրքրող հարցերը հաշվի չեն առնվում ու մնում են չպարզաբանված:

Այն ժամանակ, յերբ կուսկոմը վորոշումներ ե կայացնում բանվորներին քաղաքական ինֆորմացիոն հարյուր տոկոսով ընդդեմ մասին, խմբական ազիտատորների ընտրանքի ու աշխատանքի մասին, իրականում կոմբինատի բանվորներին ազիտացիոն-բացատրական աշխատանքով ընդգրկելը ձևական բնույթ ե կրում. ծայր աստիճանի թույլ ե դրված բացատրական աշխատանքը յերիտասարդության, կանանց մեջ, այլ ազգություններին պատկանող այն բանվորների մեջ, վորոնք չգիտեն ուսւերին լեզուն. կուսակցական կոմիտեն ըստ եյության չի կազմակերպում այս աշխատանքը և չի հետաքրքրվում նրա բովանդակությամբ:

Համկ(բ)կ կենտկոմը անթույլատրելի համարեց այն, վոր կուսակցական կոմիտեն և նրա քարտուղար ընկ. Գորչենկովը չեն դեկավարում ազիտատորների, ընթերցիչ-զրուցարարների աշխատանքը, նրանց չեն հրահանգում, նրանց անհրաժեշտ ոգնությունցույց չեն տալիս և անզամ չգիտեն ազիտատորների ու ընթերցիչ-զրուցարարների կազմը, չեն զբաղվում նրանց ընտրանքով ու հաստատումով: Ազիտատորներ և ընթերցիչներ առանձնացնելը մի շարք ցեխերի մեջ բըրգագներումն ե կատարվում: Սրա հետեւանքով՝ ազիտատորների ու զրուցարարների մեջ սակավագրագետների, իսկ առանձինգեղքերում նաև անհարազատ մարդկանց մեծ տոկոս կա:

Համկ(բ)կ կենտկոմը հավաստում ե, վոր Բալախնայի կոմիտեն կուսակցական զոմիտեն բանվորական մասսաների դեպի կուսակցությունն ու խորհրդային իշխանությունը տածած անսահման վստահության փաստից գործնական սիամ յեղրակացություններ ե արել՝ թուլացնելով քաղաքական մասսայական ամենորյա բացատրական աշխատանքը և յերեւան ե ըերել այն նշանակության ու գերի անհամակացում, ինչ ունեն ստորին ագիտատորներն ու զրուցարար-ընթերցիչները, վորոնք ամեն որ շփում են մասսաների հետ և կոչված են բացատրելու կուսակցության քաղաքականությունը և բանվորների մեջ առաջացող հարցերը:

Համկ(բ)կ կենտկոմը վորոշեց.

1. Պարտավորեցնել կոմիտենատի կուսակցական կոմիտեյին ազիտատորներ ու զրուցարար-ընթերցիչներ ընտրել լավագույն կուսակցականներից, կոմիտեիտականներից, համակրողներից, վորոնք քաղաքականապես գրագետ են, վորոնք կարողանում են

հասարակ ու պարզ լեզվով բացատրել մասսաներին կուսակցության քաղաքականությունը և բանվորներին հետաքրքրող հարցերը, արթնացնել նրանց ստեղծագործ յեռանդն ու ձեռներեցությունը:

Կոմբինատի կուսկոմին կենտկոմն առաջարկեց ագիտատորների ու ընթերցիչ-զրուցարարների թեկնածությունները քննարկել ու հաստատել կուսկոմում:

2. Խմբական ագիտատորներին, զրուցարար-ընթերցիչներին միավորել վրապես մի կոլեկտիվ առընթեր կուսակցական կոմիտեյին՝ այդ կոլեկտիվը գլխավորելով կուսկոմի քարտուղարով։ Սահմանել ագիտատորների, զրուցարար-ընթերցիչների կոլեկտիվի կանոնավոր պարապմունքներ՝ դեկուցումների, զրուցների և ընթերցումների նրանց նախապատրաստելու համար (ըստ նրանց աշխատանքի բովանդակության, մեթոդների ու ձեռքի)։ Առանձին ուշադրություն դարձնել այս կադրերի հանրակրթական պատրաստման վրա (քարտեզը, Խորհրդային Միության և կազմիտալիստական առանձին յերկրների տնտեսությունը զիտենալը) և ապահովել կուսկաբինետի միջոցով նրանց կանոնավոր կերպով անհրաժեշտ պիտույքներ մատակարարելը (թերթեր, ժուռնալներ, դիագրամներ), այլև նրանց համար կազմակերպել անհատական ու խմբական խորհրդատվություններ կուսակցական կարինետներին կից։

3. Կուսկոմի քարտուղարի պարտականությունը համարել, հենվելով ագիտատորների կոլեկտիվի վրա՝ ուսումնասիրել բանվորներին ու բանվորունիներին հետաքրքրող հարցերը, ձգտել այդ հարցերին տալ լրիվ սպառիչ պատասխան՝ զեկուցումների, զրուցների միջոցով, գործարանային թերթում և պատի թերթերում այդ հարցերը լուսաբանելու միջոցով և սիստեմատիկորեն հրահանգել ագիտատորներին կուսկազմակերպությունների առջև ծառացած կարեռագույն բոլոր հարցերի վերաբերմամբ։

4. Պարտավորեցնել կոմբինատի կուսկոմիտեյին իր ամենորյա քաղաքական-բացատրական աշխատանքում ոգտագործել ճաշի ընդմիջումների ազատ ժամանակը, հերթափոխերի միջև ընկած ընդմիջումները (սպասարկումից չհանելով նաև գիշերային հերթափոխերը), սովորություն դարձնել ընթերցումներն ու զրուցները բանվորների հետ հանրակացարաններում, բանվորների բնակարաններում բանվորների իրենց ցանկությամբ։ Առանձին

ուշադրություն դարձնել քաղորերը ձեռնարկություններում խնամքով նախապատրաստելու և անցկացնելու վրա։

Համ Կ(թ)կ կենտկոմը կուսկոմի ուշադրությունը դարձնում է այն բանի վրա, վոր քաղաքական գրականության և թերթերի հետ միասին ընթերցումների և զրուցների համար անհրաժեշտ ոգտագործել նաև գեղարվեստական գրականությունը, վորը մեծ նշանակություն ունի բանվորների ու բանվորունիների կուլտուրական և քաղաքական աճման համար։

Համ Կ(թ)կ կենտկոմը Բալախնայի թղթեղենի կոմբինատի կուսակցական կոմիտեյին առաջարկում ե ագիտացիոն-բացատրական աշխատանքը կենտրոնացնել ամեն մի բանվորուու այն նշանակությունը բացատրելու վրա, վոր ունի արդյունաբերության ու տրանսպորտի բանվոր ու բանվորունիստախանովականների Համամիութենական առաջին խորհրդակցությունը, մանավանդ ընկեր Ստալինի ճառը՝ լայնորեն տարածելով ստախանովականների փորձը Բալախնայի կոմբինատում, ոգնելով ստախանովականներին և ստախանովյան շարժման մեջ ներքաշելով կոմբինատից նորանոր բանվորներ ու բանվորունիեր։

5. Համ Կ(թ)կ կենտկոմը պարտավորեցնում է Համ Կ(թ)կ յերկրկոմներին, մարզկոմներին և շրջկոմներին սիստեմատիկորեն ստուգել ստորին քաղաքական ագիտացիայի վիճակը ձեռնարկություններում ու կրանտեսություններում, ցույց տալ իրժամանակյա հրահանգում և ոգնություն այս աշխատանքը կազմակերպելու գրվածքում՝ այս հարցերը դնելով բյուրոնների ու պլենումների քննարկմանը։

«Պարախյոյե ստրոխելստվո» ժուռնալ 1935 թ. № 22—23:

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻՆ ԿԻՑ՝ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՅ ՎԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համկ(Բ)Կ Կենտրոնական կոմիտեն վորոշում ընդունեց կազմակերպելու Համկ(Բ)Կ Կենտկոմին կից՝ պրոպագանդիստների բարձրագույն դպրոց կուսակցական պրոպագանդի բնագավառի աշխատողներ պատրաստելու համար (քաղկոմների, մարզկոմների, յերկըրկոմների, ազգային կոմկումների կենտկոմների կուսակցական պրոպագանդի ղեկավարներ, կուսակցական կոմիտեների հրահանգիչներ պրոպագանդի գծով): Դպրոցում ուսուցման ժամանակամիջոցը սահմանված է 1 տարի և 3 ամիս: Ընդունելության կոնտինգենտը՝ 300 մարդ: Դպրոցն ընդունվելու յեն Համկ(Բ)Կ 32 տարեկանից վոչ բարձր տարիք ունեցող անդամները, վորոնք ունեն հանրակրթական պատրաստություն վոչ-լրիվ միջնակարգ դպրոցի ծավալով և հանրաթեորիական պատրաստություն՝ զրականության հաստատված ցուցակի ծավալով, վորոնք ղեկավար կուսակցական ու պրոպագանդիստական աշխատանքի փորձ ունեն: Պրոպագանդիստների բարձրագույն դպրոցն ընդունվողների համար սահմանված է կուսակցական յոթնամյա ստաժ: 3 տարուց վոչ պակաս կոմյերիտական (ղեկավար) ակտիվ աշխատանք լինելու դեպքում կուսատաժի պահանջները մի տարով կարող են իջեցվել:

Հաստատված են Համկ(Բ)Կ Կենտկոմին կից՝ պրոպագանդիստների բարձրագույն դպրոցի ուսման պլանը, ընդունելության պայմանները և տեղերի բաշխումը: Խթամանակյա հավաքագրման բաշխման անմիջական պատասխանատվությունը դրված է մարզկոմների, յերկըրկոմների և ազգային կոմկումների կենտկոմների յերկըրդ քարտուղարների վրա: Համկ(Բ)Կ Կենտկոմի հաստատմանը մացվելիք թեկնածուների վերջնական ընտրանքը

հանձնարարված է Համկ(Բ)Կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնին:

Համկ(Բ)Կ Կենտկոմին կից՝ պրոպագանդիստների բարձրագույն դպրոցին ուսումնական պարագաների ունկնդիրների հանրակացարանների համար տրված են Սվերդլովսկի անվան Կոմունիստական բարձրագույն գյուղատնտեսական համալսարանի շենքերն ու սարքավորումները: Համկ(Բ)Կ Կենտկոմին կից՝ պրոպագանդիստների բարձրագույն դպրոցի դիրեկտոր և հաստատված Վ. Ֆ. Ռեվարովը, ամբիոնների վարիչները՝ ընկ. ընկ. Ստեցկին, Կոորդինը, Զեյմալը, Գորոխովը, Մինցը: Դպրոցի անմիջական ղեկավարումը դրված է Համկ(Բ)Կ Կենտկոմի կուսակցական պրոպագանդի և ազիտացիայի բաժնի վրա: Համկ(Բ)Կ Կենտկոմին կից՝ պրոպագանդիստների բարձրագույն դպրոցում պարագմունքները կակավեն 1936 թվականի հունվարին 15-ին:

21— XI 35 թ.

«ՊՐԱՎԴԱ», 22 նոյեմբերի 1935 թ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

| | |
|--|------|
| Մոտակա ժամանակվա պրոպագանդիստական աշխատանքի մասին: | Համ. |
| Կ(բ)կ Կենտրոնական Կոմիտեյի վարոշումը | 3 |
| Կուսակցական պրոպագանդի դրության մասին Սվերդլովսկի մարզում | 7 |
| Ա. Ստեցիկի—Պրոպագանդիստաների և ազիտատորների մասին | 10 |
| Ա. Ստեցիկի—Կուլտպրոպաների վերակազմությունը և կուսակցական պրո- պագանդի ու ազիտացիայի բաժինների խնդիրները | 20 |
| Ա. Ստեցիկի—Ստալինի ճառը և կուսակցական պրոպագանդի խնդիրները | 33 |
| Ագիտացիան մեծ արվեստ և | 54 |
| Հեղափոխական թեորիան բոլշևիզմի վորին և | 58 |
| Կոմունիզմի պրոպագանդիստները | 63 |
| Կուսակցական աշխատողի մտահորիզոնի մասին | 68 |
| Կուսակցական պրոպագանդը | 73 |
| Բոլշևիզմի կենդանի խոսքը | 78 |
| Համկ(բ)կ Կենտկոմում | |
| Մարզկոմների, յերկրկոմների և ազգկոմիտունների կենտկոմների կուսակ- ցական պրոպագանդի ու ազիտացիայի բաժինների վարիչների խորհրդակցությունը 1935 թ. դեկտեմբերի 4-7 | 83 |
| I | |
| II | |
| Քաղաքական ագիտացիայի վիճակի մասին Զերժինսկու անվան Բալախ- նայի ցելյուզա-թղթեղենի կոմբինատում (Պորկու յերկիր) | 104 |
| Համկ(բ)կ Կենտկօմին կից՝ պրոպագանդիստաների բարձրագույն դպրոց կազմակերպելու մասին | 108 |

Պատ. իմբ. Ա. Կիրակոսյան, թարգմ. Ա. Համբարձումյան—եջ 1—62,
Պ. Աբելյան—եջ 63—109, Սրբագրիչ Տ. Մուրադյան, տեխն. իմբ. Տ. Խաչվանքյան

Գլամիլիտի լիազոր № 1059, հրատ. № 363, Պատկեր № 116,

Ավելաց 2500, ինդեքս՝ Բ. Կ
II-84

Հանձնված և արտադրության 22/III 1936 թ.
ստորագրված և տպագրության 28/V 1936 թ.

Գիրք 1 հ.

Հայկական տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 27

ՀՀ Ազգային գրադարան



NL0187141

1 ИЮН 1936

417

ФЕДЕРАЦИЯ



О ПАРТИЙНОЙ ПРОПАГАНДЕ
И АГИТАЦИИ

Армпартиздат, Эривань